«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԱՐՎԵՍՏԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №1

«20» օգոստոսի 2025թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Աննա Աբգարյան (մ/մ նախագահ)
2. Ռոբերտ Արզումանյան
3. Թամարա Հովհաննիսյան
4. Սոնա Միրզոյան
5. Արտուր Հովսեփյան
6. Լուսինե Գրիգորյան

**Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:**

## Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
2. 2025-2026 ուսումնական տարվա արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահի ընտրություն և կազմի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
3. 2024-2025 ուսումնական տարվա կատարած աշխատանքների ամփոփում և նոր ուսումնական տարվա անելիքներն ու խնդիրները:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
4. 1-ին, 4-րդ և 9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանման քննարկում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
6. Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի, օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
7. Նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
8. Ըստ նոր ՀՊՉ-ների 1-9-րդ դասարաններում բնութագրիչների գնահատման չափանիշների հաստատում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
9. Երկարօրյա խմբերում աշակերտների ընդգրկվածություն:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
10. 2024-2025 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
11. Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման նախնական քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
12. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

*Լսեցին 1.* Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման 1-ին նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* 2025-2026 ուսումնական տարվա արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահի ընտրության և կազմի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը առաջարկեց փոփոխություններ չկատարել և շարունակել վստահել Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահի պատասխանատու պաշտոնը Աննա Աբգարյանին: Նշվեց, որ Աննա Աբգարյանը տարիների ընթացքում իր մասնագիտական փորձառությամբ, կազմակերպչական հմտություններով և արդյունավետ գործունեությամբ արժանացել է գործընկերների բարձր գնահատականին:

Միևնույն ժամանակ զեկուցողը պարզաբանեց, որ մեթոդմիավորման կազմում ընդգրկված են «Ֆիզկուլտուրա», «Նախնական զինվորական պատրաստություն», «Կերպարվեստ», «Երաժշտություն» և «Ազգային երգ ու պար» առարկաները դասավանդող մանկավարժները:

Հատուկ ուշադրությամբ նշվեց նաև, որ «Ազգային երգ ու պար» առարկայի ուսուցչուհի Լուսինե Գրիգորյանը, ով ժամանակավորապես բացակայել էր երեխայի խնամքի արձակուրդի պատճառով, վերադարձել է աշխատանքի և այսուհետ ևս ընդգրկվում է մեթոդմիավորման կազմում՝ իր մասնագիտական ներդրումն ապահովելու համար՝ որպես «Արվեստ» առարկայի ուսուցիչ:

*Արտահայտվեցին՝* Ռ. Արզումանյանը, Թ. Հովհաննիսյանը:

Արտահայտվողները միաձայն առաջարկեցին անփոփոխ թողնել արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահի պաշտոնը և 2025-2026 ուսումնական տարվա համար կրկին առաջադրել Աննա Աբգարյանի թեկնածությունը: Նրանք ընդգծեցին, որ վերջինս նախորդ ուսումնական տարում իրականացրել է արդյունավետ և համակարգված աշխատանք, նպաստել մեթոդմիավորման գործուն գործունեությանը և գործընկերների միջև համագործակցության ամրապնդմանը:

Բացի այդ, արտահայտվողները կարևորեցին «Արվեստ» առարկայի համապարփակ և ինտեգրատիվ նշանակությունը կրթական գործընթացում՝ շեշտելով դրա դերը սովորողների էսթետիկ դաստիարակության, ազգային ինքնության պահպանման և ստեղծագործական ունակությունների զարգացման գործում:

*Որոշեցին՝* Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահ ընտրել Աննա Աբգարյանին և հաստատել մեթոդմիավորման նոր կազմը՝ ընդգրկելով «Ֆիզկուլտուրա», «ՆԶՊ», «Կերպարվեստ», «Երաժշտություն», «Արվեստ» առարկաները դասավանդող ուսուցիչներին:

*Լսեցին 3.* 2024-2025 ուսումնական տարվա կատարած աշխատանքների ամփոփման և նոր ուսումնական տարվա անելիքների ու խնդիրների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը մանրամասն անդրադարձավ 2024-2025 ուսումնական տարում մեթոդմիավորման կողմից իրականացված աշխատանքներին՝ ընդգծելով դրանց կարևորությունը և ունեցած ազդեցությունը ուսումնական գործընթացի որակի բարձրացման վրա։ Նա նշեց, որ անցնող ուսումնական տարին առանձնացել է նորամուծություններով, ստեղծագործական մոտեցումներով և ժամանակակից մեթոդների կիրառմամբ։

Զեկուցողի խոսքով՝ մեթոդմիավորման անդամների կողմից անցկացվել է արդյունավետ քննարկում, որի ընթացքում վերլուծվել են տարվա ընթացքում կատարված աշխատանքները, առանձնացվել են ձեռքբերումները և դրական արդյունքները։ Միևնույն ժամանակ քննության են ենթարկվել առաջացած դժվարություններն ու բացթողումները՝ նպատակ ունենալով գտնել դրանց արդյունավետ լուծման ուղիներ։

Այս քննարկումը դարձավ հարթակ համատեղ գաղափարների և փորձի փոխանակման համար՝ հնարավորություն ընձեռելով միասին մտածելու, թե ինչպես առավել արդյունավետ կազմակերպել առաջիկա ուսումնական տարվա աշխատանքները։

Զեկուցողը նաև ներկայացրեց նոր ուսումնական տարվա անելիքները՝ առանձնացնելով սպասվող փոփոխությունները և դրանց իրականացման հնարավոր մեխանիզմները։ Նա կարևորեց համագործակցային մոտեցումը՝ ընդգծելով, որ համատեղ ջանքերի շնորհիվ հնարավոր կլինի ապահովել ծրագրերի հաջող իրականացում, բարձրացնել կրթական գործընթացի արդյունավետությունը և շարունակաբար կատարելագործել այն։

***Արտահայտվեցին՝*** Ա. Հովսեփյանը, Ս. Միրզոյանը։

Արտահայտվողները, հիմք ընդունելով Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահի ներկայացրած հաշվետվությունը, ինչպես նաև 2024-2025 ուսումնական տարում իրականացված բազմաբովանդակ և նպատակային աշխատանքները, առաջարկեցին մեթոդմիավորման գործունեությունը գնահատել «լավ»։ Նրանց խոսքում ընդգծվեց, որ տարվա ընթացքում կազմակերպված նախաձեռնություններն ու միջոցառումները զգալիորեն նպաստել են ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, սովորողների ակտիվ ներգրավմանը և ուսումնամոտիվացիայի ամրապնդմանը։

Միևնույն ժամանակ արձանագրվեցին որոշ բացթողումներ և դժվարություններ, որոնք, ըստ արտահայտվողների, չպետք է դիտարկվեն որպես բացասական գնահատական, այլ պետք է ծառայեն որպես արժեքավոր փորձառություն՝ հետագա գործունեության բարելավման և կատարելագործման համար։

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման 2024-2025 ուսումնական տարվա կատարողականը։

***Լսեցին 4.*** 1-ին, 4-րդ և 9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի քննարկում։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ 2025-2026 ուսումնական տարվանից նոր ՀՊՉ-ների հիման վրա ուսուցումը կիրականացվի նաև 1-ին, 4-րդ և 9-րդ դասարաններում։ Այս կապակցությամբ նա կարևորեց, որ մինչև ուսումնական գործընթացի մեկնարկը անհրաժեշտ է կազմակերպել համապարփակ քննարկումներ՝ վեր հանելու առաջացած հարցերը, ուսումնասիրելու երաշխավորված դասագրքերն ու ծրագրերը և նախօրոք պատրաստվելու հնարավոր դժվարություններին։

Նշվեց, որ նման մոտեցումը թույլ կտա ապահովել դասընթացների կազմակերպված և արդյունավետ իրականացում, ինչպես նաև խուսափել հետագա խնդիրներից։

*Արտահայտվեցին՝* Ա. Աբգարյանը, Թ. Հովհաննիսյանը։

Արտահայտվողները կարևորեցին նախորդ ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքներն ու դրանց ամփոփման արդյունքները՝ կապված 1-ին, 4-րդ և 9-րդ դասարաններում նոր ՀՊՉ-ների ներդրման և իրականացման գործընթացի հետ։ Նրանց կարծիքով՝ ստացված փորձը կարևոր է ոչ միայն ուսումնական գործընթացի կազմակերպման, այլև առաջիկա ուսումնական տարվա պլանավորման համար։

Թամարա Հովհաննիսյանը հավելեց, որ հատկապես անհրաժեշտ է կուտակված փորձառությունը կիրառել գնահատման գործընթացում՝ ապահովելու համար դրա ճշգրտությունը, արդարացիությունն ու արդյունավետությունը։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 1-ին, 4-րդ և 9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման և նոր դասագրքերի հետ կապված հարցերի մասին քննարկման արդյունքները։

*Լսեցին 5.* 2025-2026 ուսումնական տարվա արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման ժամաբաժանման քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը նշեց, որ 2024-2025 ուսումնական տարվա վերջին նիստի ընթացքում ներկայացվել և քննարկվել է Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների նախնական ժամաբաժանումը։ Նա կարևորեց այս գործընթացը՝ ընդգծելով, որ ժամաբաժանման ճիշտ ու հավասարակշռված բաշխումը հանդիսանում է արդյունավետ ուսումնական գործընթացի կազմակերպման կարևոր նախապայման։ Քննարկման ընթացքում ներկայացվել և վերլուծվել են առկա առաջարկները, լսվել են մեթոդմիավորման անդամների կարծիքները, և ամփոփվել են հիմնական դիտարկումները՝ հետագա աշխատանքներում հնարավոր փոփոխություններ կատարելու նպատակով։

Զեկուցողն առաջարկեց 8-րդ և 9-րդ դասարաններում «Կերպարվեստ» և «Երաժշտություն» առարկաները փոխարինել «Արվեստ» ինտեգրված առարկայով, որի ուսուցումը հնարավորություն է տալիս աշակերտներին համակողմանիորեն ուսումնասիրելու ոլորտը և այն ընկալելու որպես միասնական կրթական համակարգ։ Այս առարկայի դասաժամերը նա առաջարկեց տրամադրել «Ազգային երգ ու պար» առարկայի ուսուցչուհի Լուսինե Գրիգորյանին, որը վերադարձել է երեխայի խնամքի արձակուրդից և ունի անհրաժեշտ մասնագիտական պատրաստվածություն։

Զեկուցողը հավելեց, որ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված 2025-2026 ուսումնական տարվա հանրակրթական դպրոցների 1-11-րդ դասարաններում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղեցույցի, 7-9-րդ դասարաններում «Արվեստ և արհեստ» բնագավառը կարող է ներկայացվել ինչպես առանձին («Կերպարվեստ», «Երաժշտություն»), այնպես էլ ինտեգրված («Արվեստ») առարկաների տեսքով, կամ հաստատության ընտրած այլ առարկայով՝ պայմանով, որ դրա ծրագիրը հաստատված լինի նախարարության կողմից։ Սահմանվում է նաև, որ 7-9-րդ դասարաններում «Կերպարվեստ» և «Երաժշտություն» առարկաներին հատկացված ժամաքանակը հնարավոր է տրամադրել «Արվեստ» ինտեգրված առարկային՝ առնվազն շաբաթական մեկ դասաժամի չափով։

Զեկուցողը հղում կատարեց ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի պարզաբանմանը, ըստ որի «Արվեստ» առարկան կարող են դասավանդել «Կերպարվեստ» կամ «Երաժշտություն» առարկաների ուսուցիչները, ինչպես նաև այն ուսուցիչները, ովքեր անցել են արվեստի որևէ ուղղությամբ վերապատրաստում։ Այս հիմքով նա եզրափակեց, որ առարկայի

ժամաքանակը հնարավոր է տրամադրել Լուսինե Գրիգորյանին՝ հաշվի առնելով նրա մասնագիտական պատրաստվածությունը, բազմաթիվ վերապատրաստումներին մասնակցելու փորձը և այն հանգամանքը, որ «Արվեստ» առարկան դասվում է «Արվեստ և արհեստ» բնագավառի մեջ։

*Արտահայտվեցին՝* Ա.Առստամյանը, Ռ. Արզումանյանը:

Արաքսյա Առստամյանը մանրամասն ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնական պլանը, մանրամասն ներկայացրեց առարկայացանկը, շաբաթական ժամերի առավելագույն քանակը։ Արաքսյա Առստամյանը նաև խոսեց դպրոցական և անհատական (ընտրովի) բաղադրիչների տրամադրման մասին, առաջարկեց դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 1-ին դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Կերպարվեստ» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
- 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 2 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
- 3-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
- 4-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ։
- 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ։
- 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 6 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ։
- 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հայոց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ։
- 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Գրականություն» առարկային՝ 1 դասաժամ։
- 9-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ։

Արաքսյա Առստամյանն առաջարկեց նաև 1-9-րդ դասարաններում անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.

- 1-ին դասարանում անհատական (դպրոցական) բաղադրիչից ժամաքանակ չի հատկացվում
- 2-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 3-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական)

բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը

- 4-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
- 5-րդ դասարանում շաբաթական 3 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 1-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
- 6-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
- 7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 8-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 9-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

Արաքսյա Առստամյանն առաջարկեց 8-րդ և 9-րդ դասարաններում «Կերպարվեստ» և «Երաժշտություն» առարկաները փոխարինել «Արվեստ» ինտեգրված առարկայով:

*Որոշեցին՝*

1. Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների ժամաբաժանումը (կցվում է):
2. Դպրոցական բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
   - 1-ին դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Կերպարվեստ» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ:
   - 2-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 2 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ:
   - 3-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ:
   - 4-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Մայրենի» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «Ես և շրջակա աշխարհը» առարկային՝ 1 դասաժամ:
   - 5-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 5 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ:
   - 6-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 6 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Մաթեմատիկա» առարկային՝ 1 դասաժամ, «ԹԳՀԳ» առարկային՝ 1 դասաժամ, «Տեխնոլոգիա» առարկային՝ 1 դասաժամ, «Ֆիզկուլտուրա» առարկային՝ 1 դասաժամ:
   - 7-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 4 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Հայոց լեզու» առարկային՝ 1 դասաժամ, «Ռուսաց լեզու» առարկային՝ 1 դասաժամ:
   - 8-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 3 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ, «Գրականություն» առարկային՝ 1 դասաժամ:
   - 9-րդ դասարանում դպրոցական բաղադրիչի 2 դասաժամը հատկացվում է՝ «Անգլերեն» առարկային՝ 2 դասաժամ:
3. Անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել հետևյալ սկզբունքով.
   - 1-ին դասարանում անհատական (դպրոցական) բաղադրիչից ժամաքանակ չի հատկացվում
   - 2-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 3-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը
   - 4-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական)

բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը

- 5-րդ դասարանում շաբաթական 3 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 1-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
- 6-րդ դասարանում շաբաթական 6 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 2-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել արտադասարանական խմբակների իրականացմանը, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
- 7-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 8-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։
- 9-րդ դասարանում շաբաթական 12 դասաժամ (3 դասարան, յուրաքանչյուրը՝ 4-ական դասաժամ) անհատական (դպրոցական) բաղադրիչը տրամադրել՝
  - արտադասարանական խմբակների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ, այդ թվում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 0,5 դասաժամ (կիսամյակի ընթացքում՝ 1 դասաժամ) և «Մասնագիտական կողմնորոշման ակումբ» պարտադիր խմբակին՝ յուրաքանչյուր դասարանում շաբաթական 1 դասաժամ (երկու կիսամյակների համար)։
  - նախագծային աշխատանքների իրականացման համար՝ շաբաթական 6 դասաժամ։

4. 8-րդ և 9-րդ դասարաններում «Կերպարվեստ» և «Երաժշտություն» առարկաները փոխարինել «Արվեստ» ինտեգրված առարկայով։

*Լսեցին 6.*

Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանի, առարկայական ծրագրերի, ուսումնական պլանի,

օրացուցային-թեմատիկ պլանների, արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նախագահի կողմից մշակված 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, ընդգծելով դրանով նախատեսված հիմնական ուղղություններն ու իրականացվելիք միջոցառումները։ Նա նշեց, որ առարկայական օրացուցային-թեմատիկ պլանները կազմվել են հաստատված չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան՝ ապահովելով ուսումնական գործընթացի համակարգված, նպատակային և արդյունավետ կազմակերպումը։

Զեկուցողի խոսքով՝ արտադասարանական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանները ևս մշակվել են յուրաքանչյուր ուսուցչի կողմից՝ հիմք ընդունելով երաշխավորված ծրագրերը։ Սա հնարավորություն է տալիս ոչ միայն արտադասարանական աշխատանքը դարձնել առավել նպատակասլաց և արդյունավետ, այլև նպաստել սովորողների հետաքրքրությունների բացահայտմանն ու զարգացմանը, նրանց ստեղծագործական ներուժի խթանմանը և հումանիտար կրթական բաղադրիչի խորացմանը։

*Արտահայտվեցին՝* Լ. Գրիգորյան, Ս. Ավանեսյանը։

Արտահայտվողները կարևորեցին, որ առարկայական օրացուցային-թեմատիկ պլանները մշակվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված ծրագրերի հիման վրա՝ ամբողջությամբ համահունչ նոր չափորոշչային պահանջներին։ Նշվեց, որ պլանները կազմվել են նաև դպրոցում կիրառվող և պաշտոնապես հաստատված դասագրքերի հիմքով՝ ապահովելով դրանց համապատասխանությունը կրթական բովանդակությանը։

Միաժամանակ ընդգծվեց, որ պլանների մշակման ընթացքում հաշվի է առնվել ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի օգոստոսի 14-ի N 64-Ն հրամանը, որով սահմանվում է հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը։

Այս մոտեցումը, ըստ արտահայտվողների, կարևոր է ոչ միայն ուսումնական գործընթացի օրինականությունն ու համակարգվածությունը երաշխավորելու համար, այլև ուսուցիչների համար ստեղծում է հստակ մեթոդական դաշտ, որն ապահովում է աշխատանքի միասնականություն և գործընթացի արդյունավետություն։

*Որոշեցին՝* Հավանության արժանացնել արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահի 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանը, առարկայական ծրագրերը, օրացուցային-թեմատիկ պլանները, առարկայական խմբակների օրացուցային-թեմատիկ պլանները և ուսումնական պլանը։

*Լսեցին 7.* Նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը կարևորեց նախագծային աշխատանքների նախորդ տարիների կազմակերպման փորձը և ներկայացրեց դրանց իրականացման կարգն ու կատարված փոփոխությունները։ Նա նշեց, որ մասնախմբի անդամների կողմից արդեն իսկ 7-9-րդ դասարանների համար մշակվել և ներկայացվել են համապատասխան թեմաներ։ Ըստ սահմանված կարգի՝ այս ուսումնական տարվա նախագծային աշխատանքներին կարող են մասնակցել նվազագույնը երեք, իսկ առավելագույնը՝ յոթ աշակերտներից բաղկացած խմբեր։

Զեկուցողի խոսքով՝ յուրաքանչյուր դասարանի համար նախատեսված թեմաներն ու ղեկավարների տվյալները ուղարկվել են աշակերտական չաթերին, ինչի արդյունքում աշակերտները բաժանվել են խմբերի, ընտրել իրենց հետաքրքրող թեմաները և համապատասխան ղեկավարներին։

Նա նաև անդրադարձավ հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման, գործունեության և նախագծային աշխատանքների իրականացման կարգին: Հիմք ընդունելով այդ կարգը՝ զեկուցողը առաջարկեց նախագծային աշխատանքների պաշտպանությունները կազմակերպել առարկայական հանձնաժողովների միջոցով: Հանձնաժողովի կազմում, ըստ նրա առաջարկի, պետք է ընդգրկվեն տվյալ առարկայի կամ առարկաների ուսուցիչները, մեթոդական միավորման նախագահը, նույն կամ հարակից առարկայի ուսուցիչները, ինչպես նաև տնօրենի տեղակալը:

Վերջում զեկուցողը ներկայացրեց նաև նախագծային աշխատանքների գնահատման կարգը, որը սահմանված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված նախագծային ուսուցման հայեցակարգով և ուսուցիչների վերապատրաստման մոդուլով:

***Արտահայտվեցին՝*** Ս. Միրզոյանը, Ա. Աբգարյանը:

Արտահայտվողները կարևորեցին հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման, գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգում սահմանված պահանջները: Նրանք ընդգծեցին, որ այս պահանջների լիարժեք և պատշաճ կիրառումը ոչ միայն ապահովում է կրթական գործընթացի բազմազանությունն ու արդյունավետությունը, այլև բարձրացնում է սովորողների ակտիվ մասնակցությունն ու ներգրավվածությունը:

Միաժամանակ արտահայտվողները կարևորեցին նախագծային աշխատանքների կարգում կատարված փոփոխությունները՝ նշելով, որ դրանք ուղղված են սովորողների հետազոտական և ստեղծագործական գործունեության առավել արդյունավետ կազմակերպմանը: Կատարված փոփոխությունները խթանում են աշակերտների ինքնուրույնությունը, համագործակցային հմտությունների զարգացումը և ուսումնական խմբերում թիմային աշխատանքին նպաստող միջավայրի ստեղծումը:

***Որոշեցին՝*** Հավանության արժանացնել նախագծային աշխատանքների թեմաները, պլանները, թեմատիկ պլանները, ղեկավարներին, մատյանները և հանձնաժողովների կազմը (կցվում է):

***Լսեցին 8.*** Ըստ նոր ՀՊՉ-ների 1-9-րդ դասարաններում գնահատման չափանիշների հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ անհրաժեշտ է հիմք ընդունել Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները և 2025-2026 ուսումնական տարում նոր ՀՊՉ-ներով դասավանդվող դասարաններում աշակերտների գնահատումն իրականացնել այդ չափանիշներին համապատասխան: Ըստ այդ չափանիշների 2025-2026 ուսումնական տարում 1-9-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.

1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝

1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից: Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.
1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:
Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈւՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) T-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով

36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:
Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 38-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

***Արտահայտվեցին՝*** Ա. Աբգարյանը
Արտահայտվողը նշեց, որ նախորդ ուսումնական տարում նոր ՀՊՉ-ներով ուսուցանվող դասարաններում կիրառված գնահատման չափորոշիչները արդյունավետ են եղել և արդարացրել են իրենց նպատակները: Նա առաջարկեց, որ այս ուսումնական տարվա ընթացքում էլ յուրաքանչյուր դասարանում պահպանվեն Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները, ինչը թույլ կտա ուսուցիչներին անհրաժեշտության դեպքում կատարել որոշ փոփոխություններ՝ պահպանելով գնահատման համապատասխան սկզբունքները:
Արտահայտվողը նաև առաջարկեց հավանության արժանացնել առաջարկվող ձևերն ու մեթոդները և ընդգծեց, որ այս հարցը անհրաժեշտ է քննարկել մանկավարժական խորհրդի նիստում: Նման քննարկումը կբարձրացնի գնահատման միասնականությունը և կնպաստի նոր մեթոդների արդյունավետ կիրառումին ուսումնական գործընթացում:

***Որոշեցին՝*** Հաստատել նոր ՀՊՉ-ների համաձայն 5-9-րդ դասարաններում գնահատման չափանիշները՝ հիմք ընդունելով Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշները, ինչպես նաև Հումանիտար առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված առարկաների համար կիրառել հետևյալ գնահատման ձևերը, մեթոդները, հնարները.

2025-2026 ուսումնական տարում 5-9-րդ դասարաններում ըստ նպատակի՝ կիրառվում է սովորողների գնահատման երեք տեսակ.
1) հայտորոշիչ գնահատում,
2) ձևավորող գնահատում,
3) ամփոփիչ գնահատում (միավորային և բնութագրող):

Հայտորոշիչ գնահատման ձևն ընտրում է ուսուցիչը: Հայտորոշիչ գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը՝
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Ձևավորող գնահատումն իրականացվում է ուսուցչի և սովորողի (ինքնագնահատում, փոխադարձ գնահատում) կողմից: Ձևավորող գնահատման համար կարող են օգտագործվել հետևյալ ձևերը.
1) գրավոր կարճ հարցում (թեստ).
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) տնային աշխատանք.
6) նախագծային աշխատանք.
7) քննարկում, բանավեճ.
8) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:
Ձևավորող գնահատում իրականացնելիս միավոր չի նշանակվում:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման ձևերը սահմանում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, իսկ մեթոդներն ընտրում է ուսուցիչը՝ հետևյալ առաջարկվող մեթոդներից.
1) թեստ կամ գրավոր այլ աշխատանք.
2) բանավոր հարցում.
3) բաց հարցերով քննարկում.
4) քննարկում, բանավեճ
5) գրավոր կարճ հարցում (թեստ).
6) գործնական (լաբորատոր) աշխատանք.
7) տնային աշխատանք.
8) նախագծային աշխատանք.
9) բնութագրող (այն դասարաններում, որտեղ ամփոփումն իրականացվում է բնութագրիչների միջոցով)
10) հնգյակի մեթոդ
11) ԳՈւՍ (Գիտեմ-Ուզում եմ սովորել-Սովորել եմ)
12) մտածիր-զույգ կազմիր-հաղորդիր
13) խճանկար
14) պրիզմա
15) Վենի դիագրամ
16) T-աձև աղյուսակ
17) ելքի քարտերի լրացում
18) ձնագնդի
19) մտածող գլխարկներ
20) մտագրոհ (մտքերի հոսք)
21) կենտրոններով աշխատանք
22) Ֆրայերի մեթոդ
23) գիտելիքի դոմինո
24) երկու բան
25) վարդ, փուշ, բողբոջ
26) տասը տարի անց
27) սկսել, դադարեցնել, պահել
28) մետաիմացության թերթիկ
29) ինձնից առաջ հարցրու երեք հոգու
30) դասի զեկուցող
31) Ես-Դու-Մենք
32) լուսակիր
33) կիսատ նախադասություն
34) «Խաթարված հերթականություն»
35) Միավորային գնահատման իրականացում Quizizz և առցանց այլն գործիքի միջոցով
36) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ուսուցման մեթոդներ ու հնարներ:

Ամփոփիչ (միավորային և բնութագրող) գնահատման մեթոդները կարող են լրացվել կամ փոփոխվել ուսումնական տարվա ընթացքում՝ ուսուցչի հայեցողությամբ:

Միավորային գնահատումը կարող է իրականացվել գնահատման հետևյալ ձևերով՝
1) թեստ.
2) բանավոր հարցում.
3) գրավոր աշխատանք.
4) գործնական (լաբորատոր) աշխատանք.
5) նախագծային աշխատանք.
6) և ուսուցչի ընտրությամբ ցանկացած այլ ձև:

Սովորողի կիսամյակային գնահատականը ձևավորվում է Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների գնահատման չափանիշների 40-րդ կետում սահմանված և ուսուցչի կողմից ընտրված գնահատման ձևերից ստացած գնահատականների միջին թվաբանականով, ինքնաշխատ եղանակով:

***Լսեցին 9.*** Երկարօրյա խմբերում աշակերտների ընդգրկվածության մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ երկարօրյա ուսուցումն իրականացվում է 2020 հոկտեմբերի 13-ի №38-Ն որոշման համաձայն, որով հաստատվել է Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգը: Համապատասխան այդ կարգի երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝

- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է երկարօրյա խմբերում, որոնք ստեղծվում են՝
  1) սովորողի ծնողի դիմումի հիման վրա՝
  ա. ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու.
  բ. դասապատրաստումներին աջակցելու.
  գ. ինքնուրույն սովորելու կարողությունները զարգացնելու նպատակներով:
- Երկարօրյա ուսուցումը կազմակերպվում է նաև հանրակրթության պետական չափորոշչի (այսուհետ՝ ՀՊՉ) ներդրման շրջանակներում ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների առաջադիմության բարելավման նպատակով:

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց ուսումնառության ցածր արդյունք արձանագրած սովորողների ներգրավվածության վրա, շեշտեց, որ համապատասխան կարգի ՀՊՉ-ի ներդրման ժամանակացույցով սահմանված դասարաններում ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան սովորողի ուսումնառության ցածր արդյունքների դեպքում առարկայական ծրագրի յուրացումը ապահովելու նպատակով կրթության կառավարման տեղեկատվական համակարգի տվյալների հիման վրա տվյալ առարկան դասավանդող ուսուցիչը կամ սովորողի դասղեկը երկարօրյա ուսուցում կազմակերպելու համար հիմնավորված գրավոր առաջարկով դիմում է տնօրենին՝
1) այն դասարաններում, որտեղ սովորողների որևէ առարկայի առաջադիմության գնահատումն իրականացվում է բնութագրող գնահատման արդյունքում՝ յուրաքանչյուր ամսվա ավարտին ձևավորող գնահատման հիման վրա արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու դեպքում.
2) այն դասարաններում, որտեղ իրականացվում է միավորային գնահատում, սովորողների կողմից որևէ առարկայից ուսումնառության փուլի (թեմա,

ենթաթեմա, թեմաներ) ավարտին ձևավորող գնահատման արդյունքում արձանագրված ուսումնառության ցածր արդյունքներ ունենալու, ինչպես նաև ամփոփիչ գնահատման արդյունքում 1-3 միավոր գնահատվելու դեպքում:

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ անհրաժեշտ է առանձնացնել հետ մնացող աշակերտներին, ինչպես նաև նրանք, ովքեր ուսումնառության ընթացքում ստացել են ցածր գնահատականներ ձևավորող գնահատումներից կամ բանավոր հարցումներից: Նման աշակերտները առաջարկվեց ընդգրկել երկարօրյա խմբերում, ինչը հնարավորություն կտա ապահովել նրանց առավել հպարտելի և արդյունավետ ուսուցում և վերականգնել գիտելիքների բացերը:

*Որոշեցին՝* Դպրոցում երկարօրյա ուսուցումն իրականացնել Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում երկարօրյա ուսուցման կազմակերպման կարգի համաձայն:

*Լսեցին 10.* 2025-2026 ուսումնական տարվա ԱՈՒՊ-ների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց ԱՈՒՊ-ների լրացման նոր կարգը և 2025-2026 ուսումնական տարում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվելիք հիմնական աշխատանքները: Նա առանձնացրեց նաև այդ աշակերտների համար կիրառվող պարզեցված մեթոդները և կոնկրետ օրինակներով ցուցադրեց ԱՈՒՊ-ների լրացման ընթացակարգերը, ընդգծելով դրանց նշանակությունը ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար:

Զեկուցողը տեղեկացրեց, որ 2025-2026 ուսումնական տարվա սկզբին դպրոցում առկա են 18 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտ, որոնց հետ աշխատանքը պետք է իրականացվի հատուկ սահմանված կարգով՝ հաշվի առնելով նրանց անհատական հնարավորությունները և կրթական պահանջները: Նա առանձին անդրադարձ կատարեց յուրաքանչյուր աշակերտի հետ իրականացվող աշխատանքներին և ներկայացրեց մանրամասն գրաֆիկը, ինչը հնարավորություն է տալիս համակարգված և արդյունավետ կազմակերպել ուսուցումը՝ պահպանելով անհատական մոտեցման սկզբունքը:

*Արտահայտվեցին՝* Արաքսյա Առստամյանը

Արաքսյա Առստամյանը նշեց, որ դպրոցում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ իրականացվող աշխատանքները միշտ պատշաճ կերպով կազմակերպվել են, և նախորդ ուսումնական տարին նույնպես բացառություն չէ: Նա առանձնահատուկ շեշտ դրեց ծանր խնդիրներ ունեցող աշակերտների հետ իրականացվող աշխատանքների կարևորության վրա, քանի որ դրանք պահանջում են հատուկ մոտեցում և մասնագիտական հմտություններ:

Արտահայտվողը կարևորեց, որ ԱՈՒՊ-ները լրացվեն նոր կարգի համապատասխանությամբ, իսկ պարզեցումները կատարվեն՝ հաշվի առնելով ԿԱՊԿՈՒ աշակերտների անհատական կարողություններն ու ընդունակությունները:

Արաքսյա Առստամյանը նաև շեշտեց դիտարկման թերթիկների լրացման կարևորությունը, ինչպես նաև ուսուցչի օգնականների և հատուկ մանկավարժի հետ համատեղ ու համագործակցային աշխատանքը, որը նպաստում է ուսուցման արդյունավետությանը, նպատակային կազմակերպմանը և անհատական մոտեցման լիարժեք կիրառմանը:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն ԱՈՒՊ-ների լրացման նոր կարգը, աշխատանքներն ու պարզեցումներն իրականացնել սահմանված պահանջներին համապատասխան, սահմանված կարգով կիրառել դիտարկման թերթիկները:

*Լսեցին 11.* Ցուցադրական դասերի, դաս-միջոցառումների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ ցուցադրական դասերի և դաս-միջոցառումների կազմակերպումը կարևոր նշանակություն ունի, քանի որ դրանք ծառայում են որպես օրինակելի ուսուցման հարթակ, որտեղ հաշվի են առնվում դասապրոցեսի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր մանրուքներն ու մեթոդական կանոնները: Նա ընդգծեց, որ բաց դասերի կազմակերպումը նույնպես կարևորվում է, քանի որ այն հնարավորություն է տալիս ուսուցիչներին տարածել ձեռք բերած դրական փորձը, դիտարկել լավագույն փորձը և ինտեգրել դրանք դպրոցային կրթական գործընթացում:

Զեկուցողը ներկայացրեց նաև բաց դասերի, դաս-միջոցառումների և այլ միջոցառումների ժամանակացույցի նախագիծը, որը նախատեսված է ուսումնական տարվա ընթացքում դրանց արդյունավետ և համակարգված իրականացման համար:

***Արտահայտվեցին՝*** Թ. Հովհաննիսյանը, Ս. Միրզոյանը:

Արտահայտվողներն առաջարկեցին, որ 2025-2026 ուսումնական տարում, ինչպես նախորդ տարիներին, պահպանվեն նույն սկզբունքները և անցկացվեն բաց դասերը և բաց դաս-միջոցառումները՝ նախապես սահմանված ժամանակացույցի համաձայն: Նրանք ընդգծեցին, որ այս մոտեցումը հնարավորություն է տալիս ապահովելու դասերի կազմակերպվածությունը, բարձրացնել բաց դասերի և միջոցառումների արդյունավետությունը, ինչպես նաև խթանել ուսուցիչների փորձի փոխանակումն ու մասնագիտական առաջընթացը:

***Որոշեցին՝*** Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների կողմից անցկացնել բաց դասեր, բաց դաս-դաս միջոցառումներ՝ ժամանակացույցի համաձայն, որը կցվում է:

***Լսեցին 12.*** 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում դասալսումների, փոխադարձ դասալսումների իրականացման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ 2021-2022 ուսումնական տարուց սկսած դպրոցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումները, համակարգված կերպով արձանագրվում են հատուկ արձանագրությունների թղթերում, որտեղ սահմանված են համապատասխան չափանիշներ՝ դասալսվողների գնահատումն ապահովելու համար:

Արաքսյա Առստամյանը հավելեց, որ արձանագրության ձևանմուշը լիովին համապատասխանում է ընթացակարգերի պահանջներին և առաջարկեց, որ յուրաքանչյուր ուսուցչի մոտ մեկ կիսամյակի ընթացքում իրականացվեն նվազագույնը 3 դասալսում, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներ՝ դպրոցի ձևանմուշի պահանջներին համապատասխան:

Զեկուցողը ընդգծեց, որ իրականացված դասալսումները պետք է պատշաճ կերպով արձանագրվեն ձևանմուշներում, իսկ կիսամյակի ավարտին դրանք անհրաժեշտ է արխիվացնել սահմանված կարգով՝ ապահովելով դրանց հասանելիությունն ու վերահսկելիությունը:

***Արտահայտվեցին՝*** Ա. Հովսեփյանը:

Արտուր Հովսեփյանը նշեց, որ նախորդ երկու ուսումնական տարիների ընթացքում ձեռք բերված փորձը տվել է դրական արդյունքներ և ցուցաբերել արդյունավետություն: Հաշվի առնելով սա, նա նպատակահարմար համարեց, որ 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում նույնպես պահպանվի նույն սկզբունքը, ինչը կնպաստի ուսուցման որակի բարձրացմանը և գործընթացի շարունակական բարելավմանը:

*Որոշեցին՝* 2025-2026 ուսումնական տարվա ընթաքցում դասալսումները, այդ թվում՝ փոխադարձ դասալսումներն արձանագրել հատուկ արձանագրությունների թղթում, որտեղ սահմանված են չափանիշներ, որոնց համապատասխան գնահատվում են դասալսվողները, 1 կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը 3 դասալսում դպրոցի կողմից մշակված ձևաթղթով, այդ թվում՝ փոխադարձ դասալսում: Կիսամյակների և ուսումնական տարվա ավարտին ամփոփել դասալսումները և ներկայացնել մանկավարժական խորհրդի ամփոփիչ նիստում:

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Աբգարյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԱՐՎԵՍՏԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №2

«25» սեպտեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Աննա Աբգարյան (մ/մ նախագահ)
2. Ռոբերտ Արզումանյան
3. Թամարա Հովհաննիսյան
4. Սոնա Միրզոյան
5. Արտուր Հովսեփյան
6. Լուսինե Գրիգորյան

**Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը, ՄԿԱ համակարգող Արմիդա Գևորգյանը:**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
2. Հաղորդում արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
3. Դասալսումների և փոխադարձ դասալսումների իրականացում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
4. ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
5. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր ամսվա աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

***Լսեցին 1.*** Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման 2-րդ նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
Զեկուցողը ներկայացրեց արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց իրականացված աշխատանքների արդյունքներն ու դրանց արդյունավետությունը: Նա մանրամասն անդրադարձավ կատարված գործունեությանը՝ ընդգծելով, որ նախորդ նիստում ընդունված որոշումները և ծրագրավորված գործողությունները

կատարվել են պատշաճ կերպով, սահմանված ժամկետներում և ըստ նախատեսված պլանի։

Զեկուցողը հավելեց, որ իրականացված աշխատանքները նպաստել են ուսումնական գործընթացի կազմակերպման բարելավմանը, մեթոդական մոտեցումների կատարելագործմանը և առարկայական ուղղությունների միջև համագործակցության ամրապնդմանը։

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

*Լսեցին 3.* Դասալսումների և փոխադարձ դասալսումների իրականացման մասին հարցը։
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը կարևորեց փոխադարձ դասալսումների կազմակերպման հետ կապված աշխատանքների նպատակային և համակարգված իրականացումը՝ ընդգծելով դրանց մեծ նշանակությունը ուսումնական գործընթացի որակի բարձրացման գործում։ Նա մասնավորապես ուշադրություն հրավիրեց 2-9-րդ դասարաններում իրականացվելիք դասալսումներին, նշելով, որ դրանք պետք է կազմակերպվեն ըստ հաստատված պլանի և մասնագիտական նպատակահարմարության։

Զեկուցողը նշեց, որ նպատակահարմար է կիրառել նախորդ ուսումնական տարվա հաջողված փորձը, քանի որ իրականացված դասալսումները ցույց են տվել, որ նոր չափորոշչային դասարաններում առաջացած մի շարք դժվարություններ հաջողվել է հաղթահարել հենց դասալսումների ընթացքում վերհանված և հետագա քննարկումների միջոցով գտած լուծումների շնորհիվ։

Նա առաջարկեց լինել առավել ուշադիր և նպատակային հատկապես 4-րդ և 9-րդ դասարաններում անցկացվող դասալսումների ժամանակ՝ ապահովելով դասերի մանրամասն դիտարկում և դրանց շուրջ բաց, կառուցողական քննարկումներ։ Զեկուցողի կարծիքով, նման քննարկումները պետք է անցկացվեն համատեղ ձևաչափով, ներգրավելով նաև մյուս ուսուցիչներին, որպեսզի հնարավոր լինի համախմբված ձևով վերհանել առաջացած խնդիրները, փոխանակել փորձը և գտնել արդյունավետ լուծումներ՝ նպաստելով ուսուցման գործընթացի շարունակական կատարելագործմանը։

*Արտահայտվեցին՝* Ս. Միրզոյանը, Ա. Առստամյանը, Ռ. Արզումանյանը։

Արաքսյա Առստամյանը առաջարկեց առավել ուշադրություն դարձնել 4-րդ և 9-րդ դասարաններում իրականացվող դասալսումներին, ընդգծելով, որ հենց այս դասարաններում անհրաժեշտ է ուսուցիչներին ցուցաբերել մեթոդական և ծրագրային աջակցություն՝ դասագրքերում ներկայացված նոր պահանջների պատշաճ կատարման համար։ Նա կարևորեց, որ փոխադարձ դասալսումների արդյունքում ուսուցիչները պարտադիր քննարկեն առաջացած խնդիրները, փոխանակեն իրենց դիտարկումները և աշխատանքները կազմակերպեն ընդհանուր, համաձայնեցված որոշումների հիման վրա։

Սոնա Միրզոյանը ևս կարևորեց դասալսումների դերը՝ հատկապես նշելով դրանց արդյունավետությունը 4-րդ և 9-րդ դասարաններում, որտեղ այս ուսումնական տարում ընթանում է նոր ՀՊՉ-ների (հիմնական կրթական ծրագրերի չափորոշիչների) ներդրման գործընթացը։ Նա ընդգծեց, որ անհրաժեշտ է շարունակել աշխատել նույն համագործակցային և փոխօգնության սկզբունքներով, որոնք արդյունավետ էին նախորդ ուսումնական տարում։

Ռոբերտ Արզումանյանն իր հերթին նշեց, որ դասալսումները մեծ մասնագիտական արժեք ունեն, քանի որ դրանց ընթացքում և՛ դասալսողը, և՛ դասալսվողը հնարավորություն են ստանում ծանոթանալու նոր մեթոդների, տեխնիկաների և հնարների, որոնք կարող են կիրառել իրենց դասապրակտիկայում։

Միրզոյանը հավելեց, որ դասալսումներից հետո կազմակերպվող քննարկումները պարտադիր և անփոխարինելի փուլ են, քանի որ դրանց ընթացքում բարձրաձայնվում և վերլուծվում են առաջացած խնդիրները՝ հնարավորություն տալով գտնել արդյունավետ լուծումներ և կատարելագործել ուսումնական գործընթացը։

*Որոշեցին՝* 2025-2026 ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացնել նվազագույնը երեք դասալսում՝ մշակված դասալսման թերթիկի պահանջներին համապատասխան, հաճախակի կազմակերպել փոխադարձ դասալսումներ, կատարել քննարկումներ հատկապես ուշադրություն դարձնելով 4-րդ, 9-րդ դասարանում ուսումնասիրվող առարկաներին։

*Լսեցին 4.* ԿԱՊԿՈՒՀ աշակերտների հետ ուսումնական գործընթացի պատշաճ իրականացման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչ–ուսուցչի օգնական–հատուկ մանկավարժ–հոգեբան համագործակցության շարունակական և համակարգված իրականացումը՝ նշելով, որ այն հանդիսանում է ներառական կրթության արդյունավետության հիմնական պայմաններից մեկը։ Նա անդրադարձավ 2025-2026 ուսումնական տարում տեղի ունեցած փոփոխություններին, ընդգծելով դրանց ազդեցությունը կրթական գործընթացի կազմակերպման և մասնագիտական համագործակցության ձևերի վրա։

Զեկուցողն առանձնահատուկ ուշադրություն դարձրեց ԿԱՊԿՈՒՀ (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) աշակերտների հետ տարվող աշխատանքներին՝ ներկայացնելով ուսումնական տարվա մեկնարկից սկսած ԱՈՒՊ-ների լրացման ընթացքը։ Նա նշեց, որ նոր ձևաչափով ԱՈՒՊ-ների լրացումը ավելի պարզ և արագ իրագործելի է, ինչի շնորհիվ ուսուցիչները կարողանում են հստակ ձևակերպել իրենց նպատակներն ու միջոցառումները՝ աշակերտների առաջընթացը ապահովելու համար։

Զեկուցողը նաև կարևորեց ուսուցիչ–ծնող համագործակցությունը, շեշտելով, որ աշակերտի հաջողության հիմնաքարը ծնողի ակտիվ մասնակցությունն ու աջակցությունն է։ Նա առաջարկեց հաճախակի կազմակերպել համատեղ քննարկումներ՝ ուսուցչի, ուսուցչի օգնականի, հոգեբանի, հատուկ մանկավարժի և ծնողների մասնակցությամբ՝ նպատակ ունենալով ժամանակին բացահայտել և լուծել առաջացած խնդիրները, ինչպես նաև ապահովել երեխայի ուսումնական և հոգեբանական բարեհաջող զարգացումը։

*Արտահայտվեցին՝* Ա. Աբգարյանը, Լ. Գրիգորյանը։

Արտահայտվողները նշեցին, որ ԿԱՊԿՈՒՀ աշակերտների հետ աշխատանքների ընթացքում հաճախ առաջանում են խնդիրներ, որոնք պայմանավորված են նրանց ուշ գնահատմամբ, դժվարությունների ուշ բացահայտմամբ, ինչպես նաև աշակերտների անհատական առանձնահատկություններով։ Նշվեց, որ որոշ դեպքերում այդ հանգամանքները խոչընդոտում են ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպմանը և պահանջում են լրացուցիչ աջակցություն ու միջամտություն։

Գրիգորյանը հավելեց, որ կան ԿԱՊԿՈՒՀ աշակերտներ, որոնց հետ աշխատանքը բավականին բարդ և բազմաշերտ գործընթաց է, և դժվարություններ են առաջանում ոչ միայն ուսուցչի, այլև ուսուցչի օգնականի համար։ Նա առաջարկեց առավել սերտ համագործակցություն հաստատել ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների հետ՝ նպատակ ունենալով ապահովել աշակերտների լիարժեք մասնակցությունը դասապրոցեսին։

Գրիգորյանի խոսքով՝ նման համագործակցությունը կնպաստի, որպեսզի աշակերտների ուսումնական գործընթացը կազմակերպվի ԱՈՒՊ-ով և օրվա դասի պլանով սահմանված նպատակներին համահունչ, և յուրաքանչյուր

աշակերտ ստանա իր կարիքներին համապատասխան աջակցություն՝ ապահովելով ներառական կրթության իրական արդյունավետություն։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն զեկուցումը, ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել հանդիպումներ ուսուցիչ-ուսուցչի օգնական-հոգեբան-հատուկ մանկավարժ ձևաչափով։

*Լսեցին 5.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց մատենավարության նոր կարգը՝ անդրադառնալով 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում նախատեսված փոփոխություններին։ Նա ընդգծեց, որ մատենավարության իրականացումը պետք է կազմակերպվի նոր պահանջներին և ձևաչափերին համապատասխան, պահպանելով բոլոր սահմանված մեթոդական և ընթացակարգային դրույթները։

Զեկուցողը կարևորեց նաև նոր չափորոշչային դասարաններում գնահատման համակարգում կատարված փոփոխությունների մասին իրազեկված լինելը։ Նա նշեց, որ ուսուցիչները պետք է ուշադրություն դարձնեն գնահատման նոր մոտեցումներին՝ համապատասխանեցնելով գրանցումները և մատենավարական տվյալները սահմանված կարգին։

Զեկուցողի խոսքով՝ նոր մատենավարական կարգը նպատակ ունի ապահովել թափանցիկություն, միասնականություն և արդյունավետություն ուսումնական գործընթացի փաստաթղթավորման գործում՝ նպաստելով ինչպես գնահատման արդարության, այնպես էլ ուսուցման որակի բարձրացմանը։

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը, Ա. Հովսեփյանը։

Ավանեսյանը կարևորեց մատենավարության աշխատանքների ճշգրիտ և կարգապահ իրականացումը, ընդգծելով, որ բոլոր գրանցումները պետք է կատարվեն հաստատված և համակարգում ներբեռնված ՕԹՊ-ների համապատասխան։ Նա հանձնարարեց մեթոդմիավորման նախագահին իրականացնել ամենշաբաթյա ստուգումներ, վերահսկել մատենավարական գրանցումների ընթացքը և դրանց ամփոփ տվյալները պարբերաբար ներկայացնել ուսումնական մասին՝ վերահսկողության և համակարգման նպատակով։

Հովսեփյանը իր հերթին նշեց, որ անհրաժեշտ է լինել առավել ուշադիր և պատասխանատու մատենավարության գործընթացում՝ բոլոր աշխատանքները կատարելով սահմանված ժամկետներում։ Նա առաջարկեց, որ առաջացած հարցերի կամ դժվարությունների դեպքում ուսուցիչները դիմեն ուսումնական մաս՝ ժամանակին և հստակ խորհրդատվություն ստանալու համար, ինչը թույլ կտա խուսափել սխալներից և ապահովել աշխատանքի բարձր որակ։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն մատյանների ընթացիկ ստուգման արդյունքները, մեթոդմիավորման նախագահի կողմից իրականացնել էլեկտրոնային մատյանների ամենշաբաթյա ստուգումներ, դրանց արդյունքներով ի հայտ եկած խնդիրները ներկայացնել տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին, կազմակերպել խորհրդատվություն և աջակցել ուսուցիչներին առաջացած խնդիրների դեպքում։

*Լսեցին 6.* 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր ամսվա աշխատանքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (այսուհետ՝ ՈՒԴԱՏՊ) շրջանակում սեպտեմբեր ամսվա ընթացքում իրականացված և ընթացիկ միջոցառումների մանրամասն ամփոփումը։ Նա նշեց, որ ինչպես

սեպտեմբեր, այնպես էլ նախորդ՝ օգոստոս ամսվա ընթացքում պլանով նախատեսված բոլոր աշխատանքները կատարվել են սահմանված կարգով՝ ըստ հաստատված ժամանակացույցի և նախանշված նպատակների։

Զեկուցողը նաև ընդգծեց, որ իրականացված միջոցառումները կազմակերպվել են համակարգված և նպատակային ձևով՝ ընդգրկելով մանկավարժական կազմի ակտիվ մասնակցությունը։ Աշխատանքներն իրականացվել են համագործակցային միջավայրում, ապահովվել է արդյունավետ հաղորդակցություն ուսուցիչների, վարչական կազմի և ծնողների միջև։

Արդյունքում, ուսումնական տարվա մեկնարկը կայացել է կազմակերպված, իսկ կրթական գործընթացը՝ բնականոն և արդյունավետ ընթացքով՝ ստեղծելով ամուր հիմք ուսումնական տարվա կրթական նպատակների հաջող իրականացման համար։

***Արտահայտվեցին՝*** ՄՄ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանով (ՈՒԴԱՏՊ) նախատեսված բոլոր միջոցառումները և գործառույթները, որոնք վերաբերում են մեթոդմիավորման կազմում ընդգրկված ուսուցիչներին, կատարվել են պատշաճ և ժամանակին։

Նշվեց, որ աշխատանքների իրականացման ընթացքում չեն արձանագրվել բացթողումներ կամ թերակատարումներ, ինչը վկայում է ուսուցիչների բարձր պատասխանատվության, նախաձեռնողականության և միասնական աշխատանքի մասին։

Մասնակիցները նաև շեշտեցին, որ մեթոդմիավորման գործունեությունը կազմակերպվել է համագործակցային և կառուցողական միջավայրում, ինչը նպաստել է պլանային միջոցառումների արդյունավետ իրականացմանը և ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը։

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Աբգարյան

**«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԱՐՎԵՍՏԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №3**

«21» հոկտեմբերի 2025թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Աննա Աբգարյան (մ/մ նախագահ)
2. Ռոբերտ Արզումանյան
3. Թամարա Հովհաննիսյան
4. Սոնա Միրզոյան
5. Արտուր Հովսեփյան
6. Լուսինե Գրիգորյան

**Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:**

**Ո Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
2. Հաղորդում արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
3. Առարկայական օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
5. 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հոկտեմբեր ամսվա աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

***Լսեցին 1.*** Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման 3-րդ նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
Զեկուցողը ներկայացրեց արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը՝ մանրամասնելով իրականացված աշխատանքների բովանդակությունն ու արդյունքները: Նա ամփոփեց նիստում ընդունված որոշումների իրականացման ընթացքը՝ ընդգծելով, որ բոլոր

նախատեսված գործողությունները և հանձնարարությունները կատարվել են պատշաճ կերպով, սահմանված ժամկետներում և ըստ հաստատված պլանի։
Զեկուցողը հավելեց, որ կատարված աշխատանքները նպաստել են ուսումնական գործընթացի կազմակերպման բարելավմանը, ուսուցիչների միջև համագործակցության ամրապնդմանը, ինչպես նաև առարկայական մեթոդական մոտեցումների կատարելագործմանը՝ ապահովելով աշխատանքների արդյունավետ և նպատակային ընթացք։

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

*Լսեցին 3.* Առարկայական օլիմպիադայի մասնակից երեխաների հետ աշխատանքների կազմակերպման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողն առաջարկեց օլիմպիադայի դպրոցական փուլին մասնակցող աշակերտների հետ տարվող աշխատանքները կազմակերպել համակարգված և նպատակային ձևով, ապահովելով աշակերտների պատրաստության հետևողական և արդյունավետ գործընթաց։ Նա նշեց, որ անհրաժեշտ է շաբաթվա ընթացքում առնվազն երկու անգամ վերահսկել հանձնարարությունների կատարման ընթացքը, գնահատել աշակերտների առաջընթացը և շարունակել աշխատանքները ըստ նախապես մշակված պլանի։

*Արտահայտվեցին՝* Ա. Առստամյանը, Լ. Գրիգորյանը։

Արտահայտվողները կարևորեցին օլիմպիադայի նախապատրաստական աշխատանքների պատշաճ կազմակերպումն ու նպատակային իրականացումը, նշելով, որ դրանց արդյունքում պետք է ապահովել աշակերտների ներգրավվածությունը և բարձր արդյունքների արձանագրումը։
Նրանք ընդգծեցին նաև, որ անհրաժեշտ է խթանել աշակերտների մասնակցությունը օլիմպիադայի տարածքային փուլին, քանի որ այն հնարավորություն է տալիս զարգացնելու մրցակցային ոգին, ամրապնդելու գիտելիքները և ներկայացնելու դպրոցի արժանապատիվ մակարդակը։
Արաքսյա Առստամյանը հավելեց, որ նպատակահարմար է ժամանակին ձեռնարկել անհրաժեշտ կազմակերպչական քայլերը՝ նախապատրաստվել առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլին, կազմել հարցաթերթերն ու հարցաշարերը, որպեսզի գործընթացը ընթանա հստակ պլանավորված ձևով և ապահովվի մասնակից աշակերտների արդյունավետ պատրաստությունը։

*Որոշեցին՝* Տալ հանձնարարականներ արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահին և անդամ ուսուցիչներին՝ աշակերտների հետ աշխատանքները կազմակերպել ըստ մշակված անհատական պլանի։

*Լսեցին 4.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց կատարված ստուգումների արդյունքները՝ կարևորելով էլեկտրոնային մատենավարության իրականացման կարգի պահպանման անհրաժեշտությունը։ Նա ընդգծեց, որ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել մատենավարության համակարգում կատարված փոփոխություններին, ստանալ ճիշտ խորհրդատվություն և հետևել գնահատման կարգի նոր պահանջներին։
Զեկուցողը շեշտեց, որ բոլոր գրառումները պետք է կատարվեն հաստատված ՕԹՊ-ների համաձայն, խստորեն պահպանելով սահմանված ժամկետներն ու

ձևաչափերը, ինչպես նաև բացառել շեղումները՝ հատկապես գրավոր և գործնական աշխատանքների, ամփոփումների դեպքում։

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը։

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց ուսուցիչների կողմից մատենավարության վարման գործընթացի հսկողության և համակարգված իրականացման անհրաժեշտությունը։ Նա նշեց, որ անհրաժեշտ է ամենօրյա վերահսկողություն իրականացնել՝ բացառելու հնարավոր թերությունները և կանխելու հետագա խնդիրները։

Ավանեսյանն առաջարկեց ըստ անհրաժեշտության աջակցել ուսուցիչներին, տրամադրել մեթոդական խորհրդատվություն, կատարել համապատասխան դիտողություններ և առաջարկություններ՝ մատենավարության վարման կարգի կատարելագործման ուղղությամբ։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն նախորդող շրջանում էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները, կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում։

*Լսեցին 5.* 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների, ինչպես նաև մյուս մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացվել են դասալսումներ և դասերի դիտարկումներ։ Դրանք ցույց են տվել, որ 2-9-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջները։ Դասալսվող ուսուցիչների մոտ առկա են եղել օրացուցային-թեմատիկ պլաններ, մատենավարությունը կազմակերպված է եղել ըստ այդ պլանների։ Օրվա թեմատիկ պլաններում հստակ սահմանված են եղել դասի նպատակն ու վերջնարդյունքը, ինչը թույլ է տվել ուսուցիչներին հստակ պատկերացնել՝ ինչ արդյունք պետք է ապահովվի դասի ավարտին, և այդ ուղղությամբ արձանագրվել են դրական միտումներ։

Զեկուցողը շեշտեց, որ հատուկ ուշադրություն է դարձվել աշակերտների ներգրավվածությանը և գնահատման համակարգին։ Աշակերտների ներգրավման հարցում հիմնական դժվարությունները կապված են այն սովորողների հետ, ովքեր որոշ չափով հետ են մնում։ Այդ աշակերտներն ընդգրկվում են երկարօրյա խմբերում, իսկ ԿԱՊԿՈՒ աշակերտների արդյունավետ ներգրավվածությունը ապահովվում է ուսուցչի օգնականների միջոցով՝ համաձայն ԱՈՒՊ-ի։

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց նաև գնահատման նոր համակարգի կիրառման վրա, ընդգծելով, որ անհրաժեշտ է օգտագործել նախորդ ուսումնական տարվա փորձը։ Նա նշեց, որ ձևավորող, հայտորոշիչ և ամփոփիչ գնահատումների գործիքակազմը հնարավորություն է տալիս ամբողջականորեն իրականացնել նոր մոտեցումների պահանջները։

Ամփոփելով՝ զեկուցողը առաջարկեց ուսուցիչներին հատուկ ուշադրություն դարձնել՝

- առարկայական ծրագրերով նախատեսված կարողությունների զարգացմանը,
- վերջնարդյունքների հստակ սահմանմանն ու ապահովմանը,
- աշակերտների ներգրավվածության բարձրացմանը,
- և գնահատման նոր համակարգի արդյունավետ կիրառմանը։

Նա նաև առաջարկեց այս ուղղություններով պարբերաբար կազմակերպել քննարկումներ և փորձի փոխանակման հանդիպումներ՝ ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով։

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները

Արտահայտվողները համակարծիք էին զեկուցողի դիտարկումներին՝ նշելով, որ ներկայացված դիտարկումները կարևոր են ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման համար: Նրանք հավելեցին, որ նպատակահարմար է պարբերաբար կազմակերպել քննարկումներ և մասնագիտական հանդիպումներ՝ ուսուցիչների ունեցած գիտելիքները բարելավելու, թարմացնելու և փորձի փոխանակման նպատակով:

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում կատարված փորձը և աշխատանքները կազմակերպել ՀՊՉ պահանջների համապատասխան:

***Լսեցին 6.*** 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հոկտեմբեր ամսվա աշխատանքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացված և ընթացիկ միջոցառումների ամփոփ պատկերը: Նա ընդգծեց, որ ամսվա ընթացքում պլանով նախատեսված բոլոր աշխատանքները իրականացվել են սահմանված կարգով՝ համաձայն հաստատված ժամանակացույցի և նախանշված նպատակների:

Զեկուցողը նշեց, որ իրականացված միջոցառումները կազմակերպվել են համակարգված, նպատակային և համագործակցային սկզբունքով, ընդգրկելով ուսուցիչների, սովորողների և ծնողների ակտիվ մասնակցությունը: Այս մոտեցումը նպաստել է կրթական գործընթացի շարունակական զարգացմանը, արդյունավետ հաղորդակցությանը և դպրոցի համայնքային կյանքի աշխուժացմանը:

Արդյունքում, հոկտեմբեր ամիսը բնութագրվեց նպատակային և բովանդակալից աշխատանքներով, որոնք ապահովել են ուսումնական տարվա կայուն ընթացքը և կրթական ծրագրերի հաջող իրականացման հիմքը:

***Արտահայտվեցին՝*** ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ՈՒԴԱՏՊ նախատեսված բոլոր միջոցառումները և գործառույթները, որոնք վերաբերում են մեթոդմիավորման կազմում ընդգրկված ուսուցիչներին, իրականացվել են պատշաճ, ժամանակին և արդյունավետ ձևով: Նրանց խոսքով՝ աշխատանքների իրականացման ընթացքում բացթողումներ կամ թերակատարումներ չեն արձանագրվել, ինչը վկայում է ուսուցիչների բարձր պատասխանատվության, նախաձեռնողականության և մասնագիտական նվիրվածության մասին:

Ավելին՝ ընդգծվեց, որ մեթոդմիավորման գործունեությունը կազմակերպվել է համագործակցային և ստեղծարար միջավայրում, ինչը նպաստել է փորձի արդյունավետ փոխանակմանը, նոր մեթոդների ներդրմանը և կրթական գործընթացի շարունակական կատարելագործմանը: Այս մոտեցումը ապահովել է տարեկան պլանի արդյունավետ իրականացմանը և դպրոցի մանկավարժական համայնքի միասնական աշխատանքի ամրապնդմանը ընդհանուր նպատակների շուրջ:

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հոկտեմբեր ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները:

Մ/Մ նախագահ՝ Ա. Աբգարյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԱՐՎԵՍՏԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ
ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №4

«25» նոյեմբերի 2025թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Աննա Աբգարյան (մ/մ նախագահ)
2. Ռոբերտ Արզումանյան
3. Թամարա Հովհաննիսյան
4. Սոնա Միրզոյան
5. Արտուր Հովսեփյան
6. Լուսինե Գրիգորյան

**Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ռեսուրս կաբինետի աշխատակիցները, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:**

## Ο Ր Ա Կ Ա Ր Գ

1. Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
2. Հաղորդում արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
3. Հատուկ մանկավարժի, հոգեբանի, ուսուցչի օգնականների հետ համագործակցություն, ընթացիկ աշխատանքների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
5. Փոխադարձ դասալսումների անհրաժեշտության և քննարկման մասին:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբեր ամսվա աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

***Լսեցին 1.*** Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման 4-րդ նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
Զեկուցողը ներկայացրեց արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը՝ մանրամասն ներկայացնելով իրականացված քայլերն ու դրանց արդյունքները: Նա ամփոփեց նիստի հիմնական ձեռքբերումները, ընդգծեց կատարված աշխատանքների

արդյունավետությունը և տեղեկացրեց, որ բոլոր նախատեսված գործառույթներն ու որոշումները կատարվել են պատշաճ և սահմանված ժամկետներում։

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

*Լսեցին 3.* Հատուկ մանկավարժի, հոգեբանի, ուսուցչի օգնականների հետ համագործակցության, ընթացիկ աշխատանքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ հատուկ մանկավարժի, հոգեբանի և ուսուցչի օգնականների հետ անհրաժեշտ է կազմակերպել ամենօրյա աշխատանքային քննարկումներ։ Նրա խոսքով՝ ուսումնական գործընթացում կարևոր է իրականացնել շարունակական վերլուծություններ և առաջացած խնդիրները քննարկել համապատասխան մասնագետների մասնակցությամբ՝ ապահովելով դրանց ժամանակին հայտնաբերումն ու լուծումը։ Հատուկ ուշադրություն դարձվեց նաև անհատական աշխատանքի կարևորությանը։

Զեկուցողը ներկայացրեց նախորդ ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈւՊ-ների և դիտարկման թերթիկների լրացման ընթացքը՝ ընդգծելով, որ այդ աշխատանքները կատարվում են սահմանված պահանջների լիարժեք պահպանմամբ։ Նա հավելեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքներին ներգրավված են նաև ԳՏՄԱԿ-ի մասնագետները։

Ըստ սահմանված կարգի՝ երկու ամիսը մեկ իրականացվում են համատեղ քննարկումներ ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչների, ուսուցիչների, ուսուցչի օգնականների, հոգեբանի, հատուկ մանկավարժի, ինչպես նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողների մասնակցությամբ։ Նիստերին մշտապես մասնակցում է նաև դպրոցի տնօրենությունը, ինչը նպաստում է արդյունավետ փոխգործակցությանը և ուսումնական գործընթացի որակյալ կազմակերպմանը։

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները։

Արտահայտվողները ընդգծեցին, որ երեխաների վարքային փոփոխությունները հաճախ պայմանավորված են նրանց տարիքային առանձնահատկություններով, ուստի կարևոր է դրանք ճիշտ հաշվարկել ուսումնական գործընթացում։ Նշվեց, որ արդյունավետ աշխատանքի կազմակերպումն անմիջականորեն կապված է ծնող–ուսուցիչ–աջակցության թիմ եռակողմ համագործակցության հետ, որը հնարավորություն է տալիս ժամանակին արձագանքել խնդիրներին և ապահովել երեխայի համակողմանի զարգացումը։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան։

*Լսեցին 4.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատյանների ստուգման արդյունքները՝ անդրադառնալով նաև արձանագրված բացթողումներին։ Նա ներկաների ուշադրությունը հրավիրեց ամփոփումների և գործնական աշխատանքների գնահատականները ժամանակին և ճիշտ ձևով էլեկտրոնային մատյանում գրանցելու կարևորությանը՝ ընդգծելով, որ դա ապահովում է ուսումնական գործընթացի թափանցիկությունն ու պատասխանատու կազմակերպումը։

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Ավանեսյանը կարևորեց յուրաքանչյուր ուսուցչի անհատական և պատասխանատու վերաբերմունքը մատենավարության գործընթացում՝ ընդգծելով, որ այն զգալիորեն ազդում է դասապրոցեսի որակի վրա։ Նա նշեց, որ ընթացիկ ստուգումների ընթացքում շարունակմամբ արձանագրվում են որոշ թերություններ, որոնք անհրաժեշտ է արագ շտկել՝ ապահովելու համար աշխատանքների պատշաճ կազմակերպումը։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն նախորդող շրջանում էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները

*Լսեցին 5.* Փոխադարձ դասալսումների անհրաժեշտության և քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ընդգծեց փոխադարձ դասալսումների կարևորությունը՝ նշելով, որ դրանք նպաստում են ուսուցիչների միջև համագործակցային և աջակցող մթնոլորտի ձևավորմանը։ Կարևորվեց այն փաստը, որ ուսուցիչները պետք է կիրառեն հնարավոր բոլոր մեթոդներն ու միջոցները՝ աշակերտների հետաքրքրությունների ձևավորմանը, ինքնուրույն մտածողության և վերլուծական կարողությունների զարգացմանը նպաստելու համար։

Նա նաև կարևորեց յուրաքանչյուր դասալսումից հետո քննարկումների կազմակերպումը մ/մ ուսուցիչների մասնակցությամբ՝ նպատակ ունենալով աջակցել ուսուցիչներին դասի արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև սովորողների ինքնուրույն կարողությունների և հմտությունների զարգացման ուղղությամբ ձեռնարկվող քայլերում։

Զեկուցողը հիշեցրեց, որ անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել նոր ՀՊՉ-ների ներդրման գործնական գործընթացին և շարունակել 4-րդ և 9-րդ դասարաններում դասալսումների կազմակերպումն ու դրանց ընթացքում ի հայտ եկող հարցերի և խնդիրների վերաբերյալ քննարկումները։

*Արտահայտվեցին՝* Լ. Գրիգորյանը, Ս. Միրզոյանը։

Սոնա Միրզոյանը նշեց, որ անհրաժեշտ է շարունակել այն աշխատանքները, որոնք ուղղված են աշակերտների բանավոր գրագետ և ճիշտ խոսքի հմտությունների զարգացմանը՝ չանտեսելով նաև ուղղագրական խնդիրների բացահայտումն ու հաղթահարումը։

Լուսինե Գրիգորյանը նշեց, որ դասերը կազմակերպվել էին համագործակցային և ժամանակակից մեթոդների կիրառմամբ։ Նրա խոսքով՝ իրականացվել են բազմաբովանդակ աշխատանքներ՝ խմբային և անհատական ձևաչափերով, որտեղ ակնհայտ էին սովորողների համագործակցելու, քննադատական մտածողություն դրսևորելու և հանդուրժողականություն ցուցաբերելու կարողություններն ու հմտությունները։

Արտահայտվողները կարևորեցին, որ կատարված վերլուծությունները, քննարկումները և դիտարկումները արդյունավետ էին. հաջորդ դասալսումների ընթացքում մեծ մասամբ արդեն նկատվում էր նախորդիվ արձանագրված վրիպումների և թերությունների շտկումը։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին զեկուցումը, շարունակել փոխադարձ դասալսումներ իրականացնել, համագործակցել նաև այլ մ/մ ուսուցիչների հետ։

*Լսեցին 6.* 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի նոյեմբեր ամսվա աշխատանքների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկույցի ընթացքում ներկայացվեցին 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական գործունեության տարեկան ծրագրով նախատեսված այն միջոցառումները, որոնք իրականացվել են նոյեմբեր ամսվա ընթացքում։ Զեկուցողը շեշտեց, որ ինչպես նշված ժամանակահատվածում, այնպես էլ ուսումնական տարվա նախորդ

ամիսներին նախատեսված աշխատանքներն իրականացվել են ժամանակին և գործող նորմերին համապատասխան՝ ապահովելով գործընթացների հետևողականությունն ու կազմակերպվածությունը։

Ընդգծվեց, որ իրականացված գործունեությունն ունեցել է հստակ ուղղվածություն, իրականացվել է միասնական մոտեցմամբ և նպաստել է կրթական միջավայրի կայուն ձևավորմանը։ Միաժամանակ քննարկվեցին որոշ գործողությունների արդյունավետության բարձրացման հնարավորությունները՝ հետագա աշխատանքների որակական բարելավման նպատակով։

***Արտահայտվեցին՝*** ՄՄ անդամները

Ելույթ ունեցողները փաստեցին, որ ՈՒԴԱՏՊ-ով սահմանված բոլոր գործառույթներն ու միջոցառումները, որոնք առնչվել են մեթոդմիավորման կազմում ընդգրկված մանկավարժներին, իրականացվել են ամբողջական և պահանջներին համապատասխան։ Ընդգծվեց, որ աշխատանքների իրականացման ընթացքում որևէ բացթողում կամ թերացում չի արձանագրվել, իսկ ուսուցիչները դրսևորել են պատասխանատու վերաբերմունք, ակտիվ մասնակցություն և փոխհամագործակցության բարձր մակարդակ՝ նպաստելով ծրագրի նպատակների լիարժեք իրականացմանը։

Նշվեց նաև, որ իրականացվող գործունեությունն ունեցել է հստակ պլանավորված և արդյունավետ կազմակերպում, ինչը դրական ազդեցություն է ունեցել միջոցառումների որակի և ակնկալվող արդյունքների ապահովման վրա։ Ելույթ ունեցողների կարծիքով՝ ձևավորված այս համակարգված և արդյունավետ աշխատանքային մոտեցումը նպատակահարմար է շարունակել նաև առաջիկա ժամանակահատվածում՝ ամրապնդելով դրական փորձը և պահպանելով կայուն աշխատանքային միջավայրը։

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի նոյեմբեր ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Աբգարյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԱՐՎԵՍՏԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ
ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №5

«22» դեկտեմբերի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Աննա Աբգարյան (մ/մ նախագահ)
2. Ռոբերտ Արզումանյան
3. Սոնա Միրզոյան
4. Թամարա Հովհաննիսյան
5. Արտուր Հովսեփյան
6. Լուսինե Գրիգորյան

**Նիստին ներկա էր տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը**

## Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում։
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
2. Հաղորդում արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
3. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկում, վերլուծություն և ամփոփում։
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
4. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգում։
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
5. Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխություն և հաստատում։
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքը։
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
7. 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
8. 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկում։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
9. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) դոկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքներ։
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
10. Ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորում, տարակարգ, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներ։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
11. 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվություններ։
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
12. Դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորում։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

13. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

*Լսեցին 1.* Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման 5-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Հաղորդում՝ Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարման ընթացքն ու արդյունքները: Նա ամփոփեց նախորդ նիստում ընդունված որոշումների իրականացումը, մանրամասն անդրադարձավ կատարված աշխատանքներին՝ ընդգծելով դրանց արդյունավետությունն ու հետևողական իրականացումը: Նշվեց, որ մեթոդմիավորման կողմից նախատեսված բոլոր աշխատանքներն ու ընդունված որոշումները կատարվել են պատշաճ որակով և սահմանված ժամկետներում՝ ապահովելով աշխատանքների համակարգված և նպատակային ընթացքը:

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում կատարած դասալսումների քննարկման, վերլուծության և ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված դասալսումների վերաբերյալ տեղեկատվությունը: Նա ընդգծեց, որ ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է առավել հաճախ կազմակերպել փոխադարձ դասալսումներ, իրականացնել մասնագիտական քննարկումներ և դիտարկումներ, բացահայտել առկա թերությունները և դրանց շտկման համար ձեռնարկել համապատասխան ու նպատակային միջոցառումներ: Զեկուցողը նաև ամփոփ ներկայացրեց առաջին կիսամյակի ընթացքում իրականացված դասալսումների արդյունքները՝ նշելով դրանց նշանակությունը ուսուցման որակի շարունակական բարելավման գործում:

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները

Արտահայտվողներն իրենց դիտարկումներում ընդգծեցին դասերի կազմակերպման բարձր մակարդակը, կիրառվող դասավանդման մեթոդների բազմազանությունն ու արդիականությունը, ինչպես նաև սովորողների ակտիվ և հետաքրքրված ներգրավվածության աստիճանը: Նրանք ներկայացրին մի շարք կառուցողական առաջարկություններ՝ ուղղված ուսումնական

գործընթացի որակի բարձրացմանը և մեթոդական աշխատանքների արդյունավետության շարունակական բարելավմանը։
Կարևոր համարվեց դասապրոցեսի ընթացքում ճիշտ մեթոդների և հնարների նպատակային ու տեղին կիրառումը, որոնք ապահովում են բոլոր աշակերտների մասնակցությունը և նպաստում ուսումնառության արդյունավետության աճին։
Բացի այդ, արտահայտվողները շեշտեցին դասալսումների ընթացքում համագործակցային մոտեցումների կիրառման անհրաժեշտությունը՝ որպես մասնագիտական փորձի փոխանակման և փոխլրացման արդյունավետ միջոց։
Արդյունքների ամփոփման ընթացքում առանձնակի կարևորվեցին ուսուցիչների ցուցաբերած մասնագիտական մոտեցումները, ներկայացված առաջարկությունները, ինչպես նաև վեր հանված խնդիրների քննարկման կառուցողական և արդյունավետ ձևաչափերը։

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված դասալսումների արդյունքները (կցվում է ամփոփագիրը)։

***Լսեցին 4.*** 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում էլեկտրոնային մատենավարության վարման վիճակի ստուգման արդյունքները՝ անդրադառնալով մատյանում արձանագրված թերություններին և բացթողումներին։ Նա ընդգծեց, որ անհրաժեշտ է խստորեն պահպանել գնահատման համակարգում կատարված փոփոխությունները, իրականացնել գնահատումը սահմանված ժամկետների շրջանակում և բացառապես ամփոփիչ աշխատանքների ընթացքում՝ ապահովելով գործընթացի օրինաչափությունն ու հստակությունը։
Առստամյանն առաջարկեց պարբերաբար իրականացնել բանավոր նախազգուշացումներ մեթոդմիավորման անդամների համար՝ մատենավարության ընթացքում թույլ տրված բացթողումների վերաբերյալ, ինչը կնպաստի գրանցումների ճշգրտության բարձրացմանը, ինչպես նաև գնահատման գործընթացի թափանցիկության և վերահսկելիության ապահովմանը։

***Արտահայտվեցին՝*** Ա. Աբգարյանը

Արտահայտվողը նշեց, որ պետք է վերահսկել ուսուցիչների ամենօրյա կատարվող աշխատանքները՝ կապված մատենավարության հետ, հորդորեց լինել առավել ուշադիր, չշեղվել ՕԹՊ-ներից, լինել հետևողական՝ աշխատանքը կատարելուց հետո կրկին ստուգել մատյանը, իսկ խնդիրների դեպքում համագործակցել մ/մ նախագահի, տնօրենի տեղակալի, իսկ անհրաժեշտության դեպքում նաև էլեկտրոնային կառավարման և դասավանդման մասնագետների հետ։

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի էլեկտրոնային մատենավարության ստուգման ամփոփման մասին ինֆորմացիան։

***Լսեցին 5.*** Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանման փոփոխության և հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց երկրորդ կիսամյակում արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման շրջանակում կատարված ժամաբաժանման

փոփոխությունները՝ կապված «Երաժշտություն» և «Կերպարվեստ» առարկաների հետ։

Ուսումնական պլանում իրականացված բոլոր փոփոխությունները ներկայացնելիս Աննա Աբգարյանը մանրամասն անդրադարձավ «Երաժշտություն» և «Կերպարվեստ» առարկաների ժամաքանակի փոփոխությանը՝ ընդգծելով, որ 7-րդ դասարաններում նշված առարկաների դասաժամերը փոխադարձաբար փոխանցվում են միմյանց։

***Արտահայտվեցին՝*** Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ նախնական դասաբաշխումը կատարելիս, ինչպես նաև 2025–2026 ուսումնական տարվա մեկնարկին, քննարկվել է ժամաբաժանման հարցը՝ հաշվի առնելով 2–9-րդ դասարաններում առարկայացանկի հնարավոր փոփոխությունները և նոր ՀՊՉ պահանջները, որոնց համապատասխան կազմվել է 2025–2026 ուսումնական տարվա ուսումնական պլանը և հաստատվել ժամաբաժանման համար։

***Որոշեցին՝*** Հավանության արժանացնել 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ժամաբաժանումը (կցվում է)։

***Լսեցին 6.*** 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքի մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՈՒՊ-ների և դիտարկման թերթիկների լրացման վերաբերյալ իրականացված աշխատանքների մասին տեղեկատվությունը՝ ընդգծելով, որ դրանք կատարվել են գործող կարգավորումների և սահմանված պահանջների լիարժեք համապատասխանությամբ։ Նա հավելեց, որ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքների կազմակերպման և արդյունավետ իրականացման ընթացքում իրականացվում է շարունակական և ակտիվ համագործակցություն ԳՏՄԱԿ-ի հետ։

Զեկուցողը նշեց, որ սահմանված կարգի համաձայն՝ երկու ամիսը մեկ անգամ կազմակերպվում են բազմակողմ քննարկումներ, որոնց մասնակցում են ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչները, ուսուցիչները, ուսուցչի օգնականները, հատուկ մանկավարժը և ԿԱՊԿՈՒ աշակերտների ծնողները։ Քննարկումներին մասնակցում է նաև տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը։ Այս հանդիպումների ընթացքում մանրամասն ուսումնասիրվում և դիտարկվում են համապատասխան փաստաթղթերը, գնահատվում են իրականացված աշխատանքների արդյունավետությունը, ինչպես նաև առանձնակի ուշադրություն է դարձվում աշակերտների ձեռքբերումներին, զարգացման դինամիկային և արձանագրված առաջընթացին։

***Արտահայտվեցին՝*** Ս. Ավանեսյանը։

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքների ճիշտ և համակարգված կազմակերպումը, ինչպես նաև ծնող–ուսուցիչ–աջակցության թիմի արդյունավետ ու շարունակական համագործակցությունը՝ ընդգծելով, որ ԱՈՒՊ-ի շրջանակներում սահմանված նպատակների լիարժեք իրագործումն ու դիտարկման թերթիկների պատշաճ, ժամանակին և ճշգրիտ լրացումը չափազանց կարևոր նշանակություն ունեն ուսուցման որակի բարձրացման և աշակերտների համակողմանի զարգացման ապահովման գործընթացում։

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների լրացման մասին ինֆորմացիան։

***Լսեցին 7.*** 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ տնօրենի, մեթոդմիավորման նախագահի և մեթոդմիավորումների անդամների կողմից իրականացված դասալսումների արդյունքում պարզվել է, որ 2–9-րդ դասարաններում ուսուցիչները հիմնականում ապահովում են նոր ՀՊՉ-ների պահանջների կատարումը: Դասալսված ուսուցիչների մոտ առկա էին օրացուցային-թեմատիկ պլանները և օրվա դասի պլանները՝ էլեկտրոնային տարբերակով, իսկ մատենավարությունը կազմակերպված էր այդ պլաններին լիարժեք համապատասխան: Զեկուցողը շեշտեց, որ օրացուցային-թեմատիկ պլաններում հստակ սահմանված էին տվյալ թեմայի նպատակներն ու վերջնարդյունքները, ինչը հնարավորություն է տալիս ուսուցիչներին հստակ պատկերացնել դասի ավարտին ապահովվելիք արդյունքները:

Միաժամանակ արձանագրվեց, որ որոշակի դժվարություններ դեռևս նկատվում են առարկայական ծրագրով նախատեսված կարողությունների զարգացման ապահովման հարցում, հատկապես այն դասարաններում, որտեղ աշակերտների խտությունը բարձր է: Աշակերտների մեծ թվաքանակի պայմաններում ուսուցիչները դժվարանում են բոլոր սովորողներին հավասարաչափ ներգրավել դասապրոցեսին և բավարար ուշադրություն դարձնել նրանց ինքնուրույն աշխատանքի կազմակերպմանը: Այդուհանդերձ, փոքր խմբերով դասարաններում ուսուցիչները հաջողությամբ ապահովում են դասի վերջնարդյունքները՝ օրացուցային-թեմատիկ պլանների պահանջներին համապատասխան:

Զեկուցողը կրկին անդրադարձավ նաև գնահատման գործընթացին՝ նշելով, որ նախորդ քննարկումներից հետո նկատելի առաջընթաց է արձանագրվել. ուսուցիչները հիմնականում տիրապետում են գնահատման նոր համակարգին, հետևում են սահմանված պահանջներին, իսկ աշակերտների գնահատումն իրականացվում է բացառապես ամփոփիչ աշխատանքների ընթացքում:

Եզրափակելով՝ զեկուցողն առաջարկեց շարունակել ուշադրության կենտրոնում պահել առարկայական ծրագրերով նախատեսված կարողությունների զարգացումը, թեմաների վերջնարդյունքների ապահովումը, աշակերտների ակտիվ և հավասարաչափ ներգրավվածությունը ուսումնական գործընթացում, ինչպես նաև գնահատման նոր համակարգի հետևողական կիրառումը՝ դասերի արդյունավետության և սովորողների ձեռքբերումների շարունակական բարելավումն ապահովելու նպատակով:

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները

Արտահայտվողներն իրենց ելույթներում ընդգծեցին, որ դասալսումների արդյունքները ցույց են տալիս՝ ուսուցիչները հիմնականում բավարարում են նոր ՀՊՉ-ների պահանջները, իսկ օրացուցային-թեմատիկ պլանների և մատենավարության ճիշտ ու համակարգված կազմակերպումը էականորեն նպաստում է դասերի արդյունավետ իրականացմանը:

Նրանք նաև նկատեցին, որ մեծ խմբերով դասարաններում որոշակի դժվարություններ են առաջանում աշակերտների հավասար ներգրավվածությունն ու ծրագրով նախատեսված կարողությունների զարգացումն ապահովելու հարցում, ինչի արդյունքում անհրաժեշտ է կիրառել լրացուցիչ, բազմազան և համագործակցային մեթոդներ՝ բոլոր սովորողների մասնակցությունը բարձրացնելու նպատակով:

Արտահայտվողները կարևորեցին գնահատման նոր համակարգին լիարժեք տիրապետելու անհրաժեշտությունը և շեշտեցին, որ ծրագրով նախատեսված կարողությունների զարգացմանը, թեմաների վերջնարդյունքների ապահովմանը և ուսուցման արդյունավետության շարունակական բարձրացմանը ուղղված աշխատանքները կմնան առաջնահերթություն:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին ինֆորմացիան:

*Լսեցին 8.* 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետվությունների քննարկման արդյունքները՝ ըստ առարկաների և դասարանների: Նա նշեց, որ նախագծերը նպատակաուղղված են եղել սովորողների ստեղծագործական, հետազոտական և հաղորդակցական կարողությունների զարգացմանը, միջառարկայական կապերի ամրապնդմանը, ինչպես նաև կրթական չափորոշիչների պահանջների իրագործմանը: Անդրադարձ կատարվեց, որ առաջին կիսամյակի ընթացքում իրականացվել է 26 նախագծային աշխատանք, որոնցից 7-րդ դասարաններում՝ 9, 8-րդ դասարաններում՝ 9, իսկ 9-րդ դասարաններում՝ 8 աշխատանք, որոնք իրականացվել են հետևյալ առարկաներից՝ «Ֆրանսերեն», «ԹԳՀԳ», «Հայաստանի պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Աշխարհագրություն», «Գրականություն», «Կերպարվեստ», «Հայոց լեզու», «Արվեստ», «Տեխնոլոգիա», «Երաժշտություն», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Անգլերեն», «Կենսաբանություն», «Ռուսաց լեզու», «Քիմիա» և «Ֆիզիկա»:

Նախագծային աշխատանքները ղեկավարել են համապատասխան առարկաների ուսուցիչները, իսկ իրականացրել են 7–9-րդ դասարանների այն աշակերտները, որոնք ընդգրկված են եղել համապատասխան խմբերում: Հիմք ընդունելով «Հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման կարգը», մեթոդմիավորման որոշումն ու մանկավարժական խորհրդի որոշումը, նախագծերի պաշտպանությունները կազմակերպվել են առարկայական հանձնաժողովների միջոցով, որոնց կազմում ընդգրկվել են տվյալ առարկայի կամ առարկաների ուսուցիչները, մեթոդական միավորման նախագահը, նույն կամ հարակից առարկայի ուսուցիչները և տնօրենի տեղակալը։

Զեկուցողը հավելեց, որ կարգի համաձայն՝ բոլոր նախագծերն ու դրանց արդյունքները հրապարակվել են դպրոցի կայքում՝ ստեղծելով առանձին էջ, հասանելիության և հանրայնացման նպատակով։

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամներ և նախագծային աշխատանքների ղեկավարներ

Նախագծային աշխատանքների ղեկավարները հանգամանալից ներկայացրին իրենց հաշվետվությունները, պրոդուկտները, իրականացման ընթացքում առաջացած խնդիրները և ձեռքբերումները:

Մեթոդական միավորման անդամները քննարկեցին ներկայացված հաշվետվությունները՝ մանրամասն անդրադառնալով նախագծային աշխատանքների թեմատիկ համապատասխանությանը, սահմանված ուսումնական նպատակների իրագործման աստիճանին, սովորողների ակտիվ և նպատակային ներգրավվածությանը, կիրառված մեթոդների արդյունավետությանը և ստացված արդյունքներին։

Քննարկման ընթացքում շեշտադրվեց նախագծերի հստակ նպատակային ուղղվածությունը, խմբային աշխատանքի արդյունավետ և համակարգված կազմակերպումը, ինչպես նաև ներկայացման ձևաչափերի բազմազանությունը, որոնք էականորեն նպաստեցին աշակերտների ստեղծագործական, հետազոտական և գործնական հմտությունների զարգացմանը, ինքնուրույն մտածողության ձևավորմանն ու համագործակցային կարողությունների ամրապնդմանը։

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում իրականացված նախազգծային աշխատանքների հաշվետվությունները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման:

***Լսեցին 9.*** 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) դեկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների կատարման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա.Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում դեկտեմբեր ամսվա ընթացքում և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն: Նշվեց, որ արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման կողմից տարեկան պլանով նախատեսված ուսումնադաստիարակչական միջոցառումները նշված ժամանակահատվածում իրականացվել են հիմնականում ամբողջական, նպատակային և սահմանված ժամկետներում:

Մասնավորապես կազմակերպվել են հայրենասիրական, իրավական, մշակութային, ճանաչողական, լեզվամտածողական և քաղաքացիական դիրքորոշում ձևավորող, ինչպես նաև արժեքային դաստիարակությանը միտված բաց դասեր, դաս-միջոցառումներ, քննարկումներ, այցելություններ, գործնական աշխատանքներ, դասալսումներ, ինչպես նաև աշխատանքային տետրերի և դասագրքերի ստուգումներ՝ համապատասխան գործող կրթական չափորոշիչների պահանջներին:

Ներկայացվեց, որ առաջին կիսամյակի ընթացքում ՈՒԴԱՏՊ-ով նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են պատշաճ և ամբողջական ձևով, իսկ կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվել է դպրոցի պաշտոնական կայքում՝ ապահովելով իրականացված գործունեության թափանցիկությունն ու հանրայնացումը (կցվում է էլեկտրոնային տարբերակով):

Զեկուցողը նաև անդրադարձավ ուսումնական գործընթացում ժամանակակից մեթոդների և նոր մոտեցումների կիրառմանը, ինչպես նաև աշակերտների ուսումնառության որակի բարձրացմանն ուղղված իրականացված աշխատանքներին: Միաժամանակ առանձնացվեցին որոշ գործողությունների արդյունավետության բարձրացման հնարավոր ուղիները և առաջարկվեցին հետագա բարելավման ուղղություններ, ինչը կնպաստի ուսումնական գործընթացի շարունակական կատարելագործմանը:

***Արտահայտվեցին՝*** ՄՄ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ իրականացված միջոցառումները զգալիորեն նպաստել են սովորողների ակտիվության, խոսքային, վերլուծական և գործնական հմտությունների զարգացմանը: Քննարկման ընթացքում առանձնակի ուշադրություն դարձվեց կատարված աշխատանքների արդյունավետությանը, առկա դժվարություններին և դրանց հաղթահարման հնարավոր ուղիներին երկրորդ կիսամյակում:

Ընդգծվեց, որ ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման ընթացքում չեն արձանագրվել բացթողումներ կամ թերակատարումներ, իսկ ուսուցիչները ցուցաբերել են բարձր պատասխանատվություն, նախաձեռնողականություն և համագործակցային մոտեցում՝ ապահովելով ծրագրի նպատակների լիարժեք իրականացումը: Միաժամանակ շեշտվեց, որ աշխատանքներն իրականացվել են կանխատեսելի, համակարգված և արդյունավետ մեթոդաբանությամբ, ինչը նպաստել է միջոցառումների որակյալ կազմակերպմանը և սահմանված արդյունքների լիարժեք ապահովմանը:

Արտահայտվողները խորհուրդ տվեցին նման համակարգված և հետևողական մոտեցումը պահպանել նաև հետագա ամիսներին՝ պահպանելով ձեռք բերված դրական դինամիկան և ձևավորված աշխատանքային մշակույթը։ Կարևորվեց նաև առաջին կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքների համապատասխանությունը տարեկան պլանին և դրանց ընդհանուր արդյունավետությունը, ինչը ամրապնդում է ուսումնադաստիարակչական գործընթացի ռազմավարական նշանակությունը։

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի դեկտեմբեր ամսվա և առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների կատարման մասին տեղեկատվությունը։

***Լսեցին 10.*** Ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորում, տարակարգ, ԿՋՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումներ։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչների հերթական վերապատրաստման գործընթացին ակտիվ մասնակցությունը, ընդգծելով, որ ինչպես 2024–2025, այնպես էլ 2025–2026 ուսումնական տարում կատարվել է ուսուցիչների կարիքի գնահատում, որի արդյունքում 2024–2025 ուսումնական տարում հերթական ատեստավորման է մասնակցել 15 ուսուցիչ, ովքեր հաջողությամբ ավարտել են 1-ին շրջափուլը և 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում մասնակցել 2-րդ շրջափուլին։ 2025–2026 ուսումնական տարում հերթական ատեստավորմանը մասնակցել է 11 ուսուցիչ, որոնք նույնպես հաջողությամբ ավարտել են 1-ին շրջափուլը։

Զեկուցողը նաև նշեց, որ 2025 թվականին դպրոցի մանկավարժական անձնակազմը ակտիվ մասնակցություն է ունեցել ԿՋՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակերպվող դասընթացներին՝ ընդհանուր առմամբ իրականացվել է 12 դասընթաց, որոնց մասնակցել է 33 մանկավարժ։ Նա անդրադարձավ նաև «Էսսեագրություն» թեմայով վերապատրաստման դասընթացին, որի նպատակն էր մեթոդմիավորման ուսուցիչներին նախապատրաստել 9-րդ դասարաններում «Գրականություն» և «Հայաստանի պատմություն» առարկաներից միասնական ավարտական քննությանը։

Կամավոր ատեստավորման արդյունքների վերաբերյալ զեկուցողը նշեց, որ 2025 թվականին դպրոցի ուսուցիչները արձանագրել են բարձր արդյունքներ։ Առաջին անգամ մասնակցած Կարինե Մալխասյանը, Տաթևիկ Փարսադանյանը, Ռիտա Շալունցը, Կարինե Արզումանյանը, Ռուզաննա Խաչատրյանը և Հայկ Օհանյանը ցուցաբերել են բարձր արդյունքներ, ինչը հաստատեց դպրոցի ուսուցչական կազմի բարձր մասնագիտական ներուժը։

Զեկուցողը ներկայացրեց նաև 2023–2025 թվականներին կամավոր ատեստավորմանը մասնակցած դպրոցի 18 ուսուցիչներին՝ մանրամասն ընդգծելով նրանց մասնագիտական ուղղվածությունը. Մալխասյան Կարինե – դասվար, Փարսադանյան Տաթևիկ – դասվար, Շալունց Ռիտա – դասվար, Արզումանյան Կարինե – «Տեխնոլոգիա», Խաչատրյան Ռուզաննա – «Հասարակագիտություն», Օհանյան Հայկ – «Ֆիզիկա», Ղուլյան Օլյա – «ԹԳՀԳ», Գրիգորյան Թագուհի – «Անգլերեն», Հայրապետյան Մարիամ – «Ռուսաց լեզու», Գյուրջյան Շահանե – «Ռուսաց լեզու», Առստամյան Ալլա – «Մաթեմատիկա», Սարգսյան Լիլիթ – «Հայոց լեզու», Սարգիսջանյան Անուշ – «Հայոց լեզու», Պողոսյան Կարինե – դասվար, Ջավահիրյան Իրինա – դասվար, Պետրոսյան Մարգարիտա – «Ռուսաց լեզու», Հարությունյան Սոնա – «Հայոց լեզու», Աբգարյան Աննա – «Ֆիզկուլտուրա»։

Նշվեց, որ Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ուսուցիչները 2023-2025 թվականներին ցուցաբերել են բարձր ակտիվություն և բարձր արդյունքներ կամավոր ատեստավորման գործընթացում։ Ընդհանուր առմամբ, դպրոցի ուսուցչական անձնակազմի 41 տոկոսը մասնակցել է

կամավոր ատեստավորմանը, ստանալով բարձր գնահատականներ: Արդյունքների հիման վրա ուսուցիչների համար սահմանվել է 200 000 դրամ դրույքաչափ, ինչպես նաև 30–50 տոկոս հավելավճար:

Զեկուցողն անդրադարձ կատարեց նաև ուսուցիչների տարակարգի շնորհմանը՝ նշելով, որ 2025 թվականի ընթացքում դպրոցի մանկավարժներից 3-րդ աստիճանի տարակարգ են ստացել «ԹԳՀԳ» առարկայի ուսուցչուհի Օլյա Ղուլյանը և «Մաթեմատիկա» առարկայի ուսուցչուհի Ալլա Զեյնալյանը, իսկ ավելի վաղ 1-ին աստիճանի տարակարգ էր ստացել «Հայոց լեզու» առարկայի ուսուցչուհի Սոնա Հարությունյանը:

Զեկուցողն ընդգծեց, որ ուսուցիչների կամավոր ատեստավորումը ծառայում է նրանց մասնագիտական գիտելիքների բացահայտմանը, մինչդեռ տարակարգը չափանիշ է, որը ցույց է տալիս այդ գիտելիքների կիրառումը դասարանում՝ նկատի ունենալով մանկավարժական մոտեցումների և համապատասխան հմտությունների առկայությունը:

Զեկուցողն ընդգծեց, որ 2025 թվականի կամավոր ատեստավորմանը մասնակցել են նաև «Պատմություն» առարկայի ուսուցչուհի Մերի Դանիելյանն ու դասվար Արուս Դոլունցը, որոնք չեն հաղթահարել 60 տոկոսի շեմը, ուստի 2026 թվականին նրանց համար նախատեսվում է իրականացնել կարիքի գնահատում, որից հետո նրանք պետք է մասնակցեն հերթական ատեստավորմանը՝ 1-ին մակարդակով:

***Արտահայտվեցին՝*** ՄՄ անդամները:

Արտահայտվողներն ընդգծեցին, որ դասերի արդյունավետության բարձրացման հիմնարար պայմաններից է արդի մեթոդների և նորարարական դասավանդման հնարների հստակ իմացությունը և նպատակային կիրառումը: Նրանք շեշտեցին, որ պարտադիր վերապատրաստման գործընթացն անփոխարինելի նշանակություն ունի. այն հնարավորություն է տալիս ուսուցիչներին ծանոթանալ կրթական նորամուծություններին, ժամանակին հարմարվել ընթացիկ փոփոխություններին, խթանել նոր փորձառությունների փոխանակումը և կատարելագործել մասնագիտական մոտեցումները:

Միաժամանակ առանձնացվեց ուսուցիչների ակտիվ մասնակցությունը կամավոր ատեստավորման գործընթացին: Արտահայտվողները նշեցին, որ ատեստավորումը ոչ միայն նպաստում է մասնագիտական կարողությունների զարգացմանը, այլև խթանում է ինքնակրթության շարունակական գործընթացը, նոր մեթոդների գործնական կիրառումը դասասենյակում և ընդհանուր առմամբ դասավանդման որակի շարունակական բարձրացումը: Նման համակարգված մոտեցումը նպաստում է ոչ միայն ուսուցիչների պրոֆեսիոնալ աճին, այլև սովորողների արդյունավետ ներգրավվածության ապահովմանը և ուսումնական նպատակների լիարժեք իրականացմանը:

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն ուսուցիչների հերթական և կամավոր ատեստավորման, տարակարգի, ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպված վերապատրաստումների մասին զեկուցումը (կցվում է):

***Լսեցին 11.*** 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվությունների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի №216-Ն որոշման համաձայն՝ դպրոցի բոլոր խմբավարները ներկայացրել են ամսական և կիսամյակային հաշվետվություններ, որոնցում մանրամասն ներկայացվել են 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում իրականացված աշխատանքները:

Ընդհանուր առմամբ, յուրաքանչյուր խմբավար պատրաստել է 4 ամսական հաշվետվություն սեպտեմբեր–դեկտեմբեր ամիսների համար, ինչպես նաև մեկ կիսամյակային հաշվետվություն, որտեղ ամփոփված են նշված չորս ամիսների ընթացքում իրականացված աշխատանքները՝ ընդգծելով ձեռքբերումներն ու

արձանագրված առաջընթացը, տրամադրելով հստակ պատկեր ուսումնական գործընթացի կազմակերպման մասին և գնահատելով խմբի գործունեության արդյունավետությունը։

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ խմբավարների հաշվետվությունները ծառայում են որպես կարևոր միջոց ուսումնական գործընթացի ընթացքի գնահատման և հետագա պլանների ճշգրիտ և նպատակային կազմակերպման համար։ Նրանք նաև մատնանշեցին, որ աշխատողի գործունեության համակարգային վերահսկողությունն ու մշտական գնահատումը հնարավորություն է տալիս տեսնել իրականացված առաջընթացը, գնահատել ձեռքբերումները և նախանշել բարելավման ուղղություններ՝ նպաստելով աշխատանքների արդյունավետության շարունակական բարձրացմանը և ուսումնադաստիարակչական ծրագրերի առավել ամբողջական իրականացմանը։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված խմբակների ամսական և կիսամյակային հաշվետվությունների մասին զեկուցումը և հաստատել հաշվետվությունները։

*Լսեցին 12.* Դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ 2025–2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից դպրոցում նախատեսվում է ստեղծել երեխաների պաշտպանության հատուկ խումբ, որի կազմում ընդգրկվելու են դպրոցի տնօրինության և մանկավարժական անձնակազմի ներկայացուցիչներ, ներառական կրթության բաժնի աշխատակիցներ, ԳՏՄԱԿ-ի ներկայացուցիչներ, ծնողներ և շահագրգիռ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ։ Խմբի հիմնական նպատակն է պաշտպանել երեխաների իրավունքները, ապահովել անվտանգ և աջակցող ուսումնական միջավայր, արձագանքել ցանկացած ռիսկային կամ խնդիր առաջացնող իրավիճակի և իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ՝ միաժամանակ բարձրացնելով ուսուցիչների և ծնողների գիտակցությունը երեխաների իրավունքների վերաբերյալ։

Զեկուցողը շեշտեց, որ խմբի գործունեությունը հիմնված է երեխաների պաշտպանությունը առաջնահերթություն դարձնելու սկզբունքի վրա՝ ապահովելով նրանց ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական անվտանգությունը։ Նման մոտեցում ներկայում պիլոտային հիմքով փորձարկվում է հանրապետության մի շարք դպրոցներում, որտեղ մշակվում և կիրառվում են երեխաների իրավունքների պաշտպանության նոր մեթոդներ, ինչպես նաև գնահատվում է դրանց արդյունավետությունը։ Պիլոտային փուլը հաջողությամբ ավարտելուց հետո նախատեսվում է մոտեցումը ընդլայնել և ներդնել բոլոր հանրապետական դպրոցներում՝ ստեղծելով անվտանգ, ներառական և պաշտպանված կրթական միջավայր բոլոր աշակերտների համար։

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները

Արտահայտվողներն ընդգծեցին, որ երեխաների պաշտպանության խմբի ստեղծումը կարևոր և արդյունավետ քայլ է, որը ուղղված է երեխաների իրավունքների պաշտպանությանը և անվտանգ ուսումնական միջավայրի ստեղծմանը։ Նրանք հավելեցին, որ նախաձեռնությունը կնպաստի երեխաների ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական անվտանգության բարձրացմանը, ուժեղացնի ուսուցիչների, ծնողների և այլ շահագրգիռ կողմերի համագործակցությունը, ինչպես նաև խթանի կրթական գործընթացում ներառական, աջակցող և ուշադրկալ վերաբերմունք դրսևորող մոտեցումների լայն կիրառումը։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն դպրոցում երեխաների պաշտպանության խմբի ձևավորման մասին զեկուցումը։

*Լսեցին 13.* 2025-2026 ուսումնական տարվա նախագծային աշխատանքների թեմաների, պլանների, թեմատիկ պլանների, ղեկավարների, մատյանների և հանձնաժողովների կազմի քննարկում:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Նիստի ընթացքում ներկայացվեց նախագծային ուսուցման կազմակերպման ընթացքը 2025–2026 ուսումնական տարվա առաջին կիսամյակում՝ այն դիտարկելով որպես սովորողների կարողությունների զարգացմանն ուղղված արդյունավետ կրթական գործիք: Ընդգծվեց, որ իրականացված աշխատանքները և ձևավորված փորձը հիմք են ստեղծում նախագծային ուսուցման առավել համակարգված և նպատակային շարունակության համար՝ հաշվի առնելով կրթության ժամանակակից պահանջները:

Զեկուցման շրջանակում նշվեց, որ մասնագիտական խմբերի համատեղ աշխատանքի արդյունքում մշակվել է նախագծային թեմաների համադրելի փաթեթ 7–9-րդ դասարանների համար՝ համապատասխան գործող կարգավորումների պահանջներին: Թեմաների նախնական հրապարակումը հնարավորություն է տվել ապահովելու ընտրության ազատություն, խթանելու սովորողների հետաքրքրությունը և նպաստելու նրանց ակտիվ մասնակցությանը նախագծային գործընթացին:

Անդրադարձ կատարվեց նաև նախագծային աշխատանքների իրականացման կազմակերպչական մոտեցումներին: Նշվեց, որ նախագծերը նախատեսված են իրականացնելու փոքր խմբերով՝ երեքից յոթ սովորողի մասնակցությամբ, ինչը նպաստում է համագործակցության, փոխադարձ պատասխանատվության և արդյունավետ հաղորդակցման հմտությունների ձևավորմանը: Խմբերի կազմավորումը իրականացվել է թեմաների հրապարակումից հետո՝ ուսուցիչների կողմից կիրառված հաղորդակցման ժամանակակից միջոցների շնորհիվ, ինչի արդյունքում ապահովվել է նախագծերի թեմաների և ղեկավարների հստակ ընտրությունը:

Զեկուցողը ներկայացրեց նաև ուսումնական խմբակների գործունեության և նախագծային աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունները հանրակրթական հիմնական, ընդհանուր և այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում: Առաջարկվեց նախագծային աշխատանքների եզրափակիչ փուլը կազմակերպել առարկայական հանձնաժողովների մասնակցությամբ՝ նպատակ ունենալով ապահովել բազմակողմանի մասնագիտական գնահատում: Նշվեց, որ հանձնաժողովների կազմում նպատակահարմար է ներառել առարկայի կամ հարակից առարկաների ուսուցիչներին, մեթոդական միավորման ղեկավարին և տնօրենի տեղակալին:

Եզրափակիչ հատվածում ներկայացվեց նախագծային աշխատանքների արդյունքների գնահատման մեխանիզմը՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված նախագծային ուսուցման հայեցակարգի և ուսուցիչների վերապատրաստման մոդուլի վերաբերյալ իրավական կարգավորումների: Ընդգծվեց, որ գնահատման գործընթացում առաջնահերթ է չափորոշիչների հստակ կիրառումը, միասնական մոտեցման ապահովումը և բոլոր սովորողների նկատմամբ արդար ու հավասար վերաբերմունքի պահպանումը:

*Արտահայտվեցին՝* Ա. Աբգարյանը, Ս. Միրզոյանը:

Քննարկմանը մասնակցողները շեշտեցին, որ ուսումնական խմբակների և նախագծային գործունեության արդյունավետ կազմակերպումը հնարավոր է միայն գործող նորմատիվ պահանջների հետևողական կիրառման պայմաններում: Ընդգծվեց, որ այդ պահանջները ծառայում են որպես ուսումնական գործընթացի կառուցվածքային հիմք՝ նպաստելով կրթական միջավայրի բազմակողմանի զարգացմանը և սովորողների նախաձեռնողականության ու մասնակցության բարձրացմանը:

Միևնույն ժամանակ անդրադարձ եղավ նախագծային աշխատանքի կազմակերպման ընթացակարգում իրականացված փոփոխություններին, որոնք գնահատվեցին որպես ժամանակին և նպատակային իրականացված բարեփոխումներ: Նշվեց, որ նոր մոտեցումները հնարավորություն են տալիս առավել նպատակային ձևով կազմակերպել սովորողների հետազոտական և ստեղծագործական գործունեությունը, զարգացնել ինքնուրույն մտածելու կարողությունները, ինչպես նաև ամրապնդել համագործակցության և թիմային աշխատանքի մշակույթը: Ընդհանուր գնահատմամբ՝ իրականացված փոփոխությունները դրական ազդեցություն են ունենում ուսումնական գործընթացի որակի բարելավման և դրա արդյունավետության շարունակական բարձրացման վրա:

***Որոշեցին՝*** Հավանության արժանացնել 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախագծային աշխատանքների թեմաները, պլանները, թեմատիկ պլանները, ղեկավարներին, մատյանները և հանձնաժողովների կազմը (կցվում է):

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Աբգարյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԱՐՎԵՍՏԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №6

«29» հունվարի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Աննա Աբգարյան (մ/մ նախագահ)
2. Ռոբերտ Արզումանյան
3. Թամարա Հովհաննիսյան
4. Սոնա Միրզոյան
5. Արտուր Հովսեփյան
6. Լուսինե Գրիգորյան

**Նիստին ներկա էին տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:**

## Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
2. Հաղորդում արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
3. 2-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողություն:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
5. 8-9-րդ դասարաններում «Արվեստ» առարկայի դրվածքի ուսումնասիրություն:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
6. ԱՈՒՊ-ներ, դիտարկման թերթիկներ:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
8. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբերի-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
9. «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)

***Լսեցին 1.*** Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման 6-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Հաղորդում՝ արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման դեկտեմբեր ամսվա օրակարգի կատարողականը։ Նա ամփոփեց մեթոդմիավորման նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ իրականացված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված բոլոր աշխատանքները կատարվել են ժամանակին և լիարժեք։

*Արտահայտվեցին՝* Ս. Միրզոյան, Ա. Հովսեփյան։

Արտահայտվողներն ընդգծեցին քննարկված հարցերի կարևորությունն ու անհրաժեշտությունը՝ նշելով, որ իրականացված դասալսումների արդյունքների քննարկումները, ուսումնական ծրագրերի կատարողականի ստուգումները և էլեկտրոնային մատենավարության ստուգումների վերլուծությունը նպաստում են ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը։

Նշվեց, որ այս գործընթացները հնարավորություն են տալիս ժամանակին բացահայտել առաջացած խնդիրները, իրականացնել համապատասխան վերլուծություն և ձեռնարկել նպատակային միջոցառումներ՝ դրանք շտկելու և վերացնելու ուղղությամբ, ապահովելով կրթության որակի շարունակական բարելավում։

*Որոշեցին՝* Նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին զեկուցումն ընդունել ի գիտություն։

*Լսեցին 3.* 2-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց նոր չափորոշիչների ներդրման գործընթացում նախորդ ժամանակահատվածում ի հայտ եկած խնդիրները՝ ընդգծելով դրանց ազդեցությունը ուսումնական գործընթացի կազմակերպման վրա։ Միևնույն ժամանակ նա նշեց, որ աշխատանքի ընթացքում ուսուցիչների մոտ շարունակաբար առաջանում են տարբեր հարցեր, ուստի անհրաժեշտ է համարում այս նիստի շրջանակում ևս քննարկել նոր ՀՊՉ-ների ներդրման հետ կապված խնդիրներն ու հարցադրումները և ընդունել համապատասխան որոշումներ՝ հետագա աշխատանքները առավել արդյունավետ և համակարգված կազմակերպելու նպատակով։

Բացի այդ, զեկուցողը կարևորեց 2–9-րդ դասարաններում անցկացված դասալսումների և դրանց շուրջ կազմակերպված քննարկումների ընթացքում բարձրաձայնված հարցերի վերաբերյալ տրվող պարզաբանումների նշանակությունը՝ ընդգծելով, որ դրանք նպաստում են ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը և նոր չափորոշիչների պահանջների առավել լիարժեք իրականացմանը։

*Արտահայտվեցին՝* Ա. Աբգարյանը

Աննա Աբգարյանը նշեց, որ նոր չափորոշչային դասարաններում առկա խնդիրները հիմնականում վերաբերում են գնահատման նոր սկզբունքների կիրառմանը։ Սակայն, նրա խոսքով, նախորդ ուսումնական տարվա համեմատ՝ 2025–2026 ուսումնական տարում նկատվում է էական առաջընթաց, և բացթողումները զգալիորեն նվազել են, քանի որ ուսուցիչների մեծ մասը արդեն կարողանում է արդյունավետ կիրառել նոր գնահատման համակարգը։

Միևնույն ժամանակ նա ընդգծեց, որ այն ուսուցիչների համար, ովքեր դեռևս ունեն որոշակի դժվարություններ կամ հարցեր, շարունակաբար իրականացվում են աջակցող աշխատանքներ մեթոդմիավորումների և տնօրինության կողմից։ Այդ գործընթացը նպատակ ունի ապահովել

մասնագիտական զարգացումը, բարձրացնել դասավանդման որակը և նպաստել նոր չափորոշիչների լիարժեք ու համակարգված ներդրմանը կրթական գործընթացում։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում 2-9-րդ դասարաններում նոր ՀՊՉ ներդրման գործընթացի ընթացիկ վերահսկողության հետ կապված զեկուցումը։

*Լսեցին 4.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը կարևորեց ուսուցիչների կողմից իրականացված աշխատանքները մատենավարության ոլորտում՝ ընդգծելով դրանց նշանակությունը ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման տեսանկյունից։ Նա նշեց, որ հետևողական վերահսկողության և համակարգված աշխատանքի արդյունքում արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման ուսուցիչների մոտ նկատվել է թերությունների կտրուկ նվազում։

Զեկուցողի խոսքով՝ այս առաջընթացը վկայում է ուսուցիչների պատասխանատու մոտեցման, մասնագիտական աճի և համագործակցության արդյունավետության մասին՝ նպաստելով կրթական որակի շարունակական բարելավմանը։

*Արտահայտվեցին՝* Թ. Հովհաննիսյանը, Ռ. Արզումանյանը

Արտահայտվողները նշեցին, որ իրականացվող հետևողական և նպատակային աշխատանքները զգալիորեն նպաստում են ուսուցիչների կարողությունների զարգացմանը էլեկտրոնային մատենավարության ոլորտում։ Նրանք ընդգծեցին, որ շարունակական աջակցությունն ու վերահսկողությունը օգնում են հաղթահարել առկա դժվարությունները և ապահովել համակարգի ճիշտ կիրառումը։

Միևնույն ժամանակ կարևորվեց ամենօրյա գրանցումների պարտաճանաչ իրականացումը, քանի որ այդ մոտեցումը նվազեցնում է անճշտություններ թույլ տալու հավանականությունը, ապահովում տվյալների ճշգրտությունն ու ամբողջականությունը և նպաստում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին զեկուցումը, շարունակել վերահսկողությունը։

*Լսեցին 5.* 8-9-րդ դասարաններում «Արվեստ» առարկայի դրվածքի ուսումնասիրություն։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը նշեց, որ «Արվեստ» առարկան առանձնանում է իր բովանդակային և դաստիարակչական կարևոր նշանակությամբ՝ նպաստելով սովորողների գեղագիտական ճաշակի, ստեղծագործական մտածողության և հոգևոր արժեքների ձևավորմանը։ Նրա խոսքով՝ գեղագիտական դաստիարակության հիմքում ընկած է հուզական ոլորտի զարգացումը, որն ապահովում է սովորողների ամբողջական, ներդաշնակ և բազմակողմանի զարգացումը։

Զեկուցողն ընդգծեց, որ «Արվեստ» առարկան իր յուրահատկության, բազմաբովանդակության և ուսումնական այլ առարկաների հետ փոխկապակցվելու լայն հնարավորությունների շնորհիվ կոչված է խթանելու սովորողների մտավոր և հոգևոր ներուժի բացահայտումն ու զարգացումը, նպաստելու նրանց աշխարհայացքի ձևավորմանը, ինչպես նաև գեղեցիկը և ներդաշնակը տեսնելու, զգալու, գնահատելու, պահպանելու և ստեղծագործաբար արարելու ցանկության ու կարողության ձևավորմանը։

Միաժամանակ նա հավելեց, որ դասի արդյունավետ կազմակերպման հիմնական գրավականներն են դասի նպատակի հստակ ձևակերպումը, ուսուցման մեթոդների և հնարների ճիշտ ու նպատակային ընտրությունը,

ինչպես նաև գործող չափորոշչային պահանջների լիարժեք և հետևողական իրագործումը, որոնք միասին ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակը։

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ «Արվեստ» առարկայի խորքային, համակարգված և ամբողջական իմացությունը կարևոր դեր ունի ապագա անհատի և քաղաքացու բարոյական կերպարի, արժեքային համակարգի և աշխարհայացքի ձևավորման գործընթացում։ Նրա խոսքով՝ այս առարկան նպաստում է սովորողների անձնական զարգացմանը, ստեղծագործական մտածողության ձևավորմանը և հասարակական պատասխանատվության գիտակցմանը։

Միևնույն ժամանակ նա ընդգծեց, որ դասի արդյունավետ և հաջող ընթացքը պայմանավորված է դասավանդման ժամանակակից և նորարարական մեթոդների կիրառմամբ, չափորոշչային պահանջների հետևողական պահպանմամբ, ինչպես նաև հստակ նպատակային և համակարգված պլանավորմամբ, որոնք միասին ապահովում են կրթական գործընթացի բարձր որակն ու արդյունավետությունը։

*Որոշեցին՝* 8-9-րդ դասարաններում «Արվեստ» առարկայից իրականացնել դասավանդման դրվածքի ուսումնասիրություն

*Լսեցին 6.* ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց նախորդող ժամանակահատվածում ԿԱՊԿՈՒ աշակերտների անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ) մշակման և իրականացման, ինչպես նաև դիտարկման թերթիկների լրացման վերաբերյալ իրականացված աշխատանքների մասին տեղեկատվությունը։ Նա շեշտեց, որ բոլոր գործընթացներն իրականացվել են գործող կարգավորումների և սահմանված պահանջների լիարժեք պահպանմամբ։

Միաժամանակ զեկուցողը ընդգծեց, որ իրականացված աշխատանքները նպաստել են կրթական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը, սովորողների անհատական կարիքների բացահայտմանը և նրանց կրթական առաջընթացի հետևողական գնահատմանը։

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը։

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց աշխատանքի ճիշտ և համակարգված կազմակերպումը, ինչպես նաև ծնող–ուսուցիչ–աջակցության թիմի արդյունավետ համագործակցությունը՝ որպես ԿԱՊԿՈՒ աշակերտների կրթական գործընթացի հաջող իրականացման կարևոր նախապայման։ Նա ընդգծեց ՕԹՊ-ում սահմանված նպատակների հետևողական իրագործման անհրաժեշտությունը ԱՈՒՊ-ի շրջանակներում՝ ապահովելով յուրաքանչյուր սովորողի անհատական կարիքներին համապատասխան կրթական աջակցություն։

Միաժամանակ նա կարևորեց դիտարկման թերթիկների պատշաճ, ժամանակին և ճշգրիտ լրացումը, ինչը հնարավորություն է տալիս գնահատել սովորողների առաջընթացը, բացահայտել առկա դժվարությունները և համապատասխան քայլեր ձեռնարկել կրթական գործընթացի շարունակական բարելավման համար։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն նախորդող ժամանակահատվածում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների մասին տեղեկատվությունը։

*Լսեցին 7.* 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց ՈՒԴԱՏՊ-ին համապատասխան հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունը՝ ընդգծելով դրանց համակարգված, նպատակաուղղված և հետևողական բնույթը: Նա նշեց, որ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ուսումնական գործընթացի կազմակերպման շարունակական վերահսկողություն, ինչպես նաև կազմակերպվել են անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ՝ մարզային օլիմպիադաներին սովորողների պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով:

Անվտանգ և ապահով կրթական միջավայրի տարվա ամսական միջոցառումների ժամանակացույցին համապատասխան իրականացվել է «Ճանաչենք մեր դպրոցը. անվտանգ մուտք և ելք» թեմայով բաց դաս, որը կազմակերպվել էր դպրոցի Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նախագահ Աննա Աբգարյանի և «ՆԶՊ» առարկայի ուսուցիչ Արտուր Հովսեփյանի նախաձեռնությամբ՝ ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության Գորիսի հրշեջ-փրկարարական ջոկատի հետ համագործակցությամբ: Միջոցառման նպատակն էր բարձրացնել սովորողների իրազեկվածությունը անվտանգ վարքագծի կանոնների վերաբերյալ և ձևավորել պատասխանատու վերաբերմունք արտակարգ իրավիճակների նկատմամբ:

Բացի այդ, անցկացվել է Հայոց բանակի օրվան նվիրված դաս-միջոցառում, ինչպես նաև իրականացվել են կրթական ծրագրերի արդյունավետ իրականացմանն ուղղված բազմաբնույթ աշխատանքներ, որոնք նպաստել են կրթության որակի բարձրացմանը, ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը և կրթական միջավայրի շարունակական զարգացմանը:

***Արտահայտվեցին՝*** ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ իրականացված միջոցառումներն էականորեն նպաստել են սովորողների ակտիվության, հաղորդակցական, խոսքային և վերլուծական հմտությունների զարգացմանը: Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց կատարված աշխատանքների արդյունավետությանը, առկա դժվարություններին և դրանց հաղթահարման հնարավոր ուղիներին երկրորդ կիսամյակում՝ շեշտադրելով շարունակական բարելավման կարևորությունը:

Ընդգծվեց, որ աշխատանքների իրականացման ընթացքում չեն արձանագրվել բացթողումներ կամ թերակատարումներ, իսկ ուսուցիչները ցուցաբերել են բարձր պատասխանատվություն, նախաձեռնողականություն և համագործակցային մոտեցում՝ ապահովելով ծրագրի նպատակների լիարժեք իրագործումը: Միաժամանակ նշվեց, որ ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացվել են կանխատեսելի, կազմակերպված և արդյունավետ մեթոդաբանությամբ, ինչը նպաստել է միջոցառումների որակյալ կազմակերպմանը և սահմանված արդյունքների ապահովմանը:

Արտահայտվողների կարծիքով՝ նման համակարգված և հետևողական մոտեցումը նպատակահարմար է շարունակել նաև հետագա ամիսներին՝ պահպանելով ձեռք բերված դրական դինամիկան, ամրապնդելով ձևավորված աշխատանքային մշակույթը և բարձրացնելով կրթական գործընթացի ընդհանուր արդյունավետությունը: Կարևորվեց նաև առաջին կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքների համապատասխանությունը տարեկան պլանին և դրանց բարձր գնահատված արդյունքները:

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հունվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների կատարման մասին տեղեկատվությունը:

*Լսեցին 8.* 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի սեպտեմբերի-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում սեպտեմբեր–դեկտեմբեր ամիսներին իրականացված աշխատանքների հաշվետվությունները։ Նա մանրամասն ներկայացրեց աշխատանքների ընթացքը, անցկացված դասալսումները, ուսուցիչներին տրամադրված մեթոդական աջակցությունները, ինչպես նաև տարբեր կրթական և դաստիարակչական նախաձեռնությունները՝ ընդգծելով դրանց նպատակաուղղվածությունն ու արդյունավետությունը։

Զեկուցման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև նոր ՀՊՉ-ի ներդրման արդյունքներին՝ ըստ կրթական աստիճանների, էսսեագրության ոլորտում իրականացված աշխատանքներին և ուսումնական նախագծերի իրականացման ընթացքին։ Միաժամանակ առանձնակի ուշադրություն դարձվեց դպրոցի կառավարման արդյունավետությանը՝ ընդգծելով դրա կարևոր դերը ուսումնադաստիարակչական գործընթացների համակարգված կազմակերպման, կրթական ծրագրերի որակի բարձրացման և կրթական միջավայրի շարունակական զարգացման գործում։

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամներ

Արտահայտվողներն ընդգծեցին, որ ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացվել են նախապես հաստատված պլանի համաձայն, ինչը ապահովել է ուսումնական գործընթացի նպատակային և համակարգված կազմակերպումը։ Նրանց կարծիքով, միջոցառումների արդյունավետությունը հիմնականում պայմանավորված էր ուսուցիչների պատասխանատու, հետևողական և ակտիվ մոտեցմամբ՝ ինչպես նախապատրաստական, այնպես էլ իրականացման փուլերում։

Միաժամանակ ընդգծվեց, որ այս մոտեցումը նպաստել է աշակերտների համար արդյունավետ և անվտանգ ուսումնադաստիարակչական միջավայր ստեղծելուն, բարձրացրել դասերի որակը, աջակցել անձի բազմակողմանի զարգացմանը և ամրապնդել կրթական ծրագրերի համընդհանուր արդյունավետությունը։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն ԿԳՄՍ նախարարությանն ուղարկված ուսումնադաստիարակչական աշխատանքների սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունը (կցված է էլեկտրոնային տարբերակով)։

*Լսեցին 9.* «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանը նախատեսում է դիմել ուսուցչի տարակարգ ստանալու համար։ Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նրա կատարած աշխատանքի նկատմամբ իրականացնել անհատական վերահսկողություն և մասնագիտական գործունեության մշտադիտարկում։

Զեկուցողն առաջարկեց դպրոցի հաջորդ մանկավարժական խորհրդի նիստում քննարկել հարցը և տնօրենին առաջարկել հաջորդող ժամանակահատվածում Աննա Աբգարյանի մոտ իրականացնել կատարած աշխատանքի արդյունավետության գնահատման մշտադիտարկումներ։ Մասնավորապես նախատեսվում է ուշադրություն դարձնել էլեկտրոնային մատյանի պատշաճ լրացմանը, ուսումնական նախագծերի համապատասխանությանը տվյալ թեմաներին, ինչպես նաև սովորողների բնութագրերի կազմման գործընթացին։

Զեկուցողը նաև առաջարկեց ձևավորել կատարած աշխատանքի արդյունավետության գնահատման մշտադիտարկման հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

- տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյան,
- ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյան,
- հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյան (որը ժամանակավորապես փոխարինում է արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահ Աննա Աբգարյանին՝ որպես տարակարգի դիմող ուսուցիչ),
- տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահ Ռիտա Շալունց,
- «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցիչ Ռոբերտ Արզումանյան,
- «ՆԶՊ» առարկայի ուսուցիչ Արտուր Հովսեփյան։

Զեկուցողը նաև առաջարկեց իրականացված մշտադիտարկումների արդյունքների մասին զեկուցել արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման հաջորդ նիստում, իսկ մշտադիտարկումների արձանագրությունների և փաստարկների ամբողջական փաթեթը ներկայացնել դպրոցի տնօրենին։

***Արտահայտվեցին՝*** ՄՄ անդամները, Արմիդա Գևորգյանը

Արտահայտվողները ողջունեցին Աննա Աբգարյանի կողմից ուսուցչի տարակարգ ստանալու նպատակով դիմելու նախաձեռնությունը՝ ընդգծելով, որ դա վկայում է ուսուցչի մասնագիտական զարգացման ձգտման և պատասխանատու մոտեցման մասին։ Նրանք կարևորեցին նաև կատարած աշխատանքի արդյունավետության գնահատման մշտադիտարկումների իրականացումը՝ նշելով, որ նման գործընթացը նպաստում է ուսուցչի մասնագիտական գործունեության առավել համակարգված գնահատմանը և փորձի տարածմանը։

Ռոբերտ Արզումանյանը նշեց, որ մշտադիտարկումների իրականացումը հնարավորություն կտա ավելի խորությամբ ուսումնասիրել ուսուցչի աշխատանքային գործունեությունը, ինչպես նաև բացահայտել արդյունավետ մեթոդներն ու փորձը, որոնք հետագայում կարող են կիրառվել նաև մյուս ուսուցիչների կողմից։

Արտուր Հովսեփյանը կարևորեց հանձնաժողովի ձևավորումը և ընդգծեց, որ նման ձևաչափով իրականացվող մշտադիտարկումները կնպաստեն գնահատման գործընթացի օբյեկտիվությանը և թափանցիկությանը։

Արմիդա Գևորգյանը նշեց, որ գործընկերային աջակցությունն ու փորձի փոխանակումը կարևոր նշանակություն ունեն ուսուցչի մասնագիտական աճի համար և համոզմունք հայտնեց, որ իրականացվող մշտադիտարկումները կնպաստեն նաև դասավանդման որակի բարձրացմանը։

Արտահայտվողները, ընդհանուր առմամբ, դրական գնահատեցին ներկայացված առաջարկը և կարևորեցին դրա իրականացումը սահմանված կարգով։

***Որոշեցին՝*** 1. Մանկավարժական խորհրդի նիստում քննարկել «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողության և մասնագիտական գործունեության մշտադիտարկում՝ ուշադրություն դարձնելով էլեկտրոնային մատյանի պատշաճ լրացմանը, ուսումնական նախագծերի համապատասխանությանը տվյալ թեմաներին, ինչպես նաև սովորողների բնութագրերի կազմման գործընթացին։

2. Մանկավարժական խորհրդին առաջարկել ձևավորել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյան,
- ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյան,

- հումանիտար առարկաների մեթոդմիավորման նախագահ Մերի Դանիելյան (որը ժամանակավորապես փոխարինում է արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախագահ Աննա Աբգարյանին՝ որպես տարակարգի դիմող ուսուցիչ),
- տարրական դասարանների մեթոդմիավորման նախագահ Ռիտա Շալունց,
- «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցիչ Ռոբերտ Արզումանյան,
- «ՆԶՊ» առարկայի ուսուցիչ Արտուր Հովսեփյան։

3. Իրականացված մշտադիտարկումների արդյունքների մասին զեկուցել մանկավարժական խորհրդի, արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման հաջորդող նիստում, իսկ մշտադիտարկումների արձանագրությունների և փաստարկների ամբողջական փաթեթը ներկայացնել դպրոցի տնօրենին։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Աբգարյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԱՐՎԵՍՏԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №7

«24» փետրվարի 2026թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Աննա Աբգարյան (մ/մ նախագահ)
2. Ռոբերտ Արզումանյան
3. Սոնա Միրզոյան
4. Թամարա Հովհաննիսյան
5. Արտուր Հովսեփյան
6. Լուսինե Գրիգորյան

**Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:**

## Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
2. Հաղորդում արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
3. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
4. 8-9-րդ դասարաններում «Արվեստ» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) փետրվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

***Լսեցին 1.*** Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման 7-րդ նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
Զեկուցողը ներկայացրեց արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգով նախատեսված հարցերի կատարողականը: Նա ամփոփեց նախորդ նիստի արդյունքները՝ անդրադառնալով իրականացված աշխատանքներին, քննարկված խնդիրներին և ընդունված որոշումների իրականացման ընթացքին: Նշվեց, որ մեթոդմիավորման կողմից նախատեսված աշխատանքները կազմակերպվել և իրականացվել են պատշաճ

կերպով, իսկ ընդունված որոշումները կատարվել են սահմանված ժամկետներում և համապատասխան որակով։

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

*Լսեցին 3.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցի մասին։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային մատյաններում արձանագրված բացթողումները՝ կարևորելով էլեկտրոնային մատենավարության կանոնավոր ստուգման ընթացքը և լրացման սահմանված կանոնների պահպանման անհրաժեշտությունը։ Նա շեշտեց, որ մատենավարությունը պետք է իրականացվի օրացուցային-թեմատիկ պլաններին համապատասխան՝ ապահովելով ուսումնական գործընթացի ճիշտ և համակարգված արտացոլումը։

Զեկուցողը նաև նշեց, որ ի տարբերություն նախորդ ուսումնական տարիների, 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատյաններում արձանագրված թերությունները զգալիորեն նվազել են և չեն նկատվում բոլոր ուսուցիչների մոտ, ինչը վկայում է մատենավարության կազմակերպման և վերահսկողության գործընթացի բարելավման մասին։

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները, Ս. Ավանեսյանը

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց ուսուցիչների կողմից աշխատանքային պարտականությունների բարեխիղճ և պատասխանատու կատարումը։ Նա նշեց, որ մշտապես պատրաստ է աջակցել ուսուցիչներին՝ էլեկտրոնային մատենավարության ընթացքում արձանագրված թերությունների և բացթողումների շտկման գործընթացում։ Սերգեյ Ավանեսյանը նաև ընդգծեց, որ մատենավարությունը պետք է կազմակերպվի օրացուցային-թեմատիկ պլանների և թեմատիկ հաջորդականության պահպանմամբ՝ ապահովելով ուսումնական գործընթացի ճիշտ արտացոլումը։

Միաժամանակ նա համաձայնեց զեկուցողի դիտարկման հետ՝ նշելով, որ 2025–2026 ուսումնական տարում էլեկտրոնային մատյաններում արձանագրված բացթողումները զգալիորեն նվազել են՝ նախորդ տարիների համեմատ, իսկ վարչական միջամտությունների անհրաժեշտություն առհասարակ չի առաջացել։

Արտահայտվողները ևս ընդգծեցին, որ օրացուցային-թեմատիկ պլանները (ՕԹՊ) էականորեն նպաստում են մատենավարության պատշաճ կազմակերպմանը։ Նրանց խոսքով՝ ՕԹՊ-ները ուսուցիչներին օգնում են ավելի համակարգված և հետևողական ձևով կազմակերպել դասերի գրանցումն ու ապահովել թեմատիկ համապատասխանությունը, ինչի մասին բազմիցս նշվել է նաև նախորդ քննարկումների ընթացքում։

*Որոշեցին՝* Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն։ Տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանին հանձնարարել պարբերաբար իրականացնել էլեկտրոնային մատյանի դիտարկումներ, բացթողումներ ունեցող ուսուցիչներին տեղեկացնել դրանց մասին և առաջարկել ողջամիտ ժամանակահատված՝ դրանք վերացնելու համար։

*Լսեցին 4.* 8-9-րդ դասարաններում «Արվեստ» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան )

Զեկուցողը ներկայացրեց «Արվեստ» առարկայի դասավանդման գործընթացի ուսումնասիրության արդյունքները։ Նշվեց, որ դասերը կազմակերպվում են ուսումնական ծրագրին համապատասխան՝ պահպանելով օրացուցային-թեմատիկ պլանների համապատասխանությունը։ Դասապրոցեսը

իրականացվում է նոր չափորոշչային պահանջներին համապատասխան մեթոդներով և մանկավարժական հնարներով։

Ընդգծվեց, որ դասերի ընթացքում կիրառվում են ստեղծագործական և գործնական առաջադրանքներ, կազմակերպվում են խմբային և անհատական աշխատանքներ, քննարկումներ, ինչպես նաև օգտագործվում են ՏՀՏ գործիքներ, որոնք նպաստում են սովորողների ակտիվ մասնակցությանը, հետաքրքրվածության բարձրացմանը և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը։

Անդրադարձ կատարվեց նաև սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը, ստեղծագործական կարողությունների զարգացմանը և արվեստի միջոցով մշակութային արժեքների ընկալմանը։ Նշվեց, որ դասերի ընթացքում կարևոր տեղ են զբաղեցնում գործնական աշխատանքները, որոնք նպաստում են սովորողների ինքնարտահայտմանը, երևակայության և ստեղծագործական մտածողության զարգացմանը։

Միաժամանակ ընդգծվեց, որ անհրաժեշտ է շարունակական ուշադրություն դարձնել սովորողների ստեղծագործական, վերլուծական և քննադատական մտածողության զարգացմանը, ինչպես նաև խրախուսել նրանց մասնակցությունը տարբեր մշակութային և ստեղծագործական նախաձեռնություններին։

Քննարկումներին և դասալսումներին մասնակցել են տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, մեթոդմիավորման նախագահը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը և մեթոդմիավորման անդամ ուսուցիչները։ Դասալսումների նպատակն էր ծանոթանալ սովորողների գիտելիքների մակարդակին, գնահատել դասերի կազմակերպման արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում աջակցել ուսուցիչներին առաջացած խնդիրների լուծման գործում։

***Արտահայտվեցին՝*** Թ. Հովհաննիսյանը, Ս. Ավանեսյանը, Ս. Միրզոյանը։

Արտահայտվողները կարևորեցին «Արվեստ» առարկայի նշանակությունը սովորողների գեղագիտական դաստիարակության, ստեղծագործական մտածողության զարգացման, ինչպես նաև մշակութային արժեքների պահպանման և փոխանցման գործընթացում։ Նշվեց, որ առարկան կարևոր դեր ունի սովորողների երևակայության, ինքնարտահայտման կարողությունների և գեղարվեստական ընկալման ձևավորման գործում։

Սերգեյ Ավանեսյանն ընդգծեց, որ դասերի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է առավել հաճախ կիրառել ստեղծագործական առաջադրանքներ, լրացուցիչ մեթոդական նյութեր և բազմազան ուսուցման մեթոդներ։ Նրա խոսքով՝ ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը նպաստում է սովորողների ակտիվ ներգրավվածությանը և հետաքրքրվածության աճին։

Միաժամանակ Սերգեյ Ավանեսյանը նշեց, որ դպրոցում իրականացվող հիմնանորոգման աշխատանքների և երկհերթ ուսուցման պայմաններում երբեմն առաջանում են որոշակի դժվարություններ՝ կապված պաստառների, տեսողական նյութերի և ՏՀՏ գործիքների կիրառման հետ։ Այնուամենայնիվ, նրա խոսքով, ուսուցիչները նույնիսկ նման պայմաններում կարողանում են պատշաճ կերպով կազմակերպել դասապրոցեսը և ապահովել ուսուցման արդյունավետ ընթացքը։

Սերգեյ Ավանեսյանը նաև ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ «Արվեստ» առարկայի համար 8–9-րդ դասարաններում դասագիրք նախատեսված չէ։ Այդ պատճառով, ուսուցչի կողմից տեսական գիտելիքների մատուցման գործընթացը առավել համակարգված, մատչելի և հետաքրքիր դարձնելու նպատակով նպատակահարմար կլինի ստեղծել ուսումնառության նյութերի ժողովածու, որը կհամապատասխանի առարկայի չափորոշչին, ուսումնական ծրագրին և թեմատիկ պլանի հաջորդականությանը։

Թամարա Հովհաննիսյանը կարևորեց փոխադարձ դասալսումների կազմակերպումը՝ նշելով, որ դա կնպաստի ուսուցիչների միջև փորձի փոխանակմանը, արդյունավետ մեթոդների տարածմանը և դասավանդման որակի բարձրացմանը։

Սոնա Միրզոյանը նշեց, որ անհրաժեշտ է շարունակական ուշադրություն դարձնել սովորողների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքների կազմակերպմանը՝ խրախուսելով նրանց նախաձեռնողականությունը և նպաստելով գեղարվեստական կարողությունների զարգացմանը։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 8-9-րդ դասարաններում «Արվեստ» առարկայի դրվածքի ուսումնասիրության ամփոփման մասին ներկայացված տեղեկատվությունը։

*Լսեցին 5.* 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) փետրվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ։

(զեկուցող՝ Ա.Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում փետրվար ամսվա ընթացքում իրականացված և ընթացիկ աշխատանքների ամփոփ պատկերը։ Նշվեց, որ արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների ուսուցիչների կողմից իրականացվել են մի շարք կազմակերպչական, ուսումնական և դաստիարակչական աշխատանքներ ու միջոցառումներ։

Հատուկ ուշադրություն է դարձվել սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ֆիզիկական պատրաստվածության բարձրացմանը և առողջ ապրելակերպի խթանմանը, ինչպես նաև հայրենասիրական դաստիարակությանը և անվտանգության կանոնների վերաբերյալ գիտելիքների ամրապնդմանը։

Միաժամանակ անդրադարձ կատարվեց սովորողների ակտիվ մասնակցությանը տարբեր դպրոցական միջոցառումներին, մրցույթներին և առարկայական նախաձեռնություններին, ինչը նպաստել է նրանց ստեղծագործական և սոցիալական ակտիվության բարձրացմանը։

Զեկուցողը նշեց, որ ՆԴՎ-ի շրջանակում դպրոցի ղեկավար կազմի՝ տնօրենի, տնօրենի տեղակալի, մեթոդմիավորման նախագահի և զեկուցողի կողմից իրականացվել են վերահսկողական աշխատանքներ։ Նշվեց, որ այդ գործընթացը նպաստել է ուսումնական և դաստիարակչական աշխատանքների առավել համակարգված կազմակերպմանը, առկա խնդիրների ժամանակին բացահայտմանը և դրանց արդյունավետ լուծմանը՝ ընդհանուր առմամբ բարելավելով դպրոցում իրականացվող աշխատանքների որակը։

Ընդհանուր առմամբ նշվեց, որ փետրվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները կատարվել են նախատեսված ծավալով և կազմակերպվել պատշաճ մակարդակով՝ նպաստելով սովորողների համակողմանի զարգացմանը, արժեքային համակարգի ձևավորմանը և ուսումնական մոտիվացիայի բարձրացմանը։

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը, Ա. Աբգարյանը։

Սերգեյ Ավանեսյանը կարևորեց արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների շրջանակում իրականացված աշխատանքների նշանակությունը սովորողների համակողմանի զարգացման գործում։ Նա նշեց, որ կազմակերպված միջոցառումները և դասապրոցեսի արդյունավետ կազմակերպումը նպաստել են սովորողների ակտիվ մասնակցությանը, ստեղծագործական մտածողության զարգացմանը և առողջ ապրելակերպի ձևավորմանը։

Աննա Աբգարյանը նույնպես դրական գնահատեց կատարված աշխատանքները՝ ընդգծելով, որ փետրվար ամսվա ընթացքում իրականացված միջոցառումները եղել են նպատակային և արդյունավետ: Նա անդրադարձավ նաև սովորողների ներգրավվածության մակարդակին և կարևորեց նմանատիպ նախաձեռնությունների շարունակական իրականացումը՝ սովորողների հետաքրքրությունն ու ակտիվ մասնակցությունը առավել բարձրացնելու նպատակով:

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի փետրվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները:

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Աբգարյան

**«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԱՐՎԵՍՏԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №8**

«24» մարտի 2026թ. ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Աննա Աբգարյան (մ/մ նախագահ)
2. Ռոբերտ Արզումանյան
3. Թամարա Հովհաննիսյան
4. Սոնա Միրզոյան
5. Արտուր Հովսեփյան
6. Լուսինե Գրիգորյան

**Նիստին ներկա էին տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:**

## Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
2. Հաղորդում արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
3. Փոխադարձ դասալսումների կազմակերպում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մարտ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
6. «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու ամփոփման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հունվար-փետրվար ամիսների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

***Լսեցին 1.*** Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման 8-րդ նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
Զեկուցողը ներկայացրեց արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի

օրակարգի կատարողականը՝ հանգամանորեն անդրադառնալով իրականացված աշխատանքներին: Նա ամփոփեց նախորդ նիստի արդյունքները՝ ընդգծելով, որ ծրագրավորված միջոցառումները, դասալսումները, քննարկումները և մեթոդական աշխատանքները իրականացվել են լիարժեք և արդյունավետ կերպով: Զեկուցողը նշեց, որ բոլոր նախատեսված հանձնարարականներն ու որոշումները կատարվել են սահմանված ժամկետներում և պատշաճ մակարդակով՝ նպաստելով ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը:

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները:

Արտահայտվողներն ընդհանուր առմամբ դրական գնահատեցին մեթոդմիավորման կատարած աշխատանքները՝ նշելով, որ նախատեսված միջոցառումները իրականացվել են կազմակերպված և նպատակային կերպով: Նրանք ընդգծեցին, որ իրականացված աշխատանքները նպաստել են ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, սովորողների ակտիվ մասնակցության ապահովմանը և դասավանդման որակի բարելավմանը: Միաժամանակ առաջարկվեց շարունակել աշխատանքները նույն հետևողականությամբ՝ կարևորելով նոր մեթոդների կիրառումը և փորձի փոխանակման ընդլայնումը:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* Փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը կարևորեց փոխադարձ դասալսումների դերը՝ ընդգծելով, որ դրանք արդյունավետ գործիք են ուսուցիչների մասնագիտական զարգացման, փորձի փոխանակման և համագործակցային մթնոլորտի ձևավորման համար: Նա նշեց, որ անհրաժեշտ է ստեղծել փոխվստահության և աջակցող միջավայր, որտեղ յուրաքանչյուր ուսուցիչ կարող է ներկայացնել իր փորձը, քննարկել առաջացած դժվարությունները և ստանալ մասնագիտական աջակցություն:

Զեկուցողը նաև շեշտեց, որ ուսուցիչները պետք է կիրառեն բազմազան մեթոդներ և մոտեցումներ՝ նպաստելու սովորողների հետաքրքրությունների ձևավորմանը, ինչպես նաև նրանց ինքնուրույն մտածողության և վերլուծական կարողությունների զարգացմանը: Ընդգծվեց, որ ժամանակակից կրթական գործընթացում առաջնային է սովորողի ակտիվ ներգրավվածությունը և ստեղծագործական մտածողության խթանումը:

Միաժամանակ առաջարկվեց յուրաքանչյուր դասալսումից հետո պարտադիր կազմակերպել քննարկումներ՝ մեթոդմիավորման ուսուցիչների մասնակցությամբ: Նշվեց, որ նման քննարկումները հնարավորություն են տալիս վերլուծել դասի արդյունավետությունը, բացահայտել ուժեղ և բարելավման ենթակա կողմերը, ինչպես նաև մշակել գործնական քայլեր՝ ուսուցման որակի բարձրացման ուղղությամբ:

Զեկուցողը նաև հիշեցրեց նոր ՀՊՉ-ների ներդրման գործընթացի կարևորության մասին՝ ընդգծելով, որ անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել դրանց գործնական կիրառմանը: Առանձնահատուկ ընդգծվեց 2-9-րդ դասարաններում դասալսումների կազմակերպման և դրանց ընթացքում արձանագրված հարցերի ու խնդիրների շուրջ շարունակական քննարկումների իրականացումը՝ ապահովելու համար կրթական գործընթացի արդյունավետ և նպատակային զարգացումը:

*Արտահայտվեցին՝* Թ. Հովհաննիսյանը, Ս. Միրզոյան

Թամարա Հովհաննիսյանը նշեց, որ պետք է շարունակել աշխատանքները, որոնք ուղղված են աշակերտների բանավոր գրագետ, ճիշտ խոսելու կարողությունների զարգացմանը, չմոռանալով նաև ուղղագրական խնդիրների մասին:

Սոնա Միրզոյանը նշեց, որ դասերն անց են կացվել համագործակցային և արդի մեթոդների կիրառմամբ, կատարվել են բազմաբովանդակ աշխատանքներ՝ խմբային, անհատական, որտեղ ակնհայտ էր սովորողների համագործակցելու, քննադատելու հանդուրժողականության կարողություններն ու հմտությունները:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն փոխադարձ դասալսումների կազմակերպման մասին զեկուցումը, շարունակել փոխադարձ դասալսումներ իրականացնել, համագործակցել նաև մյուս մեթոդական միավորումների ուսուցիչների հետ:

*Լսեցին 4.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց էլեկտրոնային մատենավարության ստուգման արդյունքները՝ նշելով, որ արձանագրվել են որոշակի թերություններ: Նա մասնավորապես ընդգծեց, որ մինչև մարտ ամիսը մի շարք ուսուցիչների մոտ մատյաններում առկա են եղել բացթողումներ, այդ թվում՝ դասերի թեմաների չլրացման դեպքեր: Զեկուցողը շեշտեց, որ նման բացթողումները պետք է սեղմ ժամկետում վերացվեն՝ ապահովելով մատենավարության պատշաճ վարումը:
Միաժամանակ անդրադարձ կատարվեց նոր չափորոշչային դասարաններում ամփոփումների գնահատականների ուշ փոխանցման խնդիրներին: Նշվեց, որ արձանագրվել են դեպքեր, երբ գնահատականները չեն մուտքագրվել սահմանված ժամկետներում, ինչը խաթարում է ուսումնական գործընթացի կազմակերպվածությունը:
Զեկուցողը հատուկ ընդգծեց կարգապահության և սահմանված պահանջների պահպանման անհրաժեշտությունը՝ հիշեցնելով, որ ընթացիկ գնահատականները պետք է մուտքագրվեն առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ ամփոփիչ գնահատականները՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Նա հորդորեց բոլոր ուսուցիչներին լինել առավել հետևողական և պատասխանատու՝ բացառելու նմանատիպ բացթողումները հետագայում:

*Արտահայտվեցին՝* Ս. Ավանեսյանը

Արտահայտվողը կարևորեց էլեկտրոնային մատենավարության նկատմամբ ամենօրյա վերահսկողության անհրաժեշտությունը՝ նշելով, որ համակարգված և հետևողական հսկողությունը կօգնի ժամանակին բացահայտել և շտկել հնարավոր թերությունները՝ խուսափելով հետագա խնդիրներից: Նա ընդգծեց, որ նման մոտեցումը նպաստում է նաև կարգով սահմանված պահանջների լիարժեք պահպանմանը:
Միաժամանակ արտահայտվողը հիշեցրեց մատենավարության վարման կարգի հիմնական դրույթները և հորդորեց ուսուցիչներին լինել առավել ուշադիր և պատասխանատու գրանցումների իրականացման ընթացքում՝ ապահովելով տվյալների ճշգրտությունն ու ամբողջականությունը:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն էլեկտրոնային մատենավարության ընթացիկ ստուգման արդյունքները:

*Լսեցին 5.* 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մարտ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) շրջանակում մարտ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների ամփոփ հաշվետվությունը՝ հանգամանորեն անդրադառնալով կատարված գործունեությանը:
Նշվեց, որ տվյալ ժամանակահատվածում կազմակերպվել և իրականացվել են բազմաբնույթ ուսումնադաստիարակչական միջոցառումներ՝ ուղղված

սովորողների հայրենասիրական, գեղագիտական, բարոյական և քաղաքացիական դաստիարակության ձևավորմանը: Մասնավորապես, անցկացվել են դասղեկական ժամեր, թեմատիկ զրույցներ, ճանաչողական և դաստիարակչական միջոցառումներ՝ նվիրված Մարտի 8-ին, ինչպես նաև կազմակերպվել են առարկայական շաբաթներ և տարբեր կրթական նախաձեռնություններ:

Զեկուցողը նաև ընդգծեց, որ ուսուցիչների կողմից ակտիվորեն իրականացվել են արտադասարանական աշխատանքներ. սովորողների ներգրավմամբ կազմակերպվել են քննարկումներ, մրցույթներ և ստեղծագործական աշխատանքներ, որոնք նպաստել են նրանց հետաքրքրությունների զարգացմանը և ինքնարտահայտման խթանմանը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել սովորողների կարգապահության ամրապնդմանը, հաճախելիության վերահսկմանը, ինչպես նաև ծնողների հետ արդյունավետ համագործակցության ապահովմանը:

Ամփոփելով՝ նշվեց, որ իրականացված աշխատանքները եղել են նպատակային և արդյունավետ՝ զգալիորեն նպաստելով ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը և սովորողների ակտիվ մասնակցության ապահովմանը:

***Արտահայտվեցին՝*** Լ. Գրիգորյանը, Ռ. Արզումանյանը

Արտահայտվողները բարձր գնահատեցին մարտ ամսվա ընթացքում իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպվածությունն ու արդյունավետությունը՝ ընդգծելով դրանց դրական ազդեցությունը սովորողների համակողմանի դաստիարակության վրա: Նշվեց, որ անցկացված միջոցառումները նպաստել են սովորողների ակտիվության բարձրացմանը, համագործակցային հմտությունների ձևավորմանը և դպրոցական կյանքի աշխուժացմանը:

Միաժամանակ առաջարկվեց շարունակել նմանատիպ նախաձեռնությունները՝ ապահովելով սովորողների առավել լայն ընդգրկվածություն և առավել համակարգված մոտեցում: Կարևորվեց նաև ուսուցիչ-ծնող համագործակցության ամրապնդումը՝ որպես ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության կարևոր բաղադրիչ:

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն մարտ ամսվա ընթացքում իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքները գնահատել բավարար: Շարունակել աշխատանքները ըստ հաստատված տարեկան պլանի՝ առավել ուշադրություն դարձնելով սովորողների ակտիվ մասնակցության ապահովմանը, կարգապահության ամրապնդմանը և դաստիարակչական միջոցառումների բազմազանությանը:

***Լսեցին 6.*** «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանի կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն իրականացնելու ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանը նախատեսում է դիմել ուսուցչի տարակարգ ստանալու համար: Այդ կապակցությամբ նախորդող ժամանակահատվածում իրականացվել է նրա կատարած աշխատանքի նկատմամբ անհատական վերահսկողություն և մասնագիտական գործունեության մշտադիտարկում:

Տնօրենի հրամանով հաստատված հանձնաժողովի կողմից ձևավորվել է կատարած աշխատանքի արդյունավետության գնահատման նպատակով կատարված արձանագրությունների և փաստարկների փաթեթը, որը պետք է ներկայացվի մանկավարժական խորհրդի նիստում, ինչպես նաև տնօրենին՝ հաստատման:

***Արտահայտվեցին՝*** Հանձնաժողովի անդամները:

Հանձնաժողովի անդամները նշեցին, որ նախորդող ժամանակահատվածում իրականացրել են դիտարկումներ, որոնց արդյունքներն արձանագրված են համապատասխան ձևաթղթերի մեջ և կարող են ներկայացվել մանկավարժական խորհրդին՝ քննարկման, տնօրենին՝ հաստատման։

*Որոշեցին՝* «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչուհի Աննա Աբգարյանի կողմից կատարված աշխատանքի արդյունավետության գնահատման նպատակով ձևավորված արձանագրությունների և փաստարկների փաթեթը ներկայացնել մանկավարժական խորհրդի նիստում, ինչպես նաև տնօրենին՝ հաստատման (կցվում է անհատական վերահսկողության և մասնագիտական գործունեության մշտադիտարկման հանձնաժողովի անհատական վերահսկողության գործողությունների պլանի կատարողական հաշվետվությունը)։

*Լսեցին 7.* 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հունվար-փետրվար ամիսների հաշվետվությունների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025–2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի շրջանակում հունվար–փետրվար ամիսներին իրականացված աշխատանքների համապարփակ հաշվետվությունը՝ այն կառուցելով համակարգված և վերլուծական մոտեցման հիման վրա։ Ներկայացումը ընդգրկում էր գործունեության հիմնական ուղղությունները՝ շեշտադրելով դրանց նպատակային պլանավորումն ու արդյունավետ իրականացումը։

Անդրադարձ կատարվեց ուսումնադաստիարակչական գործընթացի ընդհանուր ընթացքին՝ առանձնացնելով կազմակերպված դասալսումները, տրամադրված մեթոդական աջակցությունը, ինչպես նաև ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված նախաձեռնությունները։ Ընդգծվեց, որ իրականացված աշխատանքները զգալիորեն նպաստել են ուսուցման որակի բարձրացմանը և դասավանդման մեթոդների արդիականացմանը։

Առանձին ուշադրություն դարձվեց նոր ՀՊՉ-ների ներդրման գործընթացին՝ ըստ կրթական աստիճանների։ Նշվեց, որ աշխատանքները կրել են հետևողական բնույթ՝ ուղղված չափորոշիչների արդյունավետ կիրառմանը, միաժամանակ արձանագրվել են որոշ խնդիրներ, որոնք գտնվում են շարունակական վերլուծության և կարգավորման փուլում։

Զեկուցողը կարևորեց նաև էսսեագրության զարգացման ուղղությամբ կատարված աշխատանքները՝ ընդգծելով դրանց նշանակությունը սովորողների վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորման գործում։ Միևնույն ժամանակ ներկայացվեց ուսումնական նախագծերի իրականացման ընթացքը՝ նշելով, որ դրանք նպաստել են սովորողների ինքնուրույնության, հետազոտական հմտությունների և համագործակցային աշխատանքի զարգացմանը։

Հատուկ ընդգծվեց դպրոցի կառավարման արդյունավետության դերը՝ որպես ուսումնադաստիարակչական գործընթացների որակյալ կազմակերպման առանցքային պայման։ Արձանագրվեց, որ համակարգված կառավարման շնորհիվ հնարավոր է ապահովել ծրագրերի լիարժեք իրականացում, գործընթացների ներդաշնակ կազմակերպում և կրթության ընդհանուր արդյունավետության բարձրացում։

Ամփոփելով՝ նշվեց, որ իրականացված աշխատանքները եղել են նպատակաուղղված, հետևողական և արդյունքակենտրոն՝ նպաստելով կրթական գործընթացի շարունակական զարգացմանն ու կատարելագործմանը։

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները

Արտահայտվողները բարձր գնահատեցին ներկայացված հաշվետվությունը՝ ընդգծելով դրա բովանդակային ամբողջականությունը, կառուցվածքային հստակությունն ու վերլուծական խորությունը: Նշվեց, որ հունվար–փետրվար ամիսներին իրականացված աշխատանքները կրել են նպատակային և համակարգված բնույթ՝ ապահովելով ուսումնադաստիարակչական գործընթացի կայուն և արդյունավետ ընթացքը:

Մասնակիցները կարևորեցին դասալսումների և տրամադրված մեթոդական աջակցության նշանակությունը՝ ընդգծելով, որ դրանք էապես նպաստել են ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը, փորձի փոխանակմանը և դասավանդման որակի շարունակական բարելավմանը:

Դրական գնահատական տրվեց նաև նոր ՀՊՉ-ների ներդրման ուղղությամբ իրականացված աշխատանքներին: Ընդգծվեց, որ ընթացիկ քննարկումներն ու վերլուծությունները հնարավորություն են տալիս ժամանակին արձագանքել ի հայտ եկող խնդիրներին և ապահովել չափորոշիչների արդյունավետ և նպատակային կիրարկումը:

Արտահայտվողները կարևորեցին նաև էսսեագրության զարգացմանն ուղղված աշխատանքներն ու ուսումնական նախագծերի իրականացումը՝ դիտարկելով դրանք որպես սովորողների ստեղծագործական, քննադատական մտածողության և հետազոտական կարողությունների զարգացման կարևոր գործիքներ:

Միաժամանակ ընդգծվեց դպրոցի կառավարման արդյունավետության առանցքային դերը՝ որպես կրթական գործընթացների կազմակերպման, համակարգման և ընդհանուր արդյունքների բարելավման հիմնական նախապայման:

Ամփոփելով՝ առաջարկվեց շարունակել աշխատանքները նույն հետևողականությամբ՝ առավել ակտիվորեն ներդնելով նորարարական մոտեցումներ, խթանելով համագործակցային միջավայրի զարգացումը և ապահովելով կրթական գործընթացի շարունակական առաջընթացն ու որակական բարելավումը:

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն ԿԳՄՍ նախարարությանն ուղարկված ուսումնադաստիարակչական աշխատանքների հունվար-փետրվար ամիսների հաշվետվությունը (կցվում է էլեկտրոնային տարբերակով):

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Աբգարյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԱՐՎԵՍՏԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 9

«28» ապրիլ 2026թ. ք. Գորիս

<u>Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝</u>

1. Աննա Աբգարյան (մ/մ նախագահ)
2. Ռոբերտ Արզումանյան
3. Թամարա Հովհաննիսյան
4. Սոնա Միրզոյան
5. Արտուր Հովսեփյան
6. Գրիգորյան Լուսինե

**Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը,ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը:**

Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
2. Հաղորդում՝ արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
3. 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
4. Էլեկտրոնային մատենավարության ստուգում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
5. «Ֆիզկուլտուրա» առարկայի քննություն:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) ապրիլ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)
7. 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Առստամյան)
8. 9-րդ դասարանների ավարտական նորմատիվների հանձման ժամանակացույցի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
9. ԿԱՊԿՈՒ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատելու մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
10. Այլ երկրից Հայաստան տեղափոխված սովորողների գիտելիքների գրավոր ստուգման գրավոր աշխատանքների տարբերակների քննարկում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

***Լսեցին 1.*** Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա մեթոդմիավորման 9-րդ նիստի օրակարգը:

*Լսեցին 2.* Հաղորդում՝ արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները՝ անդրադառնալով կատարված աշխատանքներին, և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում։

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

*Լսեցին 3.* 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը նշեց, որ երկամսյա դասալսումների արդյունքում ուսուցիչների համար մի շարք կարևոր հարցեր առավել հստակ և հասկանալի են դարձել։ Մարտ–ապրիլ ամիսների ընթացքում մանկավարժների կողմից իրականացված աշխատանքների, փորձի փոխանակման և կազմակերպված մասնագիտական քննարկումների շնորհիվ ձևավորվել է գնահատման համակարգի վերաբերյալ միասնական և հստակ պատկերացում, որն արդեն կիրառվում է գործնականում։

Նա ընդգծեց նաև, որ դասերն իրականացվում են նոր Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան՝ հիմք ընդունելով նոր չափորոշչով սահմանված նպատակներն ու վերջնարդյունքները։ Միաժամանակ ուսուցիչները դասավանդման գործընթացում նպատակային և արդյունավետ կերպով կիրառում են հայտորոշիչ, ձևավորող և ամփոփիչ գնահատումները՝ պահպանելով դրանց կիրառման ճիշտ ժամանակացույցն ու մանկավարժական սկզբունքները։

*Արտահայտվեցին՝* Ա. Առստամյան, ՄՄ անդամներ

Արտահայտվողները կարևորեցին հայտորոշիչ թեստերի առկայությունն ու դրանց արդյունավետ կիրառումը՝ որպես սովորողների առաջընթացի գնահատման կարևոր գործիք։ Հատկապես ընդգծվեց ձևավորող և միավորային գնահատման համար նախատեսված աշխատանքների նպատակային օգտագործման, ինչպես նաև դրանց նախնական ընտրության և կիրառման ճիշտ կազմակերպման անհրաժեշտությունը։

Նշվեց նաև, որ նոր չափորոշչային դասարաններում ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը զգալիորեն նպաստել են ուսուցիչների մասնագիտական վերապատրաստումները, մեթոդմիավորման նիստերի ընթացքում իրականացվող մասնագիտական քննարկումները, ինչպես նաև կլոր սեղանների ձևաչափով կազմակերպված փորձի փոխանակումները։ Այդ աշխատանքների արդյունքում ուսուցիչներն առավել վստահ և համակարգված կերպով են իրականացնում նոր չափորոշչի պահանջներին համապատասխան դասավանդումը և գնահատումը։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին զեկուկույցը։

*Լսեցին 4.* Էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան

Զեկուցողը ներկայացրեց, որ վերջին շրջանում զգալիորեն բարելավվել է էլեկտրոնային մատյաններում իրականացվող աշխատանքների կազմակերպվածությունն ու համակարգվածությունը։ Նրա խոսքով՝ գործընթացներն այժմ առավել հստակ, կարգավորված և վերահսկելի են, ինչը

հնարավորություն է տալիս ապահովել տվյալների ժամանակին, ամբողջական և ճշգրիտ մուտքագրումը։

Ընդգծվեց նաև, որ ուսուցիչները մատենավարության հետ կապված իրենց պարտականություններին մոտենում են առավել պատասխանատվությամբ և հետևողականությամբ՝ պահպանելով սահմանված կարգը, պահանջներն ու ժամկետները։ Արդյունքում բարձրացել է ոչ միայն աշխատանքների արդյունավետությունն ու օպերատիվությունը, այլև կրթական գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ինչը նպաստում է ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը։

***Արտահայտվեցին՝*** Ա. Առստամյանը

Արաքսյա Առստամյանը նշեց, որ անհրաժեշտ է հետևողականորեն պահպանել տրված ցուցումներն ու սահմանված պահանջները՝ գրանցումներն ու գնահատումները կատարելով ժամանակին և պատշաճ կարգով։ Նա կարևորեց նաև ՕԹՊ-ով սահմանված թեմատիկ հաջորդականության խստագույն պահպանումը՝ ընդգծելով, որ ուսումնական նյութի ճիշտ և համակարգված կազմակերպումը նպաստում է կրթական գործընթացի արդյունավետ իրականացմանն ու ծրագրային պահանջների լիարժեք ապահովմանը։

***Որոշեցին՝***

- Ստուգման արդյունքներն ընդունել ի գիտություն։
- ՄՄ նախագահի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում,
- տնօրենի տեղակալի կողմից կատարել էլեկտրոնային մատենավարության պարտադիր կատարողականի վերահսկում։

***Լսեցին 5.*** «Ֆիզկուլտուրա» առարկայի քննության մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը կարևորեց, որ ժամանակին մեկնարկեն արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորումում ընդգրկված «Ֆիզկուլտուրա» առարկայի ստուգողական նորմատիվների կազմման աշխատանքները։ Նա ընդգծեց, որ մշակվող նորմատիվները պետք է լիովին համապատասխանեն հանրակրթական չափորոշչային պահանջներին, ապահովեն սովորողների կարողությունների և ֆիզիկական պատրաստվածության օբյեկտիվ գնահատումը, ինչպես նաև նպաստեն ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը։

***Արտահայտվեցին՝*** Ա. Աբգարյանը, Ռ. Արզումանյանը

Արտահայտվողները նշեցին, որ անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն և բավարար ժամանակ հատկացնել աշակերտների ֆիզիկական պատրաստվածության զարգացմանը։ Ընդգծվեց, որ համակարգված և նպատակային աշխատանքը կնպաստի սովորողների ֆիզիկական կարողությունների ամրապնդմանը և «Ֆիզկուլտուրա» առարկայի ստուգողական նորմատիվների պատշաճ ու արդյունավետ հանձնմանը։ Նշվեց նաև, որ այս գործընթացը կարևոր նշանակություն ունի ոչ միայն գնահատման արդյունքների բարելավման, այլև աշակերտների առողջ ապրելակերպի ձևավորման տեսանկյունից։

***Որոշեցին՝*** Հավանության արժանացնել «Ֆիզկուլտուրա» առարկայի ավարտական ստուգողական նորմատիվները։

***Լսեցին 6.*** 2025-2026 ուսումնական տարվա ուսումնաղաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) փետրվար ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցողը նշեց, որ 2025–2026 ուսումնական տարվա ապրիլ ամսվա ընթացքում արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման կողմից ամբողջությամբ իրականացվել են նախատեսված

ուսումնադաստիարակչական և մեթոդական աշխատանքները: Հաշվետու ժամանակահատվածում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել արվեստի, ֆիզիկական դաստիարակության առարկաների դասավանդման որակի բարձրացմանը, էլեկտրոնային մատյանների վարման կարգի պահպանմանը, ինչպես նաև թեմատիկ պլանների և ուսումնական ծրագրերի կատարողականի վերահսկմանը:

Նշվեց, որ մեթոդական աշխատանքների շրջանակում կազմակերպվել և իրականացվել են փոխադարձ դասալսումներ, որոնք նպաստել են ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը, առաջավոր փորձի փոխանակմանը և նոր չափորոշչային պահանջների առավել արդյունավետ կիրառմանը ուսումնական գործընթացում: Կարևորվել են նաև մասնագիտական քննարկումները, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել դասավանդման ժամանակակից մեթոդներին, գնահատման արդյունավետ ձևերին և սովորողների ակտիվ ներգրավվածության ապահովմանը:

Դաստիարակչական աշխատանքների շրջանակում առանձնահատուկ կարևորություն են ստացել ազգային հիշատակի և արժեհամակարգային դաստիարակությանն ուղղված միջոցառումները: Մասնավորապես, կազմակերպվել են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված քննարկումներ և զրույցներ, որոնց նպատակն էր սովորողների մեջ ձևավորել պատմական հիշողության, ազգային ինքնագիտակցության և հայրենասիրական արժեքների նկատմամբ հարգանք: Այդ նպատակով իրականացվել է նաև այցելություն հուշարձան՝ զոհերի հիշատակը հարգելու և ազգային արժեքների պահպանման կարևորությունը վերահաստատելու համար:

***Արտահայտվեցին՝*** ՄՄ անդամները

Արտահայտվողները ծավալված քննարկման ընթացքում բարձր գնահատեցին ապրիլ ամսվա ընթացքում իրականացված աշխատանքները՝ ընդգծելով դրանց նպատակային կազմակերպվածությունն, արդյունավետությունն ու կրթական գործընթացի վրա ունեցած դրական ազդեցությունը: Նշվեց, որ իրականացված միջոցառումները նպաստել են ոչ միայն ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը, այլև մեթոդական աշխատանքի ակտիվացմանը, ուսուցիչների համագործակցության խորացմանն ու մասնագիտական փորձի փոխանակմանը:

Քննարկման ընթացքում առանձնակի անդրադարձ կատարվեց փոխադարձ դասալսումների արդյունավետությանը: Մասնակիցները շեշտեցին, որ նման ձևաչափը կարևոր հարթակ է մասնագիտական աճի, ինքնավերլուծության և շարունակական զարգացման համար: Ընդգծվեց, որ դասալսումները հնարավորություն են տալիս գործնականում կիրառել նոր չափորոշչային պահանջները, վերանայել և կատարելագործել դասավանդման մեթոդներն ու մոտեցումները, ինչպես նաև բարձրացնել ուսուցման որակն ու սովորողների ակտիվ ներգրավվածությունը դասապրոցեսում:

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն՝ 2025-2026 ուսումնական տարվա ապրիլ ամսվա ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարողականը:

***Լսեցին 7.*** 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը ներկայացրեց 9-րդ դասարանների «Ֆիզկուլտուրա» առարկայի ավարտական ստուգարքի հանձնաժողովների կազմերը, նշեց, որ կազմի անդամներն ընտրվել են հիմք ընդունելով հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած

սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը։

***Արտահայտվեցին՝*** ՄՄ անդամները։

Արտահայտվողները նշեցին, որ 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմում առաջադրվել են բոլոր ցանկացողները, ինչպես նաև հաշվի են առնվել հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի պահանջները, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22 ապրիլի 2026 թվականի 675-Ա/2 հրամանը։

***Որոշեցին՝*** Հավանության արժանացնել 9-րդ դասարանների ավարտական քննությունների հանձնաժողովների կազմերը (կցվում է)։

***Լսեցին 8.*** 9-րդ դասարանների ավարտական նորմատիվների հանձման ժամանակացույցի քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը նշեց, որ 2025-2026 ուսումնական տարում դպրոցի 9-րդ դասարանների աշակերտները նորմատիվներ են հանձնելու «Ֆիզկուլտուրա» առարկայից։ Զեկուցողը հավելեց, որ ուսուցչի կողմից ներկայացվել է «Ֆիզկուլտուրա» առարկայի նորմատիվների սանդղակը, որոնք համապատասխանում են ԳԹԿ-ի կողմից սահմանված բոլոր պահանջներին։

Զեկուցողը նշեց նաև, որ նորմատիվների հանձման ժամանակացույցը կազմվել է հաշվի առնելով ԿԳՄՍ նախարարի հրամանը, ինչպես նաև ԳԹԿ-ի կողմից հաստատված ժամանակացույցը։

***Արտահայտվեցին՝*** Ա. Հովսեփյանը, Ռ Արզումանյանը

Արտահայտվողները նշեցին, որ ստուգողական նորմատիվների սանդղակն ու դրանց իրականացման ժամանակացույցը լիովին համապատասխանում են ԳԹԿ-ի կողմից սահմանված պահանջներին և չափանիշներին։ Ընդգծվեց, որ աշխատանքները կազմակերպվել են սահմանված կարգին համապատասխան՝ ապահովելով գնահատման գործընթացի հստակությունը, օբյեկտիվությունն ու արդյունավետ իրականացումը։

***Որոշեցին՝*** Հավանության արժանացնել 2025-2026 ուսումնական տարվա 9-րդ դասարանների ավարտական նորմատիվների հանձման ժամանակացույցը (կցվում է)։

***Լսեցին 9.*** ԿԱՊԿՈՒՀ աշակերտներին 9-րդ դասարանների ավարտական քննություններից ազատելու մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը նշեց, որ 9-րդ «Գ» դասարանի աշակերտներ Արթուր Ալումանյանի, Էդիկ Ստեփանյանին և 9-րդ «Բ» դասարանի աշակերտ Ալեքս Սահակյանի ծնողները դիմում են ներկայացրել, որով խնդրել են իրենց երեխային ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից։

**Արտահայտվեցին՝** Ա. Առստամյանը

Արտահայտվողը նշեց, որ Արթուր Ալումանյանի, Էդիկ Ստեփանյանին, Ալեքս Սահակյանի ծնողների դիմումի համաձայան նրանց պետք է ազատել 9-րդ դասարանների ավարտական քննություններից, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տվյալ աշակերտներն ունեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ինչպես նաև հղում կատարեց հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ

աստիճան փոխադրման կարգի 9-րդ կետին, որտեղ սահմանվում է, որ ինտելեկտուալ (մտավոր) զարգացման խանգարմամբ պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողները, ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) համաձայնությամբ, կարող են չմասնակցել գիտելիքների ստուգմանը (4-րդ դասարան), ավարտական (9-րդ դասարան) և պետական ավարտական (12-րդ դասարան) քննություններին: Այդ դեպքում նրանց տրվում է պետական նմուշի ավարտական փաստաթուղթ (հիմնական կրթության վկայական և միջնակարգ կրթության ատեստատ)՝ առանց քննական գնահատականների:

**Որոշեցին՝** Համաձայն Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգի՝ առաջարկել ԿԱՊԿՈՒՀ աշակերտներ Արթուր Ալումանյանին, Էդիկ Ստեփանյանին, Ալեքս Սահակյանին ազատել 9-րդ դասարանի ավարտական քննություններից:

***Լսեցին 10.*** Այլ երկրից Հայաստան տեղափոխված սովորողների գիտելիքների գրավոր ստուգման գրավոր աշխատանքների տարբերակների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը նշեց, որ Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան տեղափոխված Մանե Դանիելյանի և Արթուր Դանիելյանի ծնողը դիմում է ներկայացրել՝ խնդրելով երեխաների ուսումը շարունակել Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի համապատասխան դասարաններում:

Ըստ ներկայացված տեղեկատվության՝ հիմք ընդունելով «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգի» 21-րդ, 22-րդ, 29-րդ և 30-րդ կետերի պահանջները՝ նշված սովորողները ենթակա են ընդունման դպրոց՝ մեկ դասարան ցածր՝ համապատասխանաբար 7-րդ և 8-րդ դասարաններ:

Զեկուցողը ընդգծեց, որ գործընթացը սահմանված կարգով կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է նախապես գնահատել Մանե Դանիելյանի և Արթուր Դանիելյանի գիտելիքների մակարդակը: Այդ նպատակով տվյալ դասարանների ուսումնական պլանով նախատեսված առարկաներից նրանք պետք է գրեն գրավոր աշխատանքներ:

Նշվեց, որ այդ ստուգմանը հաջորդելու է նույն կարգի 30-րդ կետի պահանջի համաձայն գործընթացի շարունակությունը, որի շրջանակում, սովորողների փաստացի առարկայական գիտելիքների վերաբերյալ մասնագիտական խմբի գրավոր եզրակացության հիման վրա, տնօրենը կընդունի որոշում սովորողների համապատասխան դասարան ընդունելու վերաբերյալ:

Միաժամանակ տնօրենը կհաստատի ուսումնական պլանով նախատեսված առարկաների վերաբերյալ մեթոդմիավորումների կողմից ներկայացված անհատական առարկայական պլանները, ինչպես նաև լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը, որի համաձայն սովորողների համար կկազմակերպվի նպատակային ուսուցում՝ բաց թողնված ծրագրային նյութի յուրացման ապահովման համար:

Զեկուցողը հավելեց, որ մասնագիտական եզրակացությունը կտրվի բոլոր առարկաներից գրավոր ստուգումների արդյունքների համապարփակ վերլուծության հիման վրա՝ ապահովելով գործընթացի օբյեկտիվությունն ու կարգի պահանջների լիարժեք կատարումը:

***Արտահայտվեցին՝*** ՄՄ անդամները

Արտահայտվողները քննարկման ընթացքում ծանոթացան Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան տեղափոխված Մանե և Արթուր Դանիելյանների՝ դպրոց ընդունվելու գործընթացին վերաբերող հարցին և ներկայացված կարգավորումների շրջանակին։

Նրանք ընդգծեցին, որ գործընթացը պետք է իրականացվի գործող կարգի պահանջներին համապատասխան՝ ապահովելով թափանցիկություն, օբյեկտիվություն և սովորողների իրական գիտելիքների մակարդակի ճիշտ գնահատում։ Արտահայտվողները դրական գնահատեցին նախատեսված գիտելիքների ստուգման և գրավոր աշխատանքների միջոցով գնահատման մոտեցումը՝ նշելով, որ այն թույլ է տալիս արդար և հիմնավորված որոշում կայացնել սովորողների համապատասխան դասարաններում ընդգրկման վերաբերյալ։

Միաժամանակ կարևորվեց մասնագիտական խմբի եզրակացության դերը՝ որպես ընդունման գործընթացի կարևոր հիմք, որը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել սովորողների պատրաստվածության մասին։ Ընդգծվեց նաև լրացուցիչ անհատական ուսումնական պլանների և աջակցող դասընթացների կազմակերպման անհրաժեշտությունը՝ բաց թողնված նյութի արդյունավետ լրացման և սովորողների հարմարվողականության ապահովման նպատակով։

Արտահայտվողները ընդհանուր առմամբ գործընթացը գնահատեցին որպես հիմնավորված և ճիշտ կազմակերպման դեպքում՝ սովորողների կրթական շարունակականության ապահովմանը նպաստող քայլ։

***Որոշեցին՝*** Հավանության արժանացնել 7-րդ և 8-րդ դասարանների համար ուսումնական պլանով նախատեսված առարկաների գրավոր աշխատանքները և ներկայացնել տնօրենին՝ հաստատման (կցվում է էլեկտրոնային տարբերակով)։

Մ/Մ նախագահ՝ Ա. Աբգարյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԱՐՎԵՍՏԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №10

«05» մայիսի 2026թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝

1. Աննա Աբգարյան (մ/մ նախագահ)
2. Ռոբերտ Արզումանյան
3. Թամարա Հովհաննիսյան
4. Սոնա Միրզոյան
5. Արտուր Հովսեփյան
6. Գրիգորյան Լուսինե

**Նիստին ներկա էին տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը:**

## Ο Ր Ա Կ Ա Ր Գ

1. Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
2. Ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական առարկայական պլանների և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցի քննարկում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

***Լսեցին 1.*** Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման 10-րդ արտահերթ նիստի օրակարգը:

***Լսեցին 2.*** Ուսումնական պլանով նախատեսված առարկաներից անհատական առարկայական պլանների և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցի քննարկման մասին հարցը:
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
Զեկուցողը տեղեկացրեց, որ Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան տեղափոխված Մանե Դանիելյանի և Արթուր Դանիելյանի ծնողը դիմում է ներկայացրել՝ երեխաների ուսումը Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց համապատասխան դասարաններում շարունակելու նպատակով:
Նշվեց, որ ներկայացված փաստաթղթերի և գործող իրավակարգավորումների ուսումնասիրության արդյունքում, հիմք ընդունելով «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման և հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու և ազատելու կարգի» 21-րդ, 22-րդ, 29-րդ և 30-րդ կետերի պահանջները, սովորողները ենթակա են ընդունման մեկ դասարան ցածր՝ համապատասխանաբար 7-րդ և 8-րդ դասարաններ:
Զեկուցողը ընդգծեց, որ գործընթացի պատշաճ և կարգին համապատասխան կազմակերպման նպատակով իրականացվել է սովորողների գիտելիքների

մակարդակի գնահատում: Այդ նպատակով Մանե Դանիելյանը և Արթուր Դանիելյանը տվյալ դասարանների ուսումնական պլանով նախատեսված առարկաներից կատարել են գրավոր աշխատանքներ, որոնց արդյունքները ենթարկվել են մասնագիտական վերլուծության:

Նշվեց նաև, որ գործընթացի հաջորդ փուլը կազմակերպվել է վերոնշյալ կարգի 30-րդ կետի պահանջներին համապատասխան: Մասնագիտական խմբի կողմից սովորողների փաստացի առարկայական գիտելիքների վերաբերյալ ներկայացված գրավոր եզրակացության հիման վրա որոշում է կայացվել նրանց ընդունել համապատասխան դասարաններ:

Զեկուցողը հավելեց, որ անհրաժեշտ է հաստատել ուսումնական պլանով նախատեսված առարկաների անհատական ուսումնական պլանները, ինչպես նաև լրացուցիչ դասընթացների կազմակերպման ժամանակացույցը: Այդ շրջանակում սովորողների համար կիրականացվի նպատակային աջակցող ուսուցում՝ բաց թողնված ծրագրային նյութի լիարժեք յուրացումն ապահովելու նպատակով:

Ընդգծվեց, որ մասնագիտական եզրակացությունը կազմվել է բոլոր առարկաներից իրականացված գրավոր ստուգումների արդյունքների համակողմանի ուսումնասիրության և վերլուծության հիման վրա՝ ապահովելով գործընթացի օբյեկտիվությունը, թափանցիկությունը և գործող կարգի պահանջների լիարժեք պահպանումը:

***Արտահայտվեցին՝*** ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին սովորողների կրթության շարունակականության ապահովումը և դրական գնահատեցին նրանց ընդունելության գործընթացի կազմակերպումը՝ ընդգծելով, որ այն իրականացվել է գործող կարգի պահանջներին համապատասխան և ապահովել է գործընթացի օբյեկտիվությունն ու թափանցիկությունը: Նշվեց, որ սովորողների գիտելիքների մակարդակի նախնական գնահատումը, ինչպես նաև մասնագիտական խմբի կողմից կատարված վերլուծությունը հնարավորություն են տվել առավել արդյունավետ կազմակերպել նրանց հետագա ուսուցումը: Արտահայտվողները կարևոր համարեցին անհատական ուսումնական պլանների և լրացուցիչ դասընթացների իրականացումը՝ նշելով, որ դրանք կնպաստեն բաց թողնված ծրագրային նյութի յուրացմանը և սովորողների լիարժեք ինտեգրմանը ուսումնական գործընթացին: Ընդգծվեց նաև դպրոց-ընտանիք համագործակցության անհրաժեշտությունը՝ համոզմունք հայտնելով, որ համատեղ և հետևողական աշխատանքի արդյունքում սովորողները կկարողանան արագ հարմարվել նոր կրթական միջավայրին և ապահովել պատշաճ առաջադիմություն:

***Որոշեցին՝***

- Հավանության արժանացնել 7-րդ դասարանների համար ուսումնական պլանով նախատեսված առարկաներից կազմված թեմաներից 7-րդ «Գ» դասարանի սովորող Մանե Դանիելյանի համար նախատեսված անհատական առարկայական պլանը (կցվում է էլեկտրոնային տարբերակով) և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը (կցվում է) և ներկայացնել տնօրենին հաստատման:
- Հավանության արժանացնել 8-րդ դասարանների համար ուսումնական պլանով նախատեսված առարկաներից կազմված թեմաներից 8-րդ «Ա» դասարանի սովորող Արթուր Դանիելյանի համար նախատեսված անհատական առարկայական պլանը (կցվում է էլեկտրոնային տարբերակով) և լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը (կցվում է) և ներկայացնել տնօրենին հաստատման:

Մ/Մ նախագահ՝ Ա. Աբգարյան

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ԱՐՎԵՍՏԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 11

«29» մայիս 2026թ. ք. Գորիս

<u>Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝</u>

1. Աննա Աբգարյան (մ/մ նախագահ)
2. Ռոբերտ Արզումանյան
3. Թամարա Հովհաննիսյան
4. Սոնա Միրզոյան
5. Արտուր Հովսեփյան
6. Լուսինե Գրիգորյան

**Նիստին ներկա էր տնօրենի Ժ/Պ Մերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը**

## Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում։
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
2. Հաղորդում՝ արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
3. 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն։
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
4. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգում։
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
5. 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետությունների քննարկում։
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքը։
(զեկուցող՝ Ա. Ծատրյան)
7. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մայիս ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ։
(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

***Լսեցին 1.*** Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը։
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը։

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա մեթոդմիավորման 11-րդ նիստի օրակարգը։

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։
(զեկուցող՝ Ա. Աբգարյան)
Զեկուցողը ներկայացրեց մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները՝ անդրադառնալով կատարված աշխատանքներին, և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում։

*Արտահայտվեցին՝*

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը:

*Լսեցին 3.* 2-9- րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողություն:

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը նշեց, որ 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի արդյունավետ վերահսկողությունը պահանջում է համակարգված մոտեցում՝ ներառելով ծրագրային, կազմակերպչական և գնահատման բաղադրիչներ: Նա կարևորեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները՝ կապված ՀՊՉ ներդրման գործընթացի հետ: Նշեց, որ կատարած դիտարկումները, քննարկումներն ու դասալսումները միայն դրական նշանակություն և մեծ աջակցություն եղան 2-9-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների համար: Զեկուցողի կողմից նշվեց արդեն ունեցած փորձի և վերապատրաստումների ժամանակ ստացած գիտելիքների, հմտությունների և կարողունակությունների մասին: Նախապես պլանավորված աշխատանքների կազմակերպման ընթացքում պարզ դարձան այն արդյունքները, հաջողություններն ու բացթողումները, խնդիրները որոնք արձանագրվեցին տարեվերջին: Կատարված աշխատանքի արդյունքում ուսուցիչները կարողացան ապահովել աշակերտակենտրոն մոտեցում, զարգացնել գիտելիքների, հմտությունների և արժեքների ամբողջական ձևավորում, ինչպես նաև բարելավել կրթության որակը: Միայն կազմակերպված քննարկումների և վերլուծությունների արդյունքում հնարավոր եղավ գործընթացը հաղթահարել ավելի հեշտ և արդյունավետ:

*Արտահայտվեցին՝* Ա. Առստամյան, ՄՄ անդամներ

Արտահայտվողները կարևորեցին հայտորոշիչ թեստերի առկայությունը, ձևավորող և միավորային գնահատման համար օգտագործվող աշխատանքների կիրառումը և նախապես դրանց կիրառման ու ընտրության հարցը: Նշվեց նաև, որ նոր չափորոշչային դասարաններում աշխատանքների ճիշտ կազմակերպմանը նպաստել է ուսուցիչների վերապատրաստումները, ՄՄ նիստերի ընթացքում ու կլոր սեղանների շուրջ քննարկումները: Արտահայտվողները կարևորեցին 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում կատարված դասալսումների արդյունքների քննարկումների ժամանակ վեր հանված խնդիրները, տնօրեն Սերգեյ Ավանեսյանի կողմից տրամադրվող խորհրդատվությունները: Նշվեց նաև, որ ՕԹՊ-ներ կազմելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ամփոփումներին և գնահատման պահանջներին՝ ըստ ՀՊՉ-ների:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2-9-րդ դասարաններում ՀՊՉ ներդրման գործընթացի վերահսկողության մասին տեղեկատվությունը:

*Լսեցին 4.* 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը մանրամասն ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության իրականացման ընթացքում արձանագրված բացթողումներն ու թերությունները: Նա նշեց, որ որոշ ուսուցիչների մոտ հայտնաբերվել են անհամապատասխանություններ ՕԹՊ-ների միջև, ինչպես նաև տեխնիկական խնդիրների պատճառով որոշ գնահատականներ չեն պահպանվել: Բացի այդ, որոշ ուսուցիչների համար նորություն էր նոր չափորոշչային դասարաններում նախագծային աշխատանքների մատենավարության կարգը, որն իրականացվել է ճշգրտորեն՝ առանց շեղումների: Ամփոփելով մատենավարության ստուգման արդյունքները՝ մ/մ նախագահ Աննա Աբգարյանը նշեց, որ ընթացիկ

ուսումնական տարում ուսուցիչների կողմից արձանագրված թերություններն էապես նվազել են՝ համեմատած նախորդ տարիների հետ:

*Արտահայտվեցին՝* Ա. Առստամյանը

Առստամյանն ընդգծեց, որ մատենավարության գործընթացում առանցքային է յուրաքանչյուր ուսուցչի անհատական ու պատասխանատու մոտեցումը: Նշեց, որ ընթացիկ ստուգումների արդյունքում որոշ թերություններ դեռ արձանագրվում են, ուստի կարևոր է հետևողական վերահսկողություն իրականացնել ուսուցիչների առօրյա աշխատանքի նկատմամբ: Առկա խնդիրները պետք է ժամանակին բացահայտվեն, քննարկվեն և վերանայվեն՝ թույլ չտալու համար դրանց խորացումը:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում էլեկտրոնային մատենավարության ստուգման մասին զեկուցումը:

*Լսեցին 5.* 2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում իրականացված նախագծային աշխատանքների հաշվետությունների քննարկում:

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության Մ/Մ նախագահ՝ Աննա Աբգարյանը, ներկայացրեց արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման անդամ ուսուցիչների կողմից իրականացված նախագծային աշխատանքները: 7-րդ «Ա» «Բ» «Գ», 8-րդ «Ա» «Բ» «Գ» և 9-րդ «Ա» «Բ» «Գ» դասարանների աշակերտները «Երաժշտություն», «Կերպարվեստ», «Ֆիզկուլտուրա» «ՆՁՊ» «Արվեստ» առարկաներից իրականցրել են նախագծային աշխատանքներ: Ներկայացված աշխատանքները բավականին բովանդակալից և հետաքրքիր էին, ինչպես նաև բազմաբովանդակ և ուսուցողական: Բավականին հետաքրքիր էին նախագծային աշխատանքների պրոդուկտները, որոնցից յուրաքանչյուրը տարբերվում էր իր ոճով և հեղինակային մոտեցմամբ:

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին նախագծային աշխատանքների կազմակերպչական փուլերը, քանի որ հենց այդ ժամանակ են սովորողները դառնում ավելի հետաքրքրված և ներգրավված ուսումնական գործընթացին, ի հայտ բերելով աշակերտների կարողությունները, ունակությունները և համագործակցային հնարավորությունները: Նշվեց նաև ուսուցիչների դերի և կատարած ուղղորդող աշխատանքների կարևորության մասին: Նախագծային աշխատանքների ղեկավարները իրենց ներկայացրած աշխատանքների մեջ կարևորեցին նախագծային ուսուցման իրականացման համար սովորողների տարիքային առանձնահատկությունները և ֆիզիկական կարողությունների ճիշտ հաշվարկումը, ինչպես նաև թեմաների ճիշտ ընտրությունը:

Թամարա Հովհաննիսյանը նշեց, որ այս դեպքում սովորողները ավելի խորապես են ուսումնասիրում թեման, կարողանում են կապ ստեղծել տեսության ու գործնականի միջև: Նշեց նաև թիմերի կազման հետևողական աշխատանքների մասին՝ անհրաժեշտ համարվեց տարբեր կարողություններ ունեցող աշակերտներին ընդգրկել խմբերում, քանի որ այդպես հնարավոր կլինի սովորեցնել թիմային աշխատանքի հնարներն ու մեթոդները:

Ռոբերտ Արզումանյանը կարևորեց այն, որ նախագծային ուսուցումը աշխուժացնում է երեխաների ուսումնական գործընթացը, տարբեր գիտությունների նկատմամբ նորանոր տեղեկություններ ստանալու ցանկությունը: Այն հնարավորություն է տալիս գործնական հմտություններ զարգացնել, կատարում են հետազոտություններ, տվյալների վերլուծություններ, զարգացնում է նորարական մտածողության և խնդիրների ինքնուրույն լուծման հմտություններ, ինչպես նաև ՏՀՏ-ի արդյունավետ օգտագործումը:

Ներկաները նշեցին, որ նախագծի մեջ կարևոր դեր է խաղում քայլերի կատարման ճիշտ ընտրությունը, նպատակի և հարցերի սահմանումը, տեղեկատվության որոնումը և վերլուծությունը, աշխատանքի պլանավորումը և իրականացումը, արդյունքների ներկայացումը, ինքնավերլուծությունն ու հետադարձ կապը: Իրականացված աշխատանքները փաստեցին, որ աշխատանքի ընթացքում միշտ չէ, որ ամեն ինչ ընթանում է պլանավորվածին համապատասխան: Այս դեպքում ուսուցիչները պետք է օգնեն, քանի որ առաջացած հարցերի պատասխանները ի հայտ են գալիս նախագծի իրականացման ընթացքում:

Նախագծային աշխատանքի ղեկավարները հանգամանալից ներկայացրին հաշվետվությունները ու կատարած աշխատանքները և քննարկումների արդյունքում անդրադարձ կատարեցին մի շարք այլ հարցերի, որոնք առաջացել էին աշխատանքների իրականացման ժամանակ:

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում իրականցված նախագծային աշխատանքների հաշվետվությունները:

***Լսեցին 6.*** 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԿԱՊԿՈՒՀ աշակերտների ԱՈՒՊ-ների կազմման և համապատասխան դիտարկման թերթիկների լրացման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն: Նա ընդգծեց, որ աշխատանքները կազմակերպվել և իրականացվել են հաստատված կարգի ու պահանջների համաձայն՝ ապահովելով ձևաթղթերի ճշգրիտ և ամբողջական լրացում: Շեշտվեց նաև, որ ԱՈՒՊ-ների ձևակերպման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվել աշակերտների անհատական կարիքների, ուսումնական առաջադիմության և հնարավորությունների վրա՝ նպատակ ունենալով ապահովել առավել արդյունավետ և նպատակային ուսուցում:

***Արտահայտվեցին՝*** ՄՄ անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ԿԱՊԿՈՒՀ աշակերտների ԱՈՒՊ-ների կազմումը հնարավորություն է տալիս ավելի խորությամբ հասկանալու յուրաքանչյուր աշակերտի կարիքները և համապատասխանեցնելու ուսուցումը նրանց կարողություններին: Կարևոր է, որ այս գործընթացը ոչ միայն ձևական չլինի, այլ ծառայի իրական աջակցման նպատակին:

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների մասին տեղեկատվությունը:

***Լսեցին 7.*** 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) մայիս ամսվա ընթացքում իրականացված աշխատանքներ:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

**Զեկուցողը նշեց,** որ մայիս ամսվա ընթացքում մեթոդմիավորման աշխատանքները կազմակերպվել և իրականացվել են ըստ հաստատված տարեկան պլանի: Ապահովվել է ուսումնական ծրագրերի բնականոն ընթացքը, իրականացվել են դասալսումներ, փոխադարձ դասալսումներ և բաց դասեր, որոնք նպաստել են ուսուցիչների մասնագիտական աճին, մանկավարժական փորձի փոխանակմանը և դասավանդման արդյունավետության բարձրացմանը: Մայիս ամսվա ընթացքում շարունակվել է վերահսկողությունը ուսումնական ծրագրերի կատարման, դասամատյանների վարման և գնահատման գործընթացի նկատմամբ: Ուսումնական տարվա ավարտին հատուկ ուշադրություն է դարձվել սովորողների գիտելիքների ամփոփմանը,

ծրագրային նյութի կրկնությանը և ամրապնդմանը: Իրականացվել են խորհրդատվություններ, անհատական աշխատանքներ և լրացուցիչ աջակցություն այն սովորողների հետ, ովքեր ունեցել են առաջադիմության հետ կապված դժվարություններ: Միաժամանակ կարևոր տեղ են զբաղեցրել ավարտական և փոխադրական դասարանների աշակերտների նախապատրաստական աշխատանքները: Մայիս ամսվա ընթացքում կազմակերպվել են նաև դասագրքերի հավաքագրման, հաշվառման և պահպանման աշխատանքներ՝ ապահովելով գրքերի պատշաճ վիճակով վերադարձը: Զուգահեռաբար իրականացվել են հաջորդ՝ 2026–2027 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքներ, քննարկվել են ուսումնական գործընթացի կազմակերպման, թեմատիկ պլանների նախնական մշակման և կազմակերպչական մի շարք հարցեր: Կարևորվել է նաև սովորողների ամառային հանգստի արդյունավետ կազմակերպումը: Սովորողներին տրամադրվել են ամառային արձակուրդների ընթացքում ինքնուրույն աշխատանքների, ընթերցանության և կրկնուսուցման առաջադրանքներ՝ նպատակ ունենալով պահպանել և ամրապնդել ձեռք բերված գիտելիքները, զարգացնել ինքնուրույն աշխատանքի կարողությունները և ապահովել հաջորդ ուսումնական տարվան առավել պատրաստված ներկայանալը:

Հաշվետու ժամանակահատվածում մասնախմբի կողմից կազմակերպվել են հետևյալ աշխատանքները.

1.Վերահսկվել է ուսումնական ծրագրերի կատարողականը;

2.Կազմակերպվել և անցկացվել են տնօրենության գրավոր աշխատանքներ, ամփոփիչ աշխատանքներ:

3.Իրականացվել է դասալսումների և դասերի դիտարկումների գործընթացը:

4.Ուշադրություն է դարձվել սովորողների առաջադիմության և հաճախումների վերահսկմանը:

5.Ամփոփվել են ավարտական և փոխադրական քննությունների նախապատրաստական աշխատանքները:

***Արտահայտվեցին՝*** ՄՄ անդամներ

ՄՄ անդամները կարևորեցին մայիս ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների արդյունավետ կազմակերպումը և ընդգծեցին, որ մեթոդմիավորման գործունեությունը նպաստել է ուսումնական գործընթացի բնականոն իրականացմանը, ուսուցիչների մասնագիտական զարգացմանը և սովորողների առաջադիմության բարձրացմանը: Ընդգծվեց դասալսումների, բաց դասերի և փոխադարձ այցելությունների կարևորությունը՝ որպես արդյունավետ փորձի փոխանակման և ժամանակակից մանկավարժական մեթոդների կիրառման միջոց:

Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև սովորողների առաջադիմությանը, կարգապահությանը և դասերին մասնակցությանը: Նշվեց, որ սովորողների մեծ մասը ցուցաբերել է ակտիվություն, պատասխանատվություն և բարեխիղճ վերաբերմունք ուսման նկատմամբ, ակտիվորեն ներգրավվել է դպրոցական միջոցառումներին: Միաժամանակ առաջարկվեց շարունակել անհատական աշխատանքները այն սովորողների հետ, ովքեր ունեն առաջադիմական կամ կարգապահական դժվարություններ:

Մեթոդմիավորման անդամները կարևորեցին նաև դասագրքերի հավաքագրման և պահպանման գործընթացի պատշաճ կազմակերպումը՝ նշելով, որ անհրաժեշտ է ապահովել դասագրքերի ժամանակին և պատշաճ վիճակով հանձնումը: Անդրադարձ կատարվեց նաև հաջորդ ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքներին, ինչպես նաև սովորողների համար ամառային առաջադրանքների տրամադրման անհրաժեշտությանը՝ գիտելիքների պահպանման և ամրապնդման նպատակով:

***Որոշեցին՝***

- Ընդունել ի գիտություն մայիս ամսվա ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ զեկույցը:

- Շարունակել հետևողական վերահսկողությունը ուսումնական ծրագրերի կատարման, դասամատյանների և այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատշաճ վարման նկատմամբ։
- Կազմակերպել դասագրքերի հավաքագրման, հաշվառման և պահպանման աշխատանքները սահմանված կարգով։
- Իրականացնել անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ՝ ուղղված 2026–2027 ուսումնական տարվա արդյունավետ կազմակերպմանը։
- Ամփոփել ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքների արդյունքները և նախանշել հաջորդ տարվա առաջնահերթությունները։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Աբգարյան

**«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԱՐՎԵՍՏԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №12**

«26» հունիսի 2026թ. Ք. Գորիս

**Նիստին ներկա էին ՄՄ հետևյալ անդամները՝**

1. Աննա Աբգարյան (մ/մ նախագահ)
2. Ռոբերտ Արզումանյան
3. Թամարա Հովհաննիսյան
4. Սոնա Միրզոյան
5. Արտուր Հովսեփյան
6. Լուսինե Գրիգորյան

**Նիստին ներկա էր տնօրեն Սերգեյ Ավանեսյանը, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանը, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանը, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը, Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների ուղղվածությամբ խմբակների ղեկավարներ**

## Ո Ր Ա Կ Ա Ր Գ

1. Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատում։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

2. Հաղորդում՝ Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

3. 9-րդ դասարանների «Ֆիզկուլտուրա» առարկայի ավարտական ստուգարքի արդյունքների ամփոփում։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

4. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկում։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

5. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկում։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)

6. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկում։

(զեկուցող՝ ՄՄ անդամներ)

7. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփում։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

8. 2026-2027 ուսումնական տարվա ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն դպրոցի տնօրենին։

(զեկուցողներ՝ Ա. Աբգարյան)

9. 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) շրջանակում իրականացված աշխատանքների ամփոփումը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

10. 2025-2026 ուսումնական տարվանից սկսած «Առողջ ապրելակերպ» և «Անվտանգ կենսագործունեություն» առարկաների ուսումնասիրման մասին։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

11. 2026–2027 ուսումնական տարվա գնահատման նոր համակարգի պահանջների և յուրաքանչյուր առարկայից սովորողի առաջադիմության բնութագրի ապահովման հարցի քննարկում։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

12. 2026-2027 ուսումնական տարվանից մեթոդմիավորման բաժանում։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

13. 2026-2027 ուսումնական տարվանից սկսած մեթոդական միավորման անվանափոխության մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

14. 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ների, դիտարկման թերթիկների հետ կապված աշխատանքը։

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

***Լսեցին 1.*** Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նիստի օրակարգի հաստատման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը։

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Հաստատել 2025-2026 ուսումնական տարվա Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների առարկաների մեթոդմիավորման 12-րդ նիստի օրակարգը։

***Լսեցին 2.*** Հաղորդում՝ Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի օրակարգի կատարողականը, ամփոփեց նախորդ նիստի արդյունքները, անդրադարձավ կատարված աշխատանքներին և նշեց, որ նախատեսված աշխատանքները և որոշումները կատարվել են պատշաճ, սահմանված ժամկետներում։

***Արտահայտվեցին՝***

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման նախորդ նիստի որոշումների կատարման ընթացքի մասին հաղորդումը։

***Լսեցին 3.*** 9-րդ դասարանների «Ֆիզկուլտուրա» առարկայի ավարտական ստուգարքի արդյունքների ամփոփման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Առստամյան)

Զեկուցողը նշեց, որ քննության արդյունքների բարելավման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ստուգարքի ձևաչափին և աշակերտների գիտակցական մակարդակի բարձրացմանը։ Աշակերտների մոտ պետք է սերմանել այն սկզբունքը, որ իրենք սովորում եմ գիտելիքի, այլ ոչ թե գնահատականի համար։ Զեկուցողը խոսեց ստուգարքի արդյունքների մասին, շեշտեց, որ հիմնականում արդյունքները գոհացուցիչ են, ինչպես նաև խոսեց այն աշակերտների մասին, որոնց առաջադիմությունը բարձր չի եղել։ Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա «Ֆիզկուլտուրա», առարկայի ավարտական ստուգարքի ամփոփագիրը։

***Արտահայտվեցին՝*** Ա. Աբգարյանը, Ռ. Արզումանյանը

Արտահայտվողները կարևորեցին բացթողումների արձանագրումը, առաջացած խնդիրների շուրջ քննարկումները։ Շեշտվեց, որ 2026-2027 ուսումնական տարում ավարտական ստուգարքը պատշաճ մակարդակով անցկացնելու համար պետք է միջոցներ ձեռնարկել ֆիզիկական պատրաստվածության, աշակերտների մոտ ընկերասիրության սերմանման, փոխօգնության, արագ ինքնակազմակերպման սկզբունքի և արագ կողմորոշման հմտության ամրապնդման և բարձրացման ուղղությամբ։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 9-րդ դասարանների «Ֆիզկուլտուրա» առարկայի ավարտական ստուգարքի արդյունքների մասին տեղեկատվությունը (կցվում է ամփոփագիրը)։

*Լսեցին 4.* 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների կատարողականի քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մասնախմբի ուսուցիչների կողմից կազմակերպված բաց դասերի, բաց դաս-միջոցառումների ամփոփ կատարողականը։ Նշեց, որ կազմակերպված դասերն ու միջոցառումները ուսուցանող էին, երեխաները կիրառում էին արդի մեթոդներ ու հնարներ, զարգացնում ֆիզիկական և սպորտային կարողությունները ձևավորում ու զարգացնում կարողունակություններն և հմտություններն։

«Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնասիրման արդյունքում զարգացել էր առողջ մրցակցության, փոխադարձ համագործակցության, աջակցության գաղափարները, ինչի արդյունքում գրանցված հաղթանակները տվեցին իրենց արդյունքը։

Զեկուցողը ներկայացրեց բաց դասերի և դաս-միջոցառումների մասին տեղեկատվությունը՝ ըստ հաստատված պլանի։

*Արտահայտվեցին՝* Ա. Գևորգյանը, Լ. Գրիգորյանը

Զեկուցման ընթացքում Արմիդա Գևորգյանը ներկայացրեց բաց և ցուցադրական դասերի կազմակերպման հիմնական պահանջներն ու մոտեցումները։ Նշվեց, որ նման դասերը պետք է իրականացվեն հստակ ծրագրավորված և նախապես սահմանված նպատակներով։ Միևնույն ժամանակ, դասի կազմակերպման ընթացքում ուսուցիչը պետք է հաշվի առնի ընթացքի հնարավոր տարբերակները և ստեղծի ստեղծագործական, բնական միջավայր, որտեղ աշակերտներն իրենց ազատ և վստահ կզգան։

Շեշտվեց, որ բաց դասերը երբեք չպետք է վերածվեն բեմականացված և նախապես բազմաթիվ փորձերով կառուցված դասերի։ Դասի բովանդակությունը և կառուցվածքը պետք է համատեղեն և՛ նախատեսված ծրագիրը, և՛ աշակերտների ազատ արտահայտվելու, ինքնուրույն աշխատելու և ստեղծագործելու հնարավորությունը։

Արմիդա Գևորգյանը կարևորեց նաև հաստատված նվազագույն պահանջների պահպանումը, նշելով, որ բաց դասերի և միջոցառումների կազմակերպման և անցկացման գործընթացը պետք է լիարժեք համապատասխանի սահմանված չափանիշներին։

Այնուհետև իր ելույթում Լուսինե Գրիգորյանը կարևորեց դասի հաջողության մեջ աշակերտների դրական տրամադրվածության և ներգրավվածության դերը։ Նշվեց, որ դասի արդյունավետությունն ուղղակիորեն պայմանավորված է աշակերտների մասնակցությամբ, հետաքրքրվածությամբ և նախաձեռնողականությամբ։

Լուսինե Գրիգորյանը նաև ընդգծեց, որ ուսուցիչը պետք է հանդես գա որպես գործընթացն ուղղորդող, զարգացնող և աշակերտների ազատ, անկաշկանդ մտածողությունը խրախուսող։ Նա պետք է պատրաստ լինի դասի ընթացքում հնարավոր անակնկալներին և փոփոխություններին, կարողանա արագ կողմնորոշվել և աջակցել յուրաքանչյուր աշակերտի՝ ստեղծելով վստահության և համագործակցության մթնոլորտ։

Եզրակացություն. Բաց և ցուցադրական դասերի հաջող կազմակերպման կարևոր նախադրյալներն են դասի ծրագրավորվածությունը, չափորոշիչների պահպանումը, ուսուցչի և աշակերտների փոխադարձ համագործակցությունը,

ինչպես նաև ստեղծագործական և անկաշկանդ կրթական մթնոլորտի ապահովումը։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված միջոցառումների, բաց դասերի, բաց դաս-միջոցառումների մասին զեկուցումը։

*Լսեցին 5.* 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների քննարկման մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Գևորգյան, խմբավարներ)

Զեկուցման ընթացքում Արմիդա Գևորգյանը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում դպրոցի արտադասարանական խմբակների գործունեության հիմնական արդյունքներն ու արձանագրված խնդիրները։

Նախ նշվեց, որ արտադասարանական խմբակները դպրոցական կրթության անբաժանելի մասն են, որոնք նպաստում են աշակերտների հետաքրքրությունների զարգացմանը, ստեղծագործական ունակությունների խթանմանը և ազատ ժամանակի արդյունավետ կազմակերպմանը։

Միաժամանակ Գևորգյանն ընդգծեց, որ տարվա ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ որոշ խմբավարներ չեն իրականացրել խմբակային աշխատանքը սահմանված օրերին, ինչը բացասաբար է ազդել ոչ միայն խմբակների ակտիվության, այլև աշակերտների ներգրավվածության վրա, սակայն խմբավարներն իրականացրել են այդ աշխատանքները շաբաթվա այլ օրերին, ինչի շնորհիվ որևէ խմբակի դասաժամ բաց չի մնացել։

Նա անդրադարձավ նաև խմբակների մատենավարությանը՝ նշելով, որ թե՛ ընթացիկ փուլում, թե՛ ամփոփման ժամանակ հայտնաբերվել են որոշ թերություններ, մասնավորապես՝ անփույթ լրացված կամ ոչ ամբողջական մատյաններ, ինչը խոչընդոտում է գործունեության լիարժեք հաշվառման և վերլուծության գործընթացին։

Զեկուցման ավարտին խմբավարներն առանձին-առանձին ներկայացրին իրենց կողմից 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքները՝ հաշվետվությունների տեսքով։ Ներկայացված հաշվետվությունները հնարավորություն տվեցին առավել մանրամասն պատկերացում կազմել խմբակային գործունեության ընթացքի, բովանդակության, հաջողությունների, ինչպես նաև առկա բացթողումների մասին։

*Արտահայտվեցին՝* Ա. Աբգարյանը

Աննա Աբգարյանը կարևորեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների գործունեության ընդհանուր արդյունքները՝ ընդգծելով, որ դրանք էական դեր ունեն ոչ միայն աշակերտների անձնական զարգացման, այլև դպրոցի կրթական որակի բարձրացման գործընթացում։

Նա շեշտեց, որ արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է յուրաքանչյուր տարի վերլուծել խմբակների գործունեությունը, մանրամասն բացահայտել առաջացած խնդիրները և հաջորդ ուսումնական տարիների ընթացքում կազմակերպել աշխատանքը այնպես, որ այդ խնդիրներն այլևս չկրկնվեն։

Աննա Աբգարյանը ներկայացրեց նաև Արմիդա Գևորգյանի կողմից ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում իրականացված դիտարկումների արդյունքները։ Դիտարկումները կատարվել են խմբակների հանդիպումների և դասերի ընթացքում, ինչը հնարավորություն է տվել իրական ժամանակում գնահատել կազմակերպման որակը, աշակերտների ներգրավվածության մակարդակը և խմբակային աշխատանքի արդյունավետությունը։

Նա ընդգծեց, որ ընդհանուր առմամբ արձանագրված արդյունքները գոհացուցիչ են, և մասնակիցների ակտիվությունը խոսում է այն մասին, որ խմբակային գործունեությունն իրապես հետաքրքիր և կարևորված է աշակերտների կողմից: Միևնույն ժամանակ, Աննա Աբգարյանը նշեց, որ որոշ խմբակներում հատկապես նկատվել է աշակերտների ավելի բարձր մասնակցություն և հետաքրքրվածություն, ինչը կարևոր է պահպանել և տարածել նաև մյուս խմբակների փորձի ուսումնասիրության միջոցով:

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված արտադասարանական խմբակների կատարողականների մասին զեկուցումը:

***Լսեցին 6.*** 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված աշխատանքների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ ՄՄ անդամներ)

Մեթոդմիավորման նախագահը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփ նկարագիրը: Մասնավորապես՝ ներկայացվեցին ուսումնական տարվա սկզբում հաստատված ժամանակացույցի համաձայն իրականացված և չիրականացված աշխատանքները, արձանագրված հաջողություններն ու բացթողումները: Նշվեց, որ տարվա ընթացքում կազմակերպվել են տարբեր մասնագիտական հանդիպումներ, քննարկումներ և փորձի փոխանակման միջոցառումներ, որոնք նպաստել են ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը և աշխատանքային արդյունավետության բարձրացմանը:

Միաժամանակ արձանագրվել են որոշ թերություններ և չիրականացված աշխատանքներ, որոնց պատճառները վերլուծվել են, և արդեն առաջարկվել են համապատասխան լուծումներ:

Մեթոդմիավորման անդամները, իրենց հերթին, ներկայացրին հաշվետվություններ, որոնցում ամփոփված էին ուսումնական տարվա ընթացքում իրենց կողմից իրականացված աշխատանքները, ձեռքբերումները, ինչպես նաև առկա խնդիրներն ու դրանց լուծման առաջարկությունները:

Քննարկումների ընթացքում մանրամասն ներկայացվեցին նաև ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ կատարված աշխատանքները: Այս հատվածում ընդգծվեց, որ տարվել է նպատակային և անհատական մոտեցման վրա հիմնված աշխատանք, որը միտված է եղել աշակերտների կարիքների բացահայտմանը, աջակցման տրամադրմանը և նրանց կրթական առաջադիմության խթանմանը:

***Արտահայտվեցին՝*** Թ. Հովհաննիսյանը, Ս. Միրզոյանը

Նիստի ընթացքում արտահայտվողները կարևորեցին մեթոդմիավորման նիստում իրականացված ծավալուն քննարկումները և ներկայացված հաշվետվությունների վերլուծությունը: Ըստ նրանց՝ նման ձևաչափով կազմակերպված քննարկումները ոչ միայն հնարավորություն են տալիս գնահատելու կատարված աշխատանքը, այլև վերհանելու թերությունները և մշակելու համապատասխան լուծումներ:

Հատուկ ուշադրություն դարձվեց ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող աշխատանքների վերլուծությանը: Նշվեց, որ այս ուղղությամբ իրականացվող աշխատանքը պահանջում է հետևողականություն, համակարգված մոտեցում և ուսուցչի ու ուսուցչի օգնականի միջև արդյունավետ համագործակցություն:

Քննարկումների ընթացքում շեշտվեցին նաև այն հիմնական խնդիրները, որոնք առաջացել են տարվա ընթացքում ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ տարվող աշխատանքում: Մասնավորապես՝ նշվեց, որ որոշ դեպքերում արձանագրվել են անհատական մոտեցման պակաս, մասնագիտական աջակցման որոշ բացեր, ինչպես նաև կազմակերպչական դժվարություններ, որոնք խոչընդոտել են ԿԱՊԿՈՒ աշակերտների լիարժեք ներգրավվածությունը ուսումնական գործընթացին:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում մեթոդմիավորման անդամների կողմից իրականացված աշխատանքների հաշվետվությունների մասին զեկուցումը:

*Լսեցին՝7.* 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների ամփոփման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցողը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում դպրոցում իրականացված դասալսումների ընդհանուր պատկերը, արձանագրված արդյունքները և դրանց հիման վրա կազմակերպված աշխատանքները:

Նշվեց, որ ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումները հնարավորություն են տվել գնահատելու դասապրոցեսի կազմակերպման որակը, ուսուցչական գործունեության արդյունավետությունը և առկա խնդիրները: Դասալսումների արդյունքում պատրաստված և քննարկված արձանագրությունները կարևոր դեր են ունեցել դասապրոցեսի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքների մեջ:

Զեկուցողը շեշտեց, որ անգամ ամենալավ պլանավորված և նախապատրաստված դասերի ընթացքում ևս կարող են ի հայտ գալ խնդիրներ, որոնք պահանջում են օպերատիվ լուծումներ, ճկուն մոտեցումներ և ստեղծագործական մտածողություն: Դասալսումների նպատակն է ոչ թե միայն բացահայտել թերություններ, այլև աջակցել ուսուցիչներին՝ գտնելու լուծումներ և զարգացնելու դասավանդման գործընթացը:

Մանրամասն անդրադարձ եղավ նաև հաջողված և արդյունավետ դասերին, որոնք իրենց կառուցվածքով, մեթոդաբանությամբ և աշակերտների ներգրավվածությամբ առանձնացել են բարձր արդյունքներով:

Զեկուցողը կարևորեց դասալսումներին տնօրեն Սերգեյ Ավանեսյանի, տնօրենի տեղակալ Արաքսյա Առստամյանի, ԿԱԴԱՀ Արմիդա Գևորգյանի, մեթոդմիավորման անդամների և մյուս մեթոդմիավորումների ներկայացուցիչների ակտիվ մասնակցությունը: Նրանց ներգրավվածությունն ու դիտարկումների արդյունքում ծավալված մասնագիտական քննարկումները նպաստել են ոչ միայն խնդիրների արձանագրմանը, այլև դրանց լուծման ճանապարհների մշակմանը:

*Արտահայտվեցին՝* Ա. Հովսեփյանը

Նիստի ընթացքում իր խոսքն արտահայտեց նաև Արտուր Հովսեփյանը: Նա կարևորեց դասալսումների և դրանց ուղեկցող կազմակերպված քննարկումների նշանակությունը՝ ընդգծելով, որ դրանք էականորեն նպաստում են դասի արդյունավետության բարձրացմանը, ուսումնական գործընթացում արձանագրված թերությունների շտկմանը, ինչպես նաև ուսուցիչների միջև փորձի փոխանակմանը:

Արտուր Հովսեփյանը հատուկ շեշտեց, որ դասալսումների ընթացքում արվող դիտողությունները և նկատողությունները պետք է դիտարկվեն որպես կառուցողական մոտեցման մաս, որոնք նպատակ ունեն աջակցելու ուսուցիչներին՝ դասապրոցեսի որակը բարձրացնելու և ավելի բարձր արդյունքներ արձանագրելու համար:

Նրա խոսքով՝ նման ձևաչափով համագործակցությունը նպաստում է ոչ միայն առկա թերությունների շտկմանը, այլև առողջ մասնագիտական մթնոլորտի ձևավորմանը, որտեղ յուրաքանչյուր ուսուցիչ կարող է բաց, անկաշկանդ կերպով կիսվել փորձով, քննարկել խնդիրներն ու ստանալ անհրաժեշտ աջակցություն:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների ամփոփման մասին զեկուցումը (կցվում է ամփոփագիրը):

*Լսեցին՝ 8.* 2026-2027 ուսումնական տարվա ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխման և տնօրենին առաջարկություն ներկայացնելու մասին հարցը:

(զեկուցողներ՝ Ա. Աբգարյան)

Զեկուցող Աննա Աբգարյանը ներկայացրեց 2026-2027 ուսումնական տարվա դասաժամերի նախնական բաշխման նախագիծը՝ հիմնված հաստատության ուսումնական պլանի, դասարանների թվի, առարկայական ծանրաբեռնվածության, մանկավարժների մասնագիտական պատրաստվածության և գործող նորմատիվ պահանջների վրա, ինչպես նաև հիմք ընդունելով դպրոցի կանոնադրության 87-րդ կետի 10-րդ ենթակետը, նաև կանոնադրության օրինակելի ձևի փոփոխության 93-րդ կետի 5-րդ ենթակետը: Նա նշեց, որ նոր պահանջների կիրառումը ենթադրում է մի շարք փոփոխություններ ուսումնական գործընթացի կազմակերպման մեջ, որոնք ուղղված են կրթության որակի բարձրացմանը, սովորողների կարողությունների զարգացմանը և ժամանակակից կրթական մոտեցումների արդյունավետ կիրառմանը: Զեկուցման ընթացքում ներկայացվեցին նաև ուսումնական պլաններում նախատեսվող փոփոխությունները, որոնք կարող են անդրադառնալ առարկաների դասաժամերի բաշխմանը, կրթական ծրագրերի բովանդակությանը և դասավանդման կազմակերպման առանձնահատկություններին: Ընդգծվեց, որ վերջնական որոշումները կկայացվեն համապատասխան կարգավորումների հրապարակումից հետո: Աննա Աբգարյանը տեղեկացրեց, որ դպրոցում նախնական հաշվարկներ արդեն իրականացվել են, և կազմվել է ժամաբաժանման նախագծային տարբերակը: Նա նշեց, որ առաջիկա ամիսներին, նոր հրահանգների և ուղեցույցների հրապարակումից հետո, կիրականացվեն անհրաժեշտ ճշգրտումներ, որոնց հիման վրա կձևավորվի հաջորդ ուսումնական տարվա վերջնական ժամաբաշխումը:

*Արտահայտվեցին՝* Ռ. Արզումանյանը, Ս. Միրզոյանը

Ռոբերտ Արզումանյանը ողջունեց 2026-2027 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը և կարևորեց նոր չափորոշիչների պահանջներին համապատասխան կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպումը: Նա ընդգծեց, որ ժամաբաշխման մշակման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առարկայական բեռնվածության հավասարակշռությունը և ապահովել ուսումնական գործընթացի սահուն իրականացումը:

Սոնա Միրզոյանը նշեց, որ ներկայացված նախնական ժամաբաժանման նախագիծը լավ հիմք է հետագա աշխատանքների համար: Նա կարևորեց առաջիկայում հրապարակվելիք կարգավորումներն ու ուղեցույցները հաշվի առնելով՝ վերջնական ժամաբաշխման ճշգրտումն ու հաստատումը, ինչպես նաև ուսուցիչների ծանրաբեռնվածության արդարացի բաշխումը:

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն 2026-2027 ուսումնական տարվա դասաժամերի նախնական բաշխումը (կցվում է):

*Լսեցին՝ 9.* 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) շրջանակում իրականացված աշխատանքների ամփոփումը:

(զեկուցող՝ Ա. Գևորգյան)

Զեկուցման ընթացքում, Արմիդա Գևորգյանը ներկայացրեց 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) կատարման վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը: Նա նշեց, որ ուսումնական տարվա ընթացքում աշխատանքներն իրականացվել են հաստատված տարեկան պլանին համապատասխան՝ ապահովելով կրթական և դաստիարակչական գործընթացների բնականոն կազմակերպումը:

Զեկուցողն անդրադարձավ տարվա ընթացքում կազմակերպված առարկայական, մշակութային, ճանաչողական, հայրենասիրական, բնապահպանական և առողջ ապրելակերպին ուղղված միջոցառումներին, ինչպես նաև սովորողների մասնակցությանը տարբեր մրցույթների, նախագծային աշխատանքների, բաց դասերի, քննարկումների և արտադասարանական նախաձեռնությունների։ Նշվեց, որ իրականացված աշխատանքները նպաստել են սովորողների գիտելիքների հարստացմանը, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, համագործակցային հմտությունների ձևավորմանը և ազգային ու համամարդկային արժեքների ամրապնդմանը։

Արմիդա Գևորգյանը ներկայացրեց նաև տարվա ընթացքում արձանագրված ձեռքբերումները, սովորողների ակտիվ մասնակցությունն ու հաջողությունները տարբեր միջոցառումներում և ընդգծեց մանկավարժական կոլեկտիվի հետևողական աշխատանքի կարևորությունը։ Նա նշեց, որ պլանավորված աշխատանքների գերակշիռ մասն իրականացվել է լիարժեք և արդյունավետ, իսկ առաջացած որոշ դժվարություններ չեն խոչընդոտել նախատեսված նպատակների իրագործմանը։ Զեկուցողը կարևորեց ձեռք բերված դրական փորձի շարունակականությունը և առաջարկեց այն հաշվի առնել հաջորդ ուսումնական տարվա աշխատանքների պլանավորման ընթացքում։

***Արտահայտվեցին՝*** ՄՄ անդամները

ՄՄ անդամները քննարկեցին 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի (ՈՒԴԱՏՊ) կատարման արդյունքները։ Նշվեց, որ ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են նախատեսված ուսումնադաստիարակչական, կրթական, մշակութային և ճանաչողական բնույթի միջոցառումներ, որոնք նպաստել են սովորողների բազմակողմանի զարգացմանը, ստեղծագործական կարողությունների բացահայտմանը, արժեհամակարգի ձևավորմանը և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը։

Անդամներն ընդգծեցին, որ իրականացված աշխատանքներն ընդհանուր առմամբ համապատասխանել են տարեկան պլանի պահանջներին և նպաստել են կրթության որակի բարձրացմանը։ Կարևորվեց մանկավարժական աշխատողների հետևողական աշխատանքը, սովորողների ակտիվ մասնակցությունը տարբեր միջոցառումներին, ինչպես նաև ծնողների և դպրոցի համագործակցությունը։ Նշվեց, որ տարվա ընթացքում կազմակերպված միջոցառումներն ու նախաձեռնությունները նպաստել են սովորողների հայրենասիրական, գեղագիտական, բարոյական և քաղաքացիական դաստիարակությանը։

Քննարկման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև առկա դժվարություններին և առաջացած խնդիրներին։ Առաջարկվեց հաջորդ ուսումնական տարում առավել ակտիվացնել սովորողների ներգրավվածությունը տարբեր նախագծերում, մրցույթներում և արտադասարանական միջոցառումներում, ինչպես նաև շարունակել նորարարական մեթոդների կիրառումը կրթական գործընթացում։

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ՈՒԴԱՏՊ աշխատանքների հաշվետվությունները, կատարված աշխատանքների արդյունքները (կցվում է էլեկտրոնային տարբերակով)։

***Լսեցին՝ 10.*** 2025-2026 ուսումնական տարվանից սկսած «Առողջ ապրելակերպ» և «Անվտանգ կենսագործունեություն» առարկաների ուսումնասիրման մասին։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցող Սերգեյ Ավանեսյանը ներկայացրեց, որ 2026 թվականի հանրակրթական պետական չափորոշչում կատարված փոփոխությունների արդյունքում իրականացվել են մի շարք կառուցվածքային և բովանդակային

վերանայումներ առարկայական համակարգում: Մասնավորապես՝ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան փոխարինվել է «Անվտանգ կենսագործունեություն» առարկայով, իսկ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակը ներառվել է պարտադիր դասավանդվող առարկաների ցանկում:

Նշվեց, որ կատարված փոփոխությունները պայմանավորված են կրթական համակարգի արդիականացման անհրաժեշտությամբ և միտված են սովորողների շրջանում կյանքի անվտանգության, առողջության պահպանման, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու կարողությունների զարգացմանը: «Անվտանգ կենսագործունեություն» առարկան նպատակ ունի ապահովել առավել լայն և գործնական մոտեցում՝ ներառելով անվտանգության կանոնների իմացություն, առաջին օգնության հիմունքներ, քաղաքացիական պաշտպանության տարրեր և պատասխանատու վարքագծի ձևավորում:

Ջեկուցման ընթացքում ընդգծվեց, որ «Առողջ ապրելակերպ» առարկայի պարտադիր ներառումը կրթական ծրագրում կարևոր քայլ է սովորողների առողջական մշակույթի ձևավորման, առողջ սննդակարգի, վնասակար սովորությունների կանխարգելման և ֆիզիկական ակտիվության խթանման ուղղությամբ: Այս փոփոխությունները միասին դիտարկվում են որպես համալիր մոտեցում՝ ուղղված սովորողների կյանքի որակի բարձրացմանը և անձնային զարգացմանը:

Փոփոխությունների համաձայն՝ «Անվտանգ կենսագործունեություն» և «Առողջ ապրելակերպ» առարկաները ուսումնական հաստատություններում կներդրվեն փուլային եղանակով՝ 5-11-րդ դասարաններում: Նշված առարկաների ներդրումը նախատեսվում է սկսել 2026 թվականի սեպտեմբերից՝ առաջին փուլում ընդգրկելով 5-րդ և 10-րդ դասարանները: Հետագա փուլերում աստիճանաբար կներառվեն մյուս դասարանները՝ մինչև ամբողջական ներդրման ավարտը:

Նշվեց նաև, որ անցումային փուլում դպրոցներում կշարունակվի «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումը մնացած դասարաններում, մինչև նոր առարկայի ամբողջական ներդրումը: Միաժամանակ «Առողջ ապրելակերպ» ուղղվածությամբ խմբակը 6-9-րդ դասարաններում կշարունակի գործել որպես պարտադիր խմբակ՝ ապահովելով շարունակական աշխատանք սովորողների առողջ կենսակերպի ձևավորման ուղղությամբ

*Արտահայտվեցին՝* Ա. Աբգարյանը

Աննա Աբգարյանը կարևորեց ներկայացված փոփոխությունները և ընդգծեցին դրանց նշանակությունը կրթական գործընթացի արդիականացման, սովորողների անվտանգության մշակույթի ձևավորման և գործնական կարողությունների զարգացման տեսանկյունից: Քննարկման ընթացքում նշվեց, որ անհրաժեշտ է ապահովել ուսուցիչների մեթոդական պատրաստվածությունը, համապատասխան ուսումնական նյութերով ապահովումը և փուլային անցման արդյունավետ կազմակերպումը:

Միաժամանակ շեշտվեց, որ նոր առարկաների ներդրումը պահանջում է համակարգված մոտեցում՝ ներառյալ դասավանդման մեթոդների հստակեցում, գնահատման չափանիշների մշակում և ծնողական համայնքի իրազեկում՝ գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով:

*Որոշեցին՝*

- Ընդունել ի գիտություն «Առողջ ապրելակերպ» և «Անվտանգ կենսագործունեություն» առարկաների ներդրման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը:
- Ապահովել պատրաստակամություն փուլային ներդրման գործընթացին, հետևել պաշտոնական ուղեցույցների և կարգավորումների հրապարակմանը, ինչպես նաև կազմակերպել անհրաժեշտ

նախապատրաստական աշխատանքներ՝ ուսումնական գործընթացի սահուն անցումն ապահովելու նպատակով։

*Լսեցին՝ 11.* 2026–2027 ուսումնական տարվա գնահատման նոր համակարգի պահանջների և յուրաքանչյուր առարկայից սովորողի առաջադիմության բնութագրի ապահովման հարցի քննարկում։

(զեկուցող՝ Ա. Աբգարյան)

Զեկուցող՝ Աննա Աբգարյանը նշեց, որ համաձայն հանրակրթական պետական չափորոշչի՝ 2026–2027 ուսումնական տարվանից սկսած 1–4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում բոլոր առարկաներից, ինչպես նաև «Ֆիզկուլտուրա», «Անվտանգ կենսագործունեություն», «Առողջ ապրելակերպ», «Երաժշտություն», «Կերպարվեստ» և «Արվեստ» առարկաներից 5–12-րդ դասարաններում միավորային գնահատում չի իրականացվելու։ Գնահատման գործընթացը կիրականացվի բնութագրական համակարգով։ Յուրաքանչյուր առարկայից կկազմվի սովորողի առաջադիմության բնութագիր, որտեղ կարտացոլվեն նրա ուսումնական ձեռքբերումները, գիտելիքների և կարողությունների զարգացման մակարդակը, դասապրոցեսին մասնակցությունը, պատասխանատվությունը և ընդհանուր առաջընթացը։

*Արտահայտվեցին՝* Ա. Հովսեփյանը, Թ. Հովհաննիսյանը

Արտուր Հովսեփյանը նշեց, որ գնահատման բնութագրական ձևաչափի ներդրումը հնարավորություն է տալիս առավել ամբողջական և բազմակողմանի գնահատել սովորողի կրթական առաջընթացը՝ շեշտադրելով ոչ միայն գիտելիքները, այլ նաև կարողությունների զարգացումը և ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացին։ Ընդգծվեց, որ այս մոտեցումը նպաստում է ուսուցման որակի բարձրացմանը, խթանում է անհատական մոտեցման կիրառումը և ապահովում է ավելի արդար և զարգացնող գնահատման համակարգ։

Թամարա Հովհաննիսյանը կարևորվեց նաև յուրաքանչյուր սովորողի առաջադիմության բնութագրի ժամանակին, ճշգրիտ և օբյեկտիվ կազմումը՝ ըստ հաստատված չափորոշչային պահանջների։

*Որոշեցին՝* Ընդունել ի գիտություն գնահատման նոր համակարգի պահանջները և ապահովել յուրաքանչյուր առարկայից սովորողի առաջադիմության բնութագրի կազմման գործընթացի պատշաճ իրականացումը՝ սահմանված ժամկետներում և գործող չափորոշչին համապատասխան։

*Լսեցին՝ 12.* 2026-2027 ուսումնական տարվանից մեթոդմիավորման բաժանման մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ նոր կարգավորումների համաձայն դպրոցում կարող են լինել հաստատված բնագավառներին համապատասխան մեթոդական միավորումներ, որոնցում ընդգրկվում են տվյալ բնագավառի մեջ մտնող առարկաները։ Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման կազմում ընդգրկված են «Ֆիզկուլտուրա», «ՆԶՊ», «Կերպարվեստ», «Երաժշտություն», «Արվեստ» առարկաները։ Նշվածներից «Կերպարվեստ», «Երաժշտություն», «Արվեստ» առարկաները մտնում են Արվեստ և արհեստ բնագավառի մեջ, իսկ «Ֆիզկուլտուրա», «ՆԶՊ» առարկաները՝ Ֆիզիկական կրթություն և առողջ, անվտանգ կենսագործունեություն բնագավառի մեջ։ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրության 84-րդ կետով սահմանվում է, որ Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն բնագավառի առարկաների կամ հարակից առարկաների առնվազն երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում (այն դեպքերում, երբ հաստատությունում տվյալ բնագավառում դասավանդող ուսուցիչների

թիվը երեքից պակաս է, այդ ուսուցիչները միավորվում են հարակից առարկաների մեթոդական միավորումներում կամ ընդգրկվում են դպրոցի այլ առարկայական մեթոդական միավորումներում՝ տնօրենի ընտրությամբ)։

Հիմք ընդունելով վերոնշյալ կարգավորումը, զեկուցողն առաջարկեց դպրոցում ստեղծել Արվեստի և արհեստի մեթոդական միավորում, որի մեջ ընդգրկել տվյալ բնագավառի առարկաները՝ «Կերպարվեստ», «Երաժշտություն», «Արվեստ» դասավանդող ուսուցիչներին։

***Արտահայտվեցին՝*** ՄՄ անդամները

Մեթոդական միավորման անդամները քննարկեցին ներկայացված առաջարկությունը և նշեցին, որ այն բխում է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրության պահանջներից և համապատասխանում է գործող նորմատիվ կարգավորումներին։

Անդամները կարևորեցին առարկաների՝ ըստ բնագավառների մեթոդական միավորումներում ընդգրկման սկզբունքը՝ նշելով, որ այն կնպաստի նույն բնագավառի ուսուցիչների միջև մասնագիտական համագործակցության ակտիվացմանը, փորձի փոխանակմանը, միասնական մեթոդական մոտեցումների ձևավորմանը և ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը։

Քննարկման ընթացքում ընդգծվեց, որ «Կերպարվեստ», «Երաժշտություն» և «Արվեստ» առարկաները պատկանում են «Արվեստ և արհեստ» բնագավառին, ուստի նպատակահարմար է դրանք միավորել առանձին մեթոդական միավորման կազմում՝ ապահովելով տվյալ բնագավառի ուսուցիչների համակարգված և նպատակային գործունեությունը։

Ելույթ ունեցողները միաձայն աջակցեցին զեկուցողի առաջարկությանը և գտան, որ դպրոցում «Արվեստի և արհեստի» մեթոդական միավորման ստեղծումը կնպաստի մեթոդական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը և կրթական գործընթացի որակի շարունակական բարելավմանը։

***Որոշեցին՝***

- Հավանություն տալ Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման բաժանման առաջարկին։
- Ստեղծել նոր մեթոդական միավորում «Արվեստ և արհեստ» անվամբ, որի մեջ ընդգրկել «Կերպարվեստ», «Երաժշտություն» և «Արվեստ» առարկաները։
- Ֆիզիկական կրթություն և առողջ, անվտանգ կենսագործունեություն բնագավառի առարկաները՝ «Ֆիզկուլտուրա», «ՆԶՊ», «Անվտանգ կենսագործունեություն», «Առողջ ապրելակերպ» թողնել Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման կազմում։

***Լսեցին՝ 13.*** 2026-2027 ուսումնական տարվանից սկսած մեթոդական միավորման անվանափոխության մասին հարցը։

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ հանրակրթության ոլորտում իրականացվող փոփոխություններով անհրաժեշտություն է առաջացել փոփոխության ենթարկել մեթոդական միավորման անվանումը, ինչպես նաև շեշտեց, որ անվանման փոփոխությունը կապված է նաև սույն նիստի 12-րդ որոշման հետ։

Մասնավորապես, նախկին «Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորում» անվանումն առաջարկեց դարձնել «Ֆիզիկական կրթության և առողջ, անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորում», որի մեջ կընդգրկվեն «Ֆիզկուլտուրա», «ՆԶՊ», «Անվտանգ կենսագործունեություն» և «Առողջ ապրելակերպ» առարկաները, ինչպես նաև 6-9-րդ դասարաններում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակը՝ մինչև «Առողջ ապրելակերպ» առարկայի

պարտադիր ներդրումը կրթական բոլոր աստիճաններում: Զեկուցողը նշեց, որ անվանափոխությունը նպատակ ունի արտացոլել մեթոդմիավորման գործունեության շրջանակում ընդգրկված բոլոր առարկաները և ապահովել դրանց համակարգված ու արդյունավետ աշխատանքը:

*Արտահայտվեցին՝* Թ. Հովհաննիսյանը, Ա. Աբգարյանը

Թամարա Հովհաննիսյանը նշեց, որ մեթոդմիավորման անվանափոխությունը պայմանավորված է կրթության բովանդակային փոփոխություններով և լիովին համապատասխանում է գործող չափորոշիչների պահանջներին: Նա կարևորեց, որ մեթոդմիավորման անվանումը հստակ արտացոլի դրա կազմում ընդգրկված բոլոր առարկաները՝ նպաստելով աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպմանը:

Աննա Աբգարյանը կարևորեց կատարված փոփոխությունը՝ նշելով, որ նոր անվանումն առավել ամբողջական և բովանդակային է ներկայացնում մեթոդմիավորման գործունեության շրջանակը: Նա համոզմունք հայտնեց, որ անվանափոխությունը կնպաստի մեթոդմիավորման աշխատանքների համակարգված կազմակերպմանը, առարկայական ծրագրերի արդյունավետ իրականացմանը և ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը:

*Որոշեցին՝* 2026–2027 ուսումնական տարվանից ձևավորել «Ֆիզիկական կրթության և առողջ, անվտանգ կենսագործունեության մեթոդմիավորում», որի մեջ ընդգրել «Ֆիզկուլտուրա», «ՆՁՊ», «Անվտանգ կենսագործունեություն» և «Առողջ ապրելակերպ» առարկաները, ինչպես նաև 6-9-րդ դասարաններում՝ «Առողջ ապրելակերպ» պարտադիր խմբակը:

*Լսեցին՝ 14.* 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների ամփոփում:

(զեկուցող՝ Ա. Ծատրյան)

Ներառական կրթության բաժնի համակարգող, ուսուցչի օգնական Արփինե Ծատրյանը զեկուցեց, որ 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում ԿԱՊԿՈՒ սովորողների հետ իրականացվող աշխատանքները կազմակերպվել են հաստատված անհատական ուսուցման պլաններին (ԱՈՒՊ) և սահմանված ժամանակացույցին համապատասխան, իսկ ուսումնական տարվա ավարտին կատարվել է իրականացված աշխատանքների ամփոփում:

Զեկուցողը նշեց, որ յուրաքանչյուր սովորողի անհատական առաջընթացը տարվա ընթացքում պարբերաբար գնահատվել և մշտադիտարկվել է: ԱՈՒՊ-երով սահմանված նպատակների գերակշիռ մասը հաջողությամբ իրականացվել և հաղթահարվել է: Այն նպատակները, որոնք ամբողջությամբ չեն հաղթահարվել, քննարկվել են մշտադիտարկման հանդիպումների ընթացքում, վերանայվել՝ հաշվի առնելով սովորողների անհատական կրթական կարիքներն ու արձանագրված առաջընթացը: Արդյունքում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ ԱՈՒՊ-երում, որոնք սահմանված կարգով փաստաթղթավորվել են:

Արփինե Ծատրյանը տեղեկացրեց նաև, որ 4-րդ և 9-րդ դասարաններում սովորող բոլոր ԿԱՊԿՈՒ աշակերտները, ծնողների կողմից ներկայացված դիմումների հիման վրա և գործող իրավական կարգավորումներին համապատասխան, ազատվել են ավարտական քննություններին մասնակցելուց:

Ամփոփելով՝ զեկուցողը կարևորեց ԿԱՊԿՈՒ սովորողների կրթական գործընթացի շարունակական մշտադիտարկումը, ուսուցիչների, ուսուցչի օգնականների և բազմամասնագիտական թիմի արդյունավետ համագործակցությունը, ինչպես նաև յուրաքանչյուր սովորողի անհատական կրթական կարիքներին համապատասխան ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպումը՝ որպես ներառական կրթության արդյունավետ իրականացման կարևոր նախապայման:

*Արտահայտվեցին՝* ՄՄ անդամները

Արտահայտվողները կարևորեցին ներառական կրթության գործընթացում ուսուցիչների, ուսուցչի օգնականների և բազմամասնագիտական թիմի միջև արդյունավետ ու շարունակական համագործակցության ապահովումը՝ որպես յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ սովորողի կրթական կարիքների լիարժեք բավարարման կարևոր նախապայման։

Նշվեց, որ անհատական ուսուցման պլանների (ԱՈՒՊ) իրականացումը պետք է կազմակերպվի նպատակային, համակարգված և հետևողական՝ հիմնվելով սովորողների անհատական կրթական կարիքների, կարողությունների և արձանագրված առաջընթացի վրա։ Կարևորվեց ԱՈՒՊ-երի պարբերական մշտադիտարկումը, անհրաժեշտության դեպքում դրանց վերանայումը և սահմանված նպատակների իրագործման արդյունավետ գնահատումը։

Ելույթ ունեցողներն ընդգծեցին, որ ԱՈՒՊ-երի իրականացումը չպետք է կրի ձևական բնույթ, այլ պետք է ուղղված լինի յուրաքանչյուր սովորողի կրթական առաջընթացի ապահովմանը, ինքնուրույնության զարգացմանը, կրթական գործընթացում լիարժեք մասնակցության խթանմանը և անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցության արդյունավետ կազմակերպմանը։

***Որոշեցին՝*** Ընդունել ի գիտություն 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ԱՈՒՊ-ներով և դիտարկման թերթիկներով իրականացված աշխատանքների մասին տեղեկատվությունը։

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Աբգարյան

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

## Առարկայական մեթոդական միավորման արձանագրությունների ամփոփման

2025-2026 ուսումնական տարվա ընթացքում ***Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորումը*** գումարել է ***12 նիստ***, որոնց համար կազմվել է *12 արձանագրություն:*

***Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման*** նիստերի տվյալները՝ ստորև.

| № | ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ | ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ | ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ |
|---|---|---|---|
| 1 | 1 | 20.08.2025 | 12 |
| 2 | 2 | 25.09.2025 | 6 |
| 3 | 3 | 21.10.2025 | 6 |
| 4 | 4 | 25.11.2025 | 6 |
| 5 | 5 | 22.12.2025 | 13 |
| 6 | 6 | 29.01.2026 | 9 |
| 7 | 7 | 24.02.2026 | 5 |
| 8 | 8 | 24.03.2026 | 7 |
| 9 | 9 | 28.04.2026 | 10 |
| 10 | 10 | 05.05.2026 | 2 (արտահերթ) |
| 11 | 11 | 29.05.2026 | 7 |
| 12 | 12 | 26.06.2026 | 14 |

*Արվեստի, ֆիզիկական կրթության և անվտանգ կենսագործունեության առարկաների մեթոդմիավորման* սույն արձանագրությունների մատյանը կազմված է *89* էջից:

Մ/Մ նախագահ՝ _____ Ա. Աբգարյան

«26» հունիսի 2026թ.